AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 1


# Ազգ
Azg

17 ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ՈՒՐԲԱԹ 43(5491)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Ամենաթանկարժեք կտավը Լեոնարդոյի՞ վրձնին է պատկանում

Christie's աճուրդի տունը նոյեմբերի 15-ին Նյու Յորքում կայացած աճուրդի ժամանակ 450,3 միլիոն դոլարով վաճառեց Լեոնարդո դա Վինչիի «Սալվադոր Մունդի» կտավը, այն դարձնելով աշխարհում ամենաթանկարժեք արվեստի գործը: 20 րոպե տեւած աճուրդում անհայտ գնորդը տեր դարձավ Հիսուս Քրիստոսին պատկերող հիշյալ կտավին՝ առավել շիկացնելով մասնագետների, լրագրողների՝ երեկվանից ծայր առած բանավեճը: Գերմանական ԶԼՄ-ները նախ կասկածում են, թե կտավը մեծ իտալացու վրձնի արգասիքն է, մինչ վերականգնումը այն բավականաչափ քայքայված է եղել, ինչը պատճառ է դարձել նաեւ, որ Բեռլինի պատկերասրահը դրա հանդեպ հետաքրքրություն չունենա: Ո՞ւմ է ձեռնտու, որ արվեստի գործն այսպիսի գնով վաճառվի, հարցնում են մեր գործընկերներն ու պատասխանում՝ ինքնահավան օլիգարխներին ու նրանց, որոնց դրամապանակը լցվում է, բայց ոչ Վերածննդի մեծ վարպետին ու առավել եւս նրա արվեստի ուղերձով առաջնորդվող արվեստասերներին:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հանգանակելու արվեստը

Մի քանի օրից, առաջիկա հինգշաբթի, ամերիկյան Գոհաբանության տոնին, ավանդության համաձայն Լոս Անջելեսում տեղի կունենա «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուսամարաթոնը: Հայաստանի անկախության սկզբում, 1993 թ.ին հիմնված այդ հիմնադրամը կարեւոր ու գլխավոր նախաձեռնություններից մեկը եղավ մեր Երրորդ հանրապետության, նպատակ ունենալով համախմբել մեր ողջ ժողովրդին Մայր հայրենիքի վերաշինության, զարգացման եւ հզորացման գաղափարի շուրջ՝ նյութապես:

Առաջին տարիներին այն ոչ պատահականորեն դիտարկվում էր որպես գերազանցապես Սփյուռքի մասնակցության ապահովում: Հետագա տարիներին այդ գործում ընդգրկվեցին նաեւ Հայաստանի քաղաքացիները՝ գլխավորությամբ որոշ մեծահարուստների, ինչը հանդիսացավ սրբագրումը սկզբնական շրջանի միակողմանիության: Ավելի ուշ հանգանակությանը միացան նաեւ պետական մի շարք հիմնարկներ՝ պարտադրաբար:

Առաջին այդ տարիներին հիմնադրամի լոզունգներից մեկը դարձավ ազգային տուրքի գաղափարի արմատավորումն ու գործնականացումը, որը, ավաղ, այդպես էլ չդարձավ համակարգված, կայուն, արդյունավոր իրականություն: Եվ ամբողջ հույսը մնաց հիմնադրամի սփյուռքում գործող տեղական կառույցների սքանչելի աշխատանքը եւ, հատկապես, հեռուսամարաթոնը՝ իր հանդիսավոր, ցուցադրական, երբեմն արտառոց, երբեմն էլ սնապարծ հայտարարություններով:

Սակայն նմանօրինակ բոլոր նախաձեռնությունների համար գլխավոր ու թերեւս միակ չափորոշիչը արդյունքն է, որը պահանջում է չոր հաշվապահություն: Իսկ այս պարագայում հաշվապահական հաշվեկշիռը իսկապես խեղճ է, եթե ոչ՝ ամոթալի՝ մեր ժողովրդի համար: Անցնող 24 տարիների ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամը հավաքել է ընդամենը 232 միլիոն դոլար, որը հասկացվել է, անշուշտ սպասարկման, հեռուսամարաթոնի կազմակերպման եւ այլ ծախսերը հանած, հիմնականում Արցախի հրատապ որոշ կարիքների բավարարմանը: Դանդաղորեն, մասնակիորեն, կարկատաններով:

Ոմանք արդարանում են, որ դրամը, փողը միշտ էլ քչություն է անում: Բայց չեն պատասխանում հարցին՝ իսկ ի՞նչ է անում քիչ դրամը: Մեր երկրի ծով կարիքների պարագայում՝ շատ քիչ բան, որով հանգանակված գումարները դառնում են մի տեսակ ձերբազատում խղճի խայթից, ամոթից: Ընդամենը:

Արդ, կարելի՞ է հանգանակությունների արդյունքները բերել-հասցնել-մոտեցնել 10 միլիոնանոց հայության հնարավորությունների սահմանին, որը որոշ դիտորդների կարծիքով տարեկան կարող է անցնել 100, 200 եւ նույնիսկ 300 միլիոնի սահմանները: Մինչդեռ մենք հավաքում ենք տարեկան ընդամենը հազիվ 10 միլիոն:

Պատճառները այս վիճակի բազմաթիվ են: Առաջին՝ վստահության պակասը համահայկական հանգանակության եւ ընդհանրապես Հայաստանի իշխանությունների նկատմամբ: Հետեւաբար անհրաժեշտ է հիմնադրամը վերածել բոլորովին անկախ, ինքնակառավարվող, բացարձակորեն թափանցիկ եւ միայն ոչ պետական հեղինակավոր մի մարմնի հաշվետու կառույցի, որտեղ իշխանության դերը սկսվում եւ ավարտվում է անհրաժեշտ ծրագրերի որոշմամբ եւ ներկայացմամբ:

Երկրորդ՝ անհրաժեշտ է ձերբազատվել տարիների ընթացքում ձեւավորված եւ ժանգոտված ձեւաչափերից, որով հասկանշվում են հեռուսամարաթոնները: Ամեն տարի նույն՝ հրանտթո-խատյանական եւ պարգեւսրբազնական դեմքերը, կազմակերպիչներին բարեկամ-ծանոթ նույն «աստղերն» ու «աստղիկները», նույն վայրը՝ Լոս Անջելես, նույն լոզունգները, որոնք այլեւս գրավիչ չեն: Պակասում է ստեղծագործ միտքը:

Երրորդ՝ անհրաժեշտ է մոտեցումների ու գործունեության արդիականացումը՝ սովորելով ու որդեգրելով փող հանգանակելու փորձն ու հմտությունը սփյուռք ունեցող մյուս երկրներից՝ Իսրայել, Հունաստան, Իռլանդիա, Բուլղարիա, եւ այլն: Կարելի է որոշ բան սովորել նույնիսկ Հայկական բարեգործական ընդհանուր միությունից, որին առանց մարաթոնների, այլ պարզապես փոստային եւ համացանցային նամակներով եւ տեղական կազմակերպությունների աշխատանքով 2016 թ.ին հաջողվել է հանգանակել 21615 միլիոն դոլար:

Նվիրահավաք կազմակերպելը, հանգանակություն անցկացնելը նույնպես մասնագիտություն է, արվեստ, որը պակասում է մեզ: Լոսանջելեսյան առաջիկա մարաթոնը դժվար թե որեւէ բան փոխի: Տա Աստված՝ սխալվեմ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Ո՞վ է 2018 թվականի բյուջեի պատասխանատուն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Մենք չենք կարող վերցնել այս բյուջեի քաղաքական պատասխանատվությունը եւ դեմ ենք այս փաստաթղթին», ասաց «Ծառուկյան» խմբակցության ներկայացուցիչ, ԱԺ փոխնախագահ **Միքայել Մելքումյանը** Հայաստանի՝ 2018 թվականի բյուջեի խորհրդարանական քննարկման ժամանակ: Իսկ եթե եկող տարի, ասենք ու հանկարծ, նրա խմբակցությունը կոալիցիա կազմի ՀՀԿ-ի հետ, ապա այս բյուջեի պատասխանատվությունը «Ծառուկյան դաշինքը» ստանձնելո՞ւ է, թե նոր բյուջեի նախագիծ է առաջարկելու: Կամ, առհասարակ, ո՞վ է 2018 թվականի Հայաստանի բյուջեի պատասխանատուն, եթե փոխվի վարչապետը, չէ՞ որ այս բյուջեն ներկայացնում են Կարեն Կարապետյանն ու նրա կառավարությունը: Թե հետո էլի ասվելու է , որ նախկին կառավարությունը ճիշտ չէր կառուցել բյուջեն, ու կորված ժամանակը էլի նախկինների վրա է դուրս գրվելու, ինչպես որ միշտ է եղել, ու հերթական անգամ Հայաստանը կորցնելու է ոտքի կանգնելու ժամանակը:



Եկող տարվա բյուջեով 1 տրիլիոն 307 միլիարդ դրամի եկամուտ, ու դրանից 157 միլիարդ դրամով ավել ծախս է նախատեսված, ավելացել են պաշտպանության եւ անվտանգության հատկացումները, կրճատվել՝ առողջապահության, գիտության ու կրթության ծախսերը: Սոցիալական հատկացումները չեն ավելանալու՝ թոշակ ու միջին աշխատավարձ չի բարձրանում՝ մոտ երեսուն տոկոս աղքատության պարագայում, չնայած պետական պաշտոնյաների աշխատավարձերը բարձրանում են: Նախատեսված է նաեւ օպտիմալացում՝5560 աշխատողի կրճատմամբ:

Պետական պարտքը մեծանալու է եւ եկող տարվա վերջում մոտենալու է յոթ միլիարդ դոլարի սահմանագծին, սակայն նրա կառուցվածքն է բարելավվել, ըստ փոխվարչապետ **Վաչե Գաբրիելյանի**՝ որոշ բաղադրիչների՝ ներքին պարտքով փոխարինվելու միջոցով: Պարտքի սպասարկման գումարները եւս աճելու են եկող տարվա բյուջեում: Այս պահին յուրաքանչյուր անձին բաժին հասնող ՀՆԱ-ն տարեկան կազմում է 3700 դոլարին համարժեք դրամ, մոտավորապես այս թիվն է լինելու եկող տարի, որ շատ անբարենպաստ ցուցանիշ է:

Պարզ բառերով՝ եկող տարի կունենանք մի կերպ ապրելու բյուջե՝ մեր զգացողությամբ, իսկ ըստ պաշտոնական բացատրությունների՝ հետագայում տնտեսական կայուն աճ ապահովելու բյուջե, որը հետագա տարիների կտրվածքով հենման կետ է լինելու տնտեսության զարգացման համար: Սպասելու եւ հուսալու բյուջե՝ ինչպես ձեւակերպեց պատգամավորներից **Սերգեյ Բագրատյանը**: Հնարավորի արվեստի, աշխատելու բյուջե (Հերմինե Նաղդալյան): Այսքանով բյուջեի բնորոշումները չէին սպառվում, դրանք այս անգամ խիստ բազմազան էին:

Մեկը կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի, մյուսը արդյունաբերության զարգացման միտում չէր տեսել նոր բյուջեում, երրորդը՝ քաղաքական մոտեցման բացակայությունն էր մատնանշում եւ հաշվապահական հաշվետվություն էր ձեւակերպում բյուջեն, մի ուրիշն իրականությունից կտրված էր համարում նախագիծը:

«Պետական պարտքը կառավարելի է» հանգստացնում էր փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանը: «Նյարդային դարձածների գնահատականները մի կողմ՝ լավատեսություն, ոչ թե վատատեսություն պետք է փոխանցել ԱԺ ամբիոնից», կոալիցիոն գործընկերոջ բյուջեին էր սատար կանգնում դաշնակցական **Աղվան Վարդանյանը**:

Ճիշտ չի լինի, եթե չներկայացնենք խորհրդարանում բյուջեի նախագծի քննարկման քաղաքական ֆոնը: Այդ նույն օրը, երբ սկսեց բյուջեի քննարկումը, Մոսկվայում տեղի էր ունենում Սարգսյան-Պուտին հանդիպումը, Սարգսյանն ու Պուտինը խոսում էին դաշնակցային հարաբերությունների՝ բոլոր ուղղություններով առաջընթացից, Հայաստանում ժամանակին գողացված Վրուբելի նկարը Հայաստանին վերադարձնելուց եւ այլ ականջահաճո բաներից: Թե ինչ են խոսել կուլիսներում՝ չենք իմանա, եկող տարի երկու նախագահներն էլ ժամկետի լրանալու խնդիրներից անպայման կարող էին խոսել, ու, այցի հրապարակային դիվիդենդներին զուգահեռ՝ միմյանց աջակցելու չնշմարվող քայլերի մասին եւս կարող էին պայմանավորվել: Հաջորդելու է Հայաստանի նախագահի այցը Բրյուսել, հերթականությունը հետաքրքրական է՝ հավանաբար ԵՄ-Հայաստան համաձայնագրի դրույթները նույնպես մի լավ սանրվել են Սարգսյան-Պուտին հանդիպման կուլիսային հատվածում, ինչու չէ՝ Հայաստանը ԵՄ-ում որոշ առումով Ռուսաստանի համար պատուհան էլ կարող է դառնալ, ու երեւում է, որ համաձայնագիրը ռուսական կողմից չի խոչընդոտվելու: Իսկ Սարգսյան-Պուտին հանդիպումը կայանում էր Պուտին-Էրդողան հանդիպումից հետո՝ Թուրքիայի հետ ռուսներն օր-օրի ընդլայնում են հարաբերությունները, չնայած Արցախի հարցում ռուսերը դեռեւս որեւէ սեւ պայմանավորվածության թուրքերի հետ չեն գնում, թուրքերի ուժն այս պահին չի՛ պատում ռուսներին թելադրել, սակայն մեր ուշադրությունը դրանից չպետք է բթանա, մանավանդ՝ մոտակա օրերին անսպասելի Երեւան ու Բաքու է այցելելու Սերգեյ Լավրովը:

Սարգսյան-Պուտին հանդիպումն, այդպիսով (մշակութային համատեքստում լինելով հանդերձ), ենթադրվում է, որ այս երկու գործիչների ապագային է հղված, հատկապես մեր դեպքում, ու ավելի շուտ արարողակարգային է, քան առավել առարկայական: Միեւնույն ժամանակ չի կարելի այդ հանդիպումն անկարեւոր համարել՝ հենց մեր ասած միմյանց աջակցելու հարթության վրա թեկուզ, եթե նկատի ունենանք նաեւ, որ Մոսկվա մեկնելուց առաջ հենց Սարգսյանն ու ռուսաստանաբնակ մեծահարուստ Սամվել Կարապետյանը միասին հայտարարեցին մեկ միլիարդ դոլարի ներդրման մասին Հայաստանի էներգետիկ ոլորտում՝ հայտը ապագա Հայաստանի ղեկավարի հավակնության ուղերձն ունի իր մեջ:

⇨7



Սելֆի

էջ 9



Լիլի Խարազովան՝ Բորիս Պաստեռնակի հարազատ հոգին

էջ Գ



ՌԴ-ՉԺՀ-Իրան-Էր-Ռիադ. դաշինք ընդդեմ նավթադոլարների

էջ 11

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Դաշինքներ

Ձայնասփիւռէն հարցազրոյց մը յատկացուած էր Հայաստանի քաղաքականութեան հետ առնչուող հարցերու, յատկապէս այլ երկիրներու հետ դաշինքներ կնքելու կապակցութեամբ:

Հետաքրքրութեամբ մտիկ ըրի, քանի ժամանակէ մը ի վեր իմ ալ միտքս կը չարչրկէր Հայաստանի «մենակեաց» վիճակը, երբ անդին, Հայաստանի սահմանակից պետութիւններ, իրար հետ դաշինքներ կը կնքեն զանազան ասպարէզներու մէջ: Հայաստանի միակ դաշնակիցը Ռուսիան է ռազմական-պաշտպանութեան գետնի վրայ, զոր հայաստանցիներու աչքին յաճախ կ՛աղօտի ու թերահաւատութեան կը մղէ, երբ Ռուսիա մեր թշնամիներուն հետ զինամատակարարման տարբեր համաձայնագիրներ կը կնքէ, որոնք հաշտ չեն ընթանար մեր փոխադարձ վստահութեան հետ:

Ասկէ առաջ անդրադարձած եմ այս հարցին, սակայն այսօր, երկրի ռազմա-քաղաքական անփառունակ վիճակին նայելով, դարձեալ մէջս գլուխ կը ցցէ ան:

Մեր հին պատմութեան մէջ, Մեծն Տիգրանէն մինչեւ Կիլիկեան թագաւորները, յաճախ դաշինքներ կնքած են օտար պետութիւններու հետ, մինչեւ իսկ Մոնկոլիա երթալով, եւ ապահոված մեր երկրի անկախութիւնն ու կայունութիւնը, իսկ այսօր, ինչո՞ւ ձեւով մը մեկուսացած ենք ու նախանձով կը դիտենք իրար ձեռք բռնած Պաքուն, Թիֆլիսն ու Անքարան, կամ Թեհրանը, Պաքուն ու Ռուսիան...

Երկիրներ եւ պետութիւններ փոխադարձ շահերու վրայ կը հիմնեն իրենց բարեկամութիւնը, երբ իւրաքանչիւրը միւսին, կամ միւսներուն տալիք մը ունի իր ստանալիքին փոխարէն, այդ ըլլայ զինուորական, հակաահաբեկչական, տնտեսական կամ այլ բնագաւառներու մէջ:

Մենք ի՞նչ ունինք տալիք, երբ շատ բան ունինք առնելիք: Որեւէ պետութիւն մեր սեւ աչքերուն համար մեզի հետ դաշինք չի կնքեր. երբ իրմէ բան մը կ՛ակնկալենք, փոխադարձաբար բան մը տալու ենք: Բայց ի՞նչ: Ոչ նաֆթ ունինք, ոչ դրամ, ոչ հսկայ բանակ , զէնք ու զրահ, ոչ ալ ճարպիկ քաղաքականութիւն... Ինչպէ՞ս համաձայնութիւն պիտի կնքենք:

Բարեկամ շահելու մէջ բաւական տկար ենք, բան մը որ կը փաստէ թէ քաղաքականութեան մէջ ալ տկար ենք: Մեզի համար թշնամին թշնամի է, եթէ նոյնիսկ հրեշտակի վերափոխուի, հաստատ ենք մեր սկզբունքներուն վրայ, զիջումը տկարութիւն եւ նուաստացում կը նկատենք, արժանապատուութեան հարցի կը վերածենք ամէն ինչ: Մենք մէկ ուղղութիւնով կը շարունակենք քալել, մինչ աշխարհը անդադար ուղղութիւններ կը փոխէ ամէն օր:

Նայեցէք ձեր շուրջը, տակաւին կը շարունակուի սուրիական պատերազմը, տեսէք թէ մասնակից պետութիւնները քանի՞ անգամ թշնամի ու բարեկամ փոխեցին, շապիկ փոխելու պէս: Երէկուան թշնամիները յանկարծ բարեկամներ կը դառնան, հասարակաց շահը գերադասելով ամէն տեսակի առաքինութենէ: Քաղաքականութեան մէջ առաքինութիւն մի՛ փնտռեր, այլ միայն շահ, չէ՞ որ ըսուած է՝ չկան մնայուն բարեկամներ ու թշնամիներ, կան մնայուն շահեր:

Սակայն, երեւի ասիկա մեր նկարագրին հետ խորթ կ՛ընթանայ, եւ մենք կը շարունակենք մեր երգը երգել:

# Աթենքում տպավորիչ հանդիսությամբ նշվեց ՌԱԿ-ի 96-րդ տարեդարձը





Նոյեմբերի 12-ին Հունաստանի մայրաքաղաքի «Ինտերկոնտինենտալ» շքեղ հյուրանոցի դահլիճում կայացավ Ռամկավար Ազատական կուսակցության հիմնադրման 96-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն, տեղական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների, ՌԱԿ պատասխանատուների, շարքային անդամների եւ համակիրների հոծ բազմության ներկայությամբ, որոնց մեջ իրենց բացակայությամբ «փայլում» էին Հունաստանում ՀՀ դեսպանը եւ հայ եկեղեցու Հունաստանի թեմի առաջնորդը:

Հանդիսավարն էր ՌԱԿ տեղական մասնաճյուղի ատենադպիր, կուսակցության Հունաստանի պաշտոնաթերթ «Նոր աշխարհ» շաբաթաթերթի նախկին խմբագիր **Զավեն Գրիգորյանը**, որ ընթացք տալով օրվա ծրագրին՝ բեմ հրավիրեց ՌԱԿ տեղական մասնաճյուղի ատենապետ **Հակոբ Ֆենճյանին**: Վերջինիս ելույթը հունարեն էր, ուղղված Հունաստանի կառավարությանն ու ժողովրդին եւ նվիրված հայ եւ հույն ժողովուրդների դարավոր բարեկամությանը, ծանր փորձությունների միջով անցած նրանց համագործակցությանը, որն այսօր նոր՝ միջպետական հարաբերություններով եւ փոխօգնությամբ զարգանում է անընդհատ:

Ապա ամբիոնը տրամադրեց օրվա գլխավոր բանախոսին՝ Լոնդոնից հրավիրված դոկտ. Հրաչ Գույումճյանին, որ ներկայիս ՌԱԿ Գերագույն խորհրդի քարտուղարի պաշտոնն է վարում ձեռնհասորեն: Բանախոսը ՌԱԿ-ի պատմությանն ու գաղափարախոսությանը հակիրճ անդրադարձ կատարելուց հետո ներկայացրեց կուսակցության ներկայիս գործունեությունը, նպատակները, բացատրեց հայաստանակենտրոնության էությունը, պատճառները: «Սփյուռքը, ասաց նա, չունի եւ չի կարող ունենալ այլ ուղղություն՝ քան հայաստանյան դիրքորոշումը, Հայաստանի հզորացումը, Հայաստանով վերապրելու եւ հայրեն զարգանալու նպատակաուղղվածությունը»: Դոկտ. Գույումճյանը արժանին մատուցեց ՌԱԿ վետերան ղեկավար եւ «Նոր աշխարհ» թերթի պատասխանատու **Սարգիս Խաչատուրյանին**, որի ջանքերով է նաեւ, որ հանդիսությունն անցավ գոհացուցիչ մակարդակով, հակառակ արհեստականորեն հարուցված տարբեր խոչընդոտների:

Հանդիսության ավարտին մատուցվեց երաժշտական հայտագիր՝ հայրենասիրական երգերի փնջով:

# 135 հազար դոլար՝ «Միրորի» գալա-հանդիսությանը

**«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի 85-ամյակի առթիվ նոյեմբերի 3-ին կազմակերպված գալա-հանդիսության ժամանակ հանգանակվել է 135 հազար դոլար, որը հատկացվելու է թերթի հետագա գործունեությանց իրականացմանը, տեղեկացնում է «Միրորի» նոյեմբերի 11-ի համարը: Միջոցառմանը ելույթներ քիչ են եղել, բայց մթնոլորտը եղել է ջերմ եւ ներկաների տրամադրությունը՝ բարձր: Եղել են պարգեւատրումներ միջազգային ճանաչման արժանացած չորս լրագրողների: ԹՄՄ Կենտրոնական վարչության ատենապետ Երվանդ Ազատյանը Ռոբերտ Ֆիսքին ներկայացրել է որպես «ճշմարտության համար պայքարող մարտիկի»: Ամբերին Զամանը հակիրճ անդրադարձել է Թուրքիայում գտնվող իր հիվանդ մորը այցելել չկարողանալու մասին, իսկ Պարսամյանն ու Թերզյանը շնորհակալություն են հայտնել պարգեւների համար:**

**Անակնկալ մրցանակներ ստացել են նաեւ գալա-հանդիսության հանձնախմբի նախագահ Նիկոլ Պապիկյան-Հաժժարը, եւ ՌԱԿ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի շրջանային վարչության ատենապետ Գեւորգ Մարաշլյանը:**

**Ներկաները հաճելի ժամեր են անցկացրել «Black Sea Salsa Band» նվագախմբի ընկերակցությամբ:**

Հ. Ծ.



***Ձախից՝ Նիկոլ Պապիկյան Հաժժար, Գեւորգ Մարաշլյան, Հարի եւ Հռիփ Բարսեղյաններ***

# Շարադրությունների մրցույթ՝ Երեւանի Վ. Թեքեյան վարժարանում

Կրկին անգամ կայացավ «Հակոբ Պողոսյանի անվան կրթաթոշակ» շարադրությունների ամենամյա մրցույթը՝ նվիրված հայ ականավոր լրագրող, հրապարակախոս, քաղաքական մեկնաբան, թարգմանիչ **Հակոբ Պողոսյանի** հիշատակին:

Ծնվել է Լիբանանում 1936թ.: Հաճախել է Հայ Կաթողիկե Մեսրոպյան եւ ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան վարժարանները: Բարձրագույն կրթությունը ստացել է Բեյրութի Ամերիկյան համալսարանում, այնուհետեւ ավարտել է Լոնդոնի համալսարանի միջազգային լրագրության բաժնի դասընթացները: Դաստիարակվել է հայկական ոգով, հայրենասիրությամբ ու սիրով դեպի ազգային մշակույթն ու լեզուն: Վաղ հասակից գիտակցել է հայի ինքնության պահպանման կարեւորությունը եւ ուսանողական տարիներից ի վեր ազգանվեր գործունեություն ծավալել լիբանանահայ համայնքի հասարակական կյանքում: Աշխատել է «Յառաջ», «Յառաջ Գրական», «Զարթօնք» թերթերում: 1989թ. ընտանիքով տեղափոխվել է Մ. Նահանգներ եւ շուտով ստանձնել Կալիֆորնիայի «Նոր Օր» թերթի գլխավոր խմբագրի պաշտոնը: Եղել է նաեւ ՀԲԸՄ Կալիֆորնիայի հանձնաժողովի վարիչ-քարտուղարը: Արժանացել է ԹՄՄ «Ռիթա եւ Վարդգէս Պալեան» մամլո մրցանակին: Կյանքից հեռացել է վաղաժամ՝ 2001թ.:



Շարադրությունների մրցույթը, որը նախաձեռնել եւ 2002թ. սկսած իրականացնում է Հակոբ Պողոսյանի այրին՝ ԱՄՆ-ում բնակվող տիկին Անի Պողոսյանը, նպատակ ունի նպաստելու աշակերտների առաջադիմության բարձրացմանը, խրախուսելու հայոց լեզվի իմացությունն ու ստեղծագործական աշխատանքը, ինչպես նաեւ առողջ մրցակցության պայմաններում հնարավորություն տալու պատանիներին դրսեւորել իրենց գիտելիքները:

Օրերս Երեւանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցում՝ Հակոբ Պողոսյանի անունը կրող լսարանում կայացավ ամենամյա ձեռնարկի արդյունքների ամփոփումը (մրցույթը կայացել էր հոկտեմբերի 8-ին Թեքեյան կենտրոնում): Այս տարվա ստեղծագործական շարադրությունների թեմաներն էին՝ «Խաղաղ երկինք» եւ «Երազի թեւերով»: Մրցույթի մասնակիցներն էին դպրոցի 8-րդ դասարանի աշակերտները. բոլորն էլ արժանացան խրախուսական մրցանակների՝ Հակոբ Պողոսյանի անվան կրթաթոշակին:

# Կասեցնել կեղծ գիտությունը

Մեր առջեւ է չորրորդ դասարանի դասագիրք՝ *Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան, «Ես եւ շրջակա աշխարհը»*, հաստատված ՀՀ ԿԳՆ կողմից, 2015 թ.: Դաս 50. *«Քարահունջի աստղադիտարան»* լուսանկարն է, կարդում ենք Հայկական լեռնաշխարհում տարածված *«հնագույն աստղադիտարանների»* մասին, ապա նույն էջում՝ *«նոր տեսակի ռադիոօպտիկական հայելային աստղադիտակ է տեղադրված Արագածի վրա, որի հեղինակն է ականավոր գիտնական Պարիս Հերունին»:*

Քանիցս ասվել է մամուլում, որ թե *«Քարահունջի աստղադիտարանի»*, թե *«ռադիոօպտիկական դիտակի»* բացառիկության լայնորեն գովազդված Հերունու պնդումները ոչ մի կապ չունեն իրական գիտության հետ:

Կրկնվենք. Զորաց քարեր հնավայրը ոչ մի առնչություն չունի դրա մոտակայքում չգտնվող Քարահունջ գյուղի հետ: Առ այսօր չկա որեւէ հիմք պնդելու, որ հուշարձանի քարերը կանգնեցված են եղել աստղագիտական-օրացուցային նպատակներով, իսկ կատարված հնագիտական պնդումները հիմնովին հերքել են Հերունու իբր հաշվարկված հուշարձանի ժամանակաշրջանը, իսկ անցքեր հայտնի են նաեւ նույն վայրում եւ այլ վայրերում գտնված քարերի վրա:

«Հերունու աստղադիտակով» երբեւէ գիտական արդյունք չի ստացվել, որ հրատարակված լիներ որեւէ գիտական ամսագրում, դրա նախագծում խախտված են գիտական տարրական սկզբունքներ:

Մեր երկրի պատմությունը, գիտությունը հարուստ են նվաճումներով եւ դեմքերով, որոնք պետք է հրամցվեն մեր աշակերտներին: Մինչդեռ կեղծ գիտական արժեքների ներկայացումը հայրենասիրական շղարշի ներքո, անթույլատրելի է հատկապես դպրոցում, քանի որ նպաստում է եզակիության անհիմն բարդույթի ձեւավորմանը, իսկ դրա այսօրինակ սփռումը խոցելի է դարձնում մեր մշակույթը եւ գիտությունը:

Հորդորում ենք Կրթության եւ գիտության, Մշակույթի նախարարություններին կիրառել ամենախիստ միջոցները կեղծգիտական «հայրենասիրությունից» զերծ պահել դպրոցը, մշակույթը: Ուղղակի աներեւակայելի է, որ 21-րդ դարում այսօրինակ անհեթեթություններ կարող են փաստորեն պաշտոնականորեն հանդուրժվել:

**ԳՈՒՐԶԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ,**
**ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

**ՂԱԶԱՐՅԱՆ ԷԴՄՈՆ,**
**ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,**
**պատմ.գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ**

**ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ԱՇՈՏ,**
**պատմ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

# Արդյո՞ք հուշարձանները կհասցնեն վերականգնվել մինչեւ տարեվերջ

ՆԱԻՐ ՅԱՆ

Պատմամշակութային հուշարձանների վերականգնման ու ամրակայման համար այս տարի եւ պետբյուջեից գումար է հատկացվել: 2017 թվականի ծրագրում ներառված է 7 եկեղեցի: Դրանց վերականգնումը կամ նորոգումը հիմնականում սկսվել է մի քանի տարի առաջ, այսինքն՝ ամեն տարի պետբյուջեից գումար է հատկացվում, որպեսզի հուշարձանները փուլ առ փուլ, տարի առ տարի աստիճանաբար վերակառուցվեն կամ ամրակայվեն:

Մշակույթի նախարար **Արմեն Ամիրյանը** հոկտեմբերի վերջերից սկսած՝ գրեթե ամեն շաբաթ այցելում է մարզեր՝ անձամբ հետեւելու, թե ինչպես են կատարվում շինարարական աշխատանքները: Արմավիրի Այգեշատ գյուղի Թարգմանչաց եկեղեցին 6-7-րդ դարերի է. այն խոնարհված հուշարձան է: 3-3,5 տոննա կշռով բեկորները հնարավոր է եղել բարձրացնել ու տեղադրել եկեղեցու վրա, բացակայող քարերը փոխարինվել են նորերով: Ըստ նախագծի՝ նախատեսվում է

Ինչո՞ւ է տենդեր շահած «Արհովշին» կազմակերպությունն ուշ սկսել հուշարձանների շինարարությունը: Ընկերության ղեկավարը հավաստիացնում է, որ մշակույթի նախարարությունը շինարարությունն սկսելու թույլտվությունն ստացել է սեպտեմբերի վերջերին: Այդ պատճառով էլ նրանք աշխատանքի համար բարենպաստ ամռան ամիսները բաց են թողել ու ստիպված սկսել են գործ անել հոկտեմբերից: Բնական է, որ շատ բան հասցնել չէին կարող: Նախարար Արմեն Ամիրյանն այս առումով նկատեց, որ շինարարին խստորեն մեղադրել չի կարելի: Նա հաստատեց, որ իսկապես թույլտվությունը շինկազմակերպությանն ուշ են տվել. բանն այն է, որ մրցույթին մասնակցած ընկերություններից մեկը դատական գործընթաց էր սկսել, ինչի պատճառով էլ թղթաբանությունն ուշացել է: Իսկ առհասարակ նախկինում հուշարձանների վերականգնման աշխատանքները կազմակերպելու գործընթացը, ավելի ճիշտ՝ շինարարությունն սկսելու թույլտվությունը միշտ էլ ուշ է ստացվել՝ բաց թողնելով ամառվա ամիսները: Արմեն Ամիրյանը վճռել է փոփոխություններ անել այդ գործընթացում. 2018 թվականի հունվարի 15-ից այդ տարվա նախագծերի մրցույթը կհայտարարվի, հայտերի ընդունման, մրցույթի մասնակցության քայլերն ավելի արագ կարվեն ու հուշարձանների վերականգնման աշխատանքները կսկսվեն շատ ավելի վաղ, քան մինչեւ հիմա է արվել: Բացի այդ, շինարարության ընթացքին մշտապես կհետեւեն մասնագետները:

Սանահինի վերականգնմանն այս տարի հատկացվել է մոտ 19 մլն. դրամ, իսկ 2012-16 թթ-ին՝ 80 մլն.: Ամեն տարի վերանորոգվում ու ամրակայվում են համալիրի վանքերից մեկի որոշակի հատվածները: Այս անգամ սբ. Ամենափրկչի տանիքի ծածկասալերն են քանդվում-վերաշարվում:

Սանահինում դժվար չէ նկատել վերջին տարիներին արված վերականգնման աշխատանքները: Համալիրի վանքերի տանիքները փոխվել են, պատերը՝ վերաշարվել, բայց դարձյալ առկա է նույն չհնացող խնդիրը. հուշարձանի վրա ամենուր առատ բուսականություն է աճում: Նախարարությունը վկայակոչում է օրենքը. պետությունը վերանորոգում է, իսկ օգտագործողը պարտավոր է հուշարձանը պահպանել ու խնամել: Իսկ տվյալ դեպքում օգտագործողը Մայր աթոռ սբ. Էջմիածինն ու տեղական ինքնակառավարման մարմիններն են: Սանահինի վրա աճող բուսականության խնդիրը տարիներ առաջ մեծ աղմուկի առիթ դարձավ. ոչ թե խոտ կամ թուփ, այլ հսկա ծառ էր աճել: Հիմա այնտեղ դեռեւս ծառեր չկան, բայց հավանականությունները մեծ են ու մոտալուտ, որ կրկին կաճեն: Արմեն Ամիրյանը նկատեց, որ ոչ միայն Սանահինի, այլեւ առհասարակ խոնավ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու խնամքը պետք է ստանձնեն քահանաները եւ համայնքները՝ թեկուզ կամավորների խմբեր կազմելով ու ժամանակ առ ժամանակ աճող բուսականությունը մաքրելով: Օրինակ՝ Սանահինի վանքերի վերականգնված կղմինդրներն արդեն տեղահանվել են նույն խոտ ու թփերի պատճառով ու մոտ ժամանակներում նույն ծավալով վերականգնման աշխատանքների կարիք է լինելու: Կա խնդիր. պետք է լինի նաեւ լուծում. օրինակ՝ նոր ծլարձակող բույսերի արմատները թունաքիմիկատներով չորացնելը: Սովետական տարիներին մասնագիտական հատուկ խումբ ենք ունեցել, որը զբաղվել է հուշարձաններն անցանկալի բույսերից մաքրելձերբազատելով, նաեւ լաբորատորիա ենք ունեցել, որտեղ քարերը քիմիկատներով մշակվել են, հետո միայն շարվել:

Սանահինի արտաքին տեսքը խեղում են ոչ միայն բույսերը, այլեւ հուշարձանի պահպանման տարածք ներխուժած քաղաքացիական գերեզմանները: Վանական համալիրից ընդամենը մի քանի քայլ հեռու շիրմատունն է, որի սահմանները տարածվել ու ընդարձակվել են, ընդ որում՝ հարեւան գյուղերից տեղափոխված դագաղներով: Վերջերս հարուցված քրեական գործերից մեկը դեռ քննության փուլում է: Այս խնդրի պատասխանատուն տեղական ինքնակառավարման մարմիններն են, որոնք պետք է վերականգնել ավագ խորանն ամբողջությամբ, գմբեթարդը, երեք ճակատներով արտաքին խորշերը, հյուսիսային խորանը՝ նույնպես: 2012 թվականից այստեղ շինարարություն է ընթանում: Այս տարի հատկացվել է 14 մլն. դրամ: Շինարարարկան աշխատանքները սկսվել են բավականին ուշ՝ հոկտեմբերին: Շինարարության ընթացքը, մեղմ ասած, տարակուսանքի առիթ է տալիս: Մրցույթը շահած «Արհովշին» շինարարական կազմակերպությունը վստահեցնում է, որ մինչեւ ժամկետի ավարտը՝ դեկտեմբերի կեսերը, գործը կավարտի: Նույն կազմակերպությունն է ստանձնել նաեւ Իրինդի սբ. Աստվածածին, Բյուրականի Արտավազիկ եկեղեցիների վերականգնումն ու ամրակայումը: Դրանց հատկացված գումարը մոտ 40 մլն. է: Շինարարական գործընթացի ուշացած պատկեր է նաեւ այդ հուշարձաններում: Հասկանալի է, որ այսուհետեւ եղանակն ավելի է ցրտելու, ինչը նշանակում է, որ կրաշաղախով աշխատել հնարավոր չի լինի, որովհետեւ կրաշաղախն ուղղակի չի կպչի ու չի չորանա: Եթե եղանակը ևս մի քանի աստիճանով ցրտի, շինարարական աշխատանքները շարունակել հնարավոր չի լինի: Հասարակական հնչեղություն ստացած այս ուշացումները նախարարին լուրջ դժգոհելու ու վրդովվելու առիթ տվեցին:





Օրերս Արմեն Ամիրյանն այցելեց նաեւ Լոռու մարզի Սանահինի սբ. Քոբայրավանք վանական համալիրներ՝ նույն նպատակով՝ տեսնելու, թե այնտեղ ինչպես են ընթանում վերականգնման աշխատանքները: Սանահինի եւ Քոբայրավանքի շինաշխատանքները նույնպես «Արհովշին» կազմակերպությունն է իրականացնում: Երկու հուշարձանների վերանորոգումն էլ ուշանում է. ժամկետները շուտով կավարտվեն, իսկ ընկերության ղեկավարը դարձյալ խոստացավ գործն ավարտին հասցնել մինչեւ ցրտերն ընկնելը: Նախարարը Լոռիում էլ չթաքցրեց դժգոհությունը:

րահսկեն ու արգելեն առանձին անհատների հակաօրինական գործողությունները:

Մեր հուշարձանները՝ հատկապես բազմադարյա, կառուցվել են գրեթե անառիկ ու դժվարանցանելի վայրերում, հիմնականում՝ բարձունքների վրա: Այդպիսին է նաեւ Քոբայրավանքը, որը վրացական սահմանին շատ մոտ է: Տասնամյակներ շարունակ վրացիներն այստեղ իրենց ներկայացուցիչներին են ուղարկել՝ միաձնուհիների ու հոգեւորականների՝ այդպիսով փորձելով Քոբայրավանքն իրենցով անել: Նրանք միշտ հայտարարել են, թե այդ համալիրը վրացական է՝ վկայակոչելով վրացատառ արձանագրությունները: Քոբայրավանքի, այսպես ասած, նախահիմքը եղել է Բագրատունյաց դստեր կառուցած Մարիամաշեն մատուռը (9-10-րդ դարեր): Մատուռը լիովին վերականգնված է. ճակատային պատերին հայատառ արձանագրություններ են:

Հաջորդ դարերում Հառաքելական եկեղեցուց անջատված վրացադավանակ հայերը Մարիամաշենի հարեւանությամբ կառուցել են քաղկեդոնական եկեղեցիներ, որոնց վրա իսկապես կան վրացերեն արձանագրություններ, սակայն դրանք հին՝ մեսրոպյան վրացատառերով են, որոնք վրացիներն այլեւս չեն կիրառում: Եվ ամենակարեւորը՝ հին մեսրոպյանով գրված են հայերեն արձանագրություններ, այսինքն՝ հայերեն տեքստեր: Վերջին տարիներին վարդիներն այլեւս այդ կողմերում չեն երեւում, մանավանդ, երբ հուշարձանի վերականգնման աշխատանքներն ավելի ինտենսիվ են դարձել: Քոբայրավանքի վերանորոգման ու ամրակայման նախագիծն արժե 180 մլն. դրամ:

Նախարար Արմեն Ամիրյանի հաջորդ այցը Գոշավանքում է լինելու մեկ շաբաթից: Այդ ժամանակ էլ պարզ կդառնա, թե պետբյուջեի գումարներով վերականգնվող 7 եկեղեցիներից 6-րդի վերանորոգման գործընթացը ո՛ր փուլում է. արդյո՞ք չի ուշանում մյուսների նման:

# Հայերին առնչվող հարյուրամյա երկու հիշատակումներ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

Հարյուրամյա վաղեմության երկու գլխավոր իրադարձություններ լռության են մատնվել, չնայած իրենց ունեցած ազդեցությանը համայն աշխարհի վրա: Դրանցից մեկը 1917 թվի նոյեմբերի 8-ի հոկտեմբերյան հեղափոխությունն է, իսկ մյուսը՝ նույն թվի նոյեմբերի 2-ի «Բալֆուրի դեկլարացիան»:

Չնայած արտաքնապես թվում է, թե դրանք կապ չունեն հայերիս հետ, իրականում երկուսն էլ խորապես ազդել են Հայաստանի եւ հայերի պատմության վրա:

Հոկտեմբերյան հեղափոխությունը նպատակ էր հետապնդում Ռուսաստանում գոյություն ունեցող ֆեոդալական կարգերի փոխարեն երկրում հաստատել արդար տնտեսական կարգեր: Այն հիմնված էր Կարլ Մարքսի հեղափոխական սոցիալիզմի տեսության վրա եւ գործադրվեց Վլադիմիր Լենինի ձեռամբ:

Մարքսի տեսությունը պաշտպանում էր պրոլետարիատին, որ ազատագրվի հասարակությունում կազմավորվող կապիտալիստական կառույցների լծից եւ հաստատի դասակարգային տարբերություններից զուրկ մի նոր հասարակություն: Տեսությունը պարզաբանված էր հասարակությանը մատչելի դարձնելու համար, «յուրաքանչյուրից ըստ իր կարողությունների, դեպի յուրաքանչյուրն ըստ իր պահանջների» նշանաբանի ներքո: Նման փիլիսոփայությունը պետք է պարտադրվեր հասարակությանը՝ կառավարության, իրականում պրոլետարիատի կառավարության կամ դիկտատուրայի կողմից:

Արդյունաբերական հեղափոխությունը արդիականացրել էր ապրանքների արտադրությունը եւ ծառայությունների մատուցումը Եվրոպայում՝ առաջացնելով ավելի մեծ անհավասարություն եկամուտների բաշխման ոլորտում: Մարքսի տեսությունը հիմնված էր գլխավորապես Եվրոպայում տնտեսական կյանքի նախադրյալների եւ ոչ թե Ռուսաստանում գործող ֆեոդալ կարգերի հիման վրա:

Հակառակ 1848-ին եվրոպական մի շարք երկրներում տեղի ունեցած հեղափոխություններին, դրանցից ոչ մեկը Մարքսի սոցիալիզմը չընդունեց որպես կենսաձեւ: Փոխարենը այն արմատներ գցեց Ռուսաստանում, հետամնաց ագրարային մի հասարակությունում, որտեղ ոչ արտադրության միջոցներն էին հավասարվում եվրոպականին, ոչ էլ ապրանքների արտադրողականությունը կամ ծառայությունների մատուցումը: Այնպես որ այդ տեսության իրականացումը սկզբից եւեթ դատապարտված էր ձախողման: Բայց դրա կիրառումը պարտադրվեց ռուս ժողովրդին եւ սկիզբ դրվեց «սոցիալական լաբորատորիայի» փորձարկումներին՝ իր սարսափելի հետեւանքները թողնելով ինչպես ռուս ժողովրդի, այնպես էլ ամբողջ աշխարհի վրա:

Յոթանասուն տարիների փորձարկումներից հետո տեսությունը կորցրեց իր մղիչ ուժն ու ստեղծված կառույցը՝ Խորհրդային Միությունը ինքնաբերաբար խորտակվեց, առանց թշնամու կողմից արձակված կրակոցների:

Հայաստանը մաս կազմելով նախկին ցարական կայսրության, ինքն էլ առնչվեց այդ սոցիալական փորձարկումների հետ, եւ 1918-ին դժվարությամբ ձեռք բերված անկախությունը 1920-ին փոխարինվեց խորհրդային զորքերի երկիր մուտք գործելով: Յոթանասուն տարի Խորհրդային Հայաստանի ժողովուրդն ապրեց կառավարման այդ համակարգի ներքո, կրելով Ստալինի իշխանության սարսափներն ու զոհաբերելով անհամեմատ մեծ թվով՝ 300 հազար հայորդիների՝ ի պաշտպանություն «անծայրածիր հայրենիքի»՝ համաշխարհային Երկրորդ պատերազմի օրերին:

Բայց մյուս կողմից Հայաստանն օգտվեց Խորհրդային Միության տնտեսության աճի բացառիկ հնարավորություններից եւ գիտությունն ու արդյունաբերությունը, գրականությունն ու արվեստները արագ թափով զարգացան, երկիրը հասցնելով տիեզերական դարաշրջանի շեմին: Մի բացասական գործոն, ճանապարհորդելու սահմանափակումը, այնուամենայնիվ դրական ազդեցություն ունեցավ հայերիս համար: Մենք պատմականորեն եւ բնազդային առումներով հակված ենք եղել հեռանալ մեր պատմական վայրերից եւ բնակություն հաստատել այլ երկրներում, զարգացնելով դրանք: Ճանապարհորդելու սահմանափակման հետեւանքով Հայաստանի բնակչությունը ստիպված էր ապրել երկրի ներսում եւ գուցե առաջին անգամ պատմության ընթացքում բնակչության թիվը գրեթե հասավ 4 միլիոնի: Զարկ տրվեց մեկ ընդհանուր ազգային գիտակցության: Բարգավաճ հայրենիքի մասին քարոզչությունն այնքան գրավիչ դարձավ, որ մոտ 200 հազար հայեր Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ եւ հետո ներգաղթեցին սփյուռքից հայրենիք:

Խորհրդային Միության փլուզումից հետո միգրացիայի դարպասները լայն բացվեցին եւ մինչ օրս ոչ մեկը գործնական քաղաքականություն չի մշակել կանգնեցնելու համար արտագաղթի հոսքը: Այնպես որ խորհրդային համակարգի չարաբաստիկ սահմանափակումներից մեկը օրհնանք դարձավ Հայաստանի համար, ամրագրելով նրա ապագան:

Մյուս իրադարձությունը, որի հարյուրամյակը լրանում է այս տարի, առավել անուղղակի ազդեցություն է թողել հայերիս, ավելի ճիշտ սփյուռքահայերիս վրա: Դա 1917 թվի Բալֆուրի դեկլարացիան է:

Եվրոպայում եւ Ռուսաստանում դարեր շարունակ հետապնդումների ենթարկվելուց հետո, հրեաները ձգտեցին իրենց հայրենիքն ունենալ: Թեոդոր Հերցլ անունով վիեննացի մի լրագրող սիոնիզմի գաղափարախոսությունը առաջ քաշեց հրահրելու համար աշխարհով մեկ սփռված հրեաների երեւակայությունը: Բրիտանացիները Աֆրիկայում, իսկ Ստալինը հետագա տարիներին Ռուսաստանում հողատարածքներ տրամադրեցին նրանց: Բայց սիոնիստների նպատակը Պաղեստինում իրենց պատմական հայրենիք վերադառնալն էր, եւ 1948-ին Հերցլի երազանքն իրականություն դարձավ: Բրիտանացի գիտնական Խայիմ Վայցմանի եւ Մ. Նահանգների գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդիսի օժանդակությամբ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Արթուր Ջեյմս Բալֆուրը հնարավորություն ստացավ համապատասխան «Դեկլարացիա» հռչակել: Նա սիոնիստական ֆեդերացիայի առաջնորդ լորդ Ուոլտեր Ռոթսչայլդին տեղեկացրեց, որ «նորին գերազանցության կառավարությունը դրական է վերաբերվում Պաղեստինում հրեա ժողովրդի համար ազգային օջախ հիմնելու գաղափարին եւ ամեն ջանք գործադրելու է դյուրացնելու համար դրա իրականացումը, զգուշացնելով, որ Պաղեստինում ապրող ոչ հրեա համայնքների քաղաքացիական եւ կրոնական, ինչպես նաեւ այլ երկրներում ապրող հրեաների իրավունքներն ու քաղաքական կարգավիճակը չխաթարվեն կամ չոտնահարվեն»:

Հետագայում «Դեկլարացիան» հանձնվեց Ազգերի Լիգային՝ գործադրության դրվելու համար: 1930-ականներին, երբ դեռ Բրիտանիայի ձեռքերում էր Պաղեստինի մանդատը, Բրիտանիայի կառավարությունը փորձեց ձերբազատվել պարտավորություններից, բայց արդեն շատ ուշ էր: Հրեաներն արդեն սկսել էին աշխարհի տարբեր վայրերից վերադառնալ իրենց երկիրը եւ հիմնել «Քիբուցներ», գյուղատնտեսական համայնքներ, նման Կիլիկիայի (բայց ոչ Ղարաբաղի) հայերի: Արդեն սկսվել էին հրեաների զինված ապստամբություններն ընդդեմ բրիտանական օկուպացիայի եւ տեղացի արաբ բնակչության: Երուսաղեմի «Քինգ Դեյվիդ» հյուրանոցը, որը բրիտանացիների կենտրոնատեղին էր, ռմբահարվեց 1946-ին եւ սանձազերծվեց թշնամական արշավն ընդդեմ պաղեստինցիների: Դեր Յասինի եւ այլ վայրերի կոտորածները նպատակ ունեին ահաբեկելու տեղացի ժողովրդին: Լեհին, ազատամարտիկների խմբավորումը, ոչնչով չէր տարբերվում Համասից կամ Պաղեստինի ազատագրման կազմակերպությունից: Այդ կոտորածները կազմակերպողների թվում էին Դեյվիդ Բեն-Գուրիոնը, Յիցհակ Շամիրը եւ Մենահիմ Բեգինը՝ նրանք ահաբեկիչ առաջնորդներ էին, որոնք հետագայում դարձան հարգված պետական գործիչներ:

Երբ Իսրայելը անկախություն հռչակեց, հայերը ըմբռնումով մոտեցան իրողությանը ներզգալով, որ հրեաները իրենց նման միեւնույն «պատմական տրավմայի» միջով էին անցել: Ինչ վերաբերում է «Բալֆուրի դեկլարացիայի» զգուշացմանը, որ պետք է պահպանվեն «ոչ-հրեական համայնքների քաղաքացիական եւ կրոնական իրավունքները», բավական է ասել, որ 700 հազար պաղեստինցիներ վտարվեցին իրենց բնակավայրերից եւ 25 հազարի հասնող հայկական համայնքից այսօր ընդամենը 1.500 հայեր են մնացել այնտեղ: Անկախության հռչակման ժամանակ հրեաների թիվը 600 հազար էր կազմում: Այսօր Իսրայելի բնակչությունը 8 միլիոն է:

Այն ինչ ազատագրում բերեց հրեա ժողովրդին, դարձավ «նաքբա» (աղետ) պաղեստինցիների համար: Հակամարտությունն ու տարաձայնությունները շարունակվում են մինչեւ օրս եւ թափանցել են ամբողջ Մերձավոր Արեւելքի երկրները:

Եգիպտոսը երեք մեծ պատերազմներ է մղել Իսրայելի դեմ մինչեւ նախագահ Անուար Սադաթը խաղաղության պայմանագիր կնքեց Իսրայելի իր գործընկերոջ՝ Մենահիմ Բեգինի հետ 1979-ին: Այդ ժամանակ արդեն Եգիպտոսի բարգավաճ հայկական համայնքը 55 հազարից նվազել էր 4 հազարի:

Մերձավոր Արեւելքը պատերազմական գոտի է դարձել 1948-ից սկսած: Իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը սնկի նման աճել է՝ դառնալով գլոբալ խնդիր եւ Եվրոպայի ու հատկապես Մ. Նահանգների պաշտպանությունը Իսրայելին ամբողջ մահմեդական աշխարհին լարել է Արեւմուտքի դեմ, Իսրայելին վերագրելով կողմնակի դիտորդի կարգավիճակ:

Արիել Շարոնի 1982-ին նախաձեռնած Լիբանան ներխուժումը զգալիորեն նվազեցրեց այնտեղ տեղակայված պաղեստինյան զորքերի թիվը, եւ այլ երկրներ գրեց սփյուռքի ամենակայուն հայկական համայնքներից մեկի անդամներին: Դրան հաջորդած Իրաքի օկուպացիան քայքայեց տեղի հայկական համայնքը: Այնուհետեւ հերթը հասավ Սիրիային: Պատերազմներից անուղղակիորեն տուժել են հայերը, որոնք բարգավաճ Մերձավոր Արեւելյան երկրներից գաղթել են Հայաստան, եվրոպական երկրներ եւ Միացյալ Նահանգներ, նոր ավյունով հարստացնելով այդ երկրներն ու այնտեղ ապրող հայկական համայնքները: Սակայն վերջին հաշվով պատճառված վնասը շատ ավելի մեծ է քան օգուտը:

Շատ քիչ մարդիկ են նշում այսօր այս զույգ հարյուրամյակները: «Կրակն իր խփած տեղն է վառում», ասում է հայկական առածը: Այնպես որ, երկու լռելյայն նշվող հարյուրամյակներին միավորում է մեզ բաժին ընկած ճակատագիրը: Հայո՛ւ ճակատագիրը:




Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

## Արեւային էլկետրակայան Թալինում

**Արեւային էներգիայի օգտագործումը կարեւոր նշանակություն ունի մեր երկրի տնտեսության հետագա զարգացման գործում:Այս տեսակետից մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում:**

**Նոյեմբերի 7-ին Արագածոտնի մարզի Թալին քաղաքում բացվեց «Թալին-1» արեւային էլեկտրակայանը:Կայանի հզորությունը կազմում է մոտ 1000ԿՎտ: Այն տարեկան կարող է արտադրել ավելի քան մեկ միլիոն ԿՎտժ էլեկտրական էներգիա: Այսքան էներգիա ջերմային էլեկտրակայաններում ստանալու համար անհրաժեշտ կլիներ օգտագործել ավելի քան 300 տոննա վառելիք կամ 300 հազար խորանարդ մետր գազային վառելիք: Շրջակա միջավայր արտանետել ազոտի օքսիդներ եւ այլ վտանգավոր նյութեր: Կատարված է մեծ ծավալի աշխատանք եւ այն հնարավորություն կտա լուծել էներգետիկ բնագավառի ռազմավարության բազմաթիվ խնդիրներ:**

**Հայաստանն ունի արեւային էներգիայի օգտագործման մեծ հնարավորություն: 1մ2 հորիզոնական մակերեւույթի վրա արեւային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ2: Հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտԺ/մ2 ինտենսիվությամբ արեւային էներգիայի պաշարներով:**

**Հարկ է հիշել, որ վերջերս Ծաղկաձորում գործարկվեց 434,72 կՎտ հզորությամբ առաջին համակարգային «Արեւիկ» արեւային էլեկտրակայանը: Արեւային կայանն իր հզորությամբ առաջինն էր Հայաստանում: Արեւային կայանների կառուցման համար տրվել է 11 լիցենզիա 10 մեգավատ գումարային հզորությամբ: Այն իրականություն կդառնա առաջիկա երկու տարիների ընթացքում: Ներկայումս այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:**

**Հայաստանում առաջին էլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին 10 Կվտ հզորությամբ Դիլիջան քաղաքում:**

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ճրթճրթացող «ազգ-բանակը»




Կարմիր վերարկուով կինը հազիվ կարողացավ բարձրանալ երթուղային: Չափազանց գեր էր: Չնայած կնոջ ոչ տարիքն են հարցնում, ոչ գիրության վրա են ուշադրություն դարձնում, բայց դա առաջ էր, երբ կանայք ու տղամարդիկ իրավահավասար չէին՝ բոլոր առումներով:

Նստեց ամենահարմար տեղը, ինչից ու հատկապես՝ նստելուց հետո արձակած ձայնից պարզ երեւաց, որ այդ կինն իրենց տան ամենահարմար տեղում չի նստում, չնայած միշտ երազում է նստելու մասին. չեն թողնում, ավելի ճիշտ՝ չի թողնում: Նստեց ու սկսեց ճրթճրթացնել, ցելոֆանե տոպրակը, դատելով տարածվող հոտից՝ բաստուրմայով լի:

Երթուղայինը շարժվեց եւ մի սիրունատես օրիորդ խնդրեց դիմացի նստած տղամարդուն, որ վերջինս բացի պատուհանը, քանի որ անտանելի հոտ է տարածված, ծխախոտի եւ բաստուրմայի, մի խոսքով՝ ազգային-ազատագրական, ճիշտ հայկական քեֆի: Տղամարդը դեռ չէր հասցրել բացել, երբ կարմիր վերարկուով կինը թեքվեց դեպի օրիորդն ու ասաց. «Կեթաս ձեր տունը կբացես պատուհանը էս ցրտին: Երեւում ա արյունդ եռում ա, լավ տեղից ես գալիս»: Աղջիկը, բոլորովին չշիկնեց, փոխարենը պատասխանեց. «Գիտե՞ք, դատելով նրանից, թե ինչ հոտ է բուրում ձեր տոպրակից, այդ դուք եք լավ տեղից գալիս»: Կինը թեքվեց դեպի աղջիկն ու այդպես մնաց մի հինգ րոպե. ճիշտ այդքան խոսում էր, ավելի ճիշտ՝ բղավում, ավելի ճիշտ՝ հայհոյում: «Բանա եղե՞լ», հարցրեց վարորդը, ով միջինից բարձր տարիքի տղամարդ էր՝ չսափրված, կանգնեցնելով մեքենան: «Դու ճամփիդ նայի, չէթանք մեռնենք իզուր տեղը», կինը հասցրեց նաեւ վարորդին պատասխանել: Վարորդը հլու հնազանդվեց, ինչից պարզ երեւաց, որ տարիների փորձ ունի: Ապա միացրեց ռադիոն: Լուրեր էին, մեկնաբանը հայտնեց, որ այսօր Տավուշում... երեք զոհ ունենք: Սկսվեց վայ-վույը: Կարմիր վերարկուով կինը, արդեն դեմքի կատարյալ բարեգութ արտահայտությամբ, ի լուր երթուղայինի ժողովրդի հայտնեց, որ երեխեքը, նկատի ունի սահման պահողներին, լվացվելիս են եղել ու անասունները, նկատի ունի՝ ոչխարներին, հարձակվել են ու միամիտ երեխեքին փրթել: Կինն այդպես էլ ասաց՝ փրթել: Վայ-վույը կրկնապատկվեց: Մի երիտասարդ կին, հանկարծ ասաց՝ «Վայ թաղեմ Ձեզ», ու քանի որ մինչ այդ խոսում էր հեռախոսով, պարզ չեղավ, թե «թաղեմ ձեզ» ասելով տիկինն ո՞ւմ ի նկատի ունի՝ ադրբեջանցինե՞րին, թե՞ նրանց, ում հետ հեռախոսով խոսում էր, գուցե նրանց, ում մասի՞ն էր հեռախոսով խոսում: Ինչեւէ: Վարորդը մտավ թեմայի մեջ: «Արա, մարդ չի հասկանում ի՞նչ անի, հելնենք թողենք տուն-տեղ եթա՞նք, թե ի՞նչ անենք», վարորդն էր: Կինը՝ կարմիր վերարկուով, արձագանքեց. «Այ մարդ, տո դու սկի Ղարաբաղի տեղը գիտե՞ս, որ գնում ես, ավտոդ քշի, չեթանք մեռնենք: Հենա տղես Ղարաբաղում ա, ամեն օր զանգում ա, ամեն օր կրակում են, ամեն օր մարդ են սպանում, ամեն օր...»: «Թաղեմ ձեր գլուխը», կրկին երիտասարդ անծանոթ կինն էր, ով այս պատմության մեջ հայտնի դարձավ միայն իր այս երեք բառով՝ «թաղեմ ձեր գլուխը», բայց իրոք, տեսնես ո՞ւմ...

Վարորդը, կարմիր վերարկուով կնոջ խոսքերից հետո կանգնեցրեց մեքենան ու թեքվեց դեպի կինը: «Քույրիկ ջան, ինչ-որ խնդիր կա՞: Դու ինձ ճանաչո՞ւմ ես»: «Վարորդ ջան, նա սկի չգիտի, որ Տավուշը Ղարաբաղում չի, ձեզ որտեղի՞ց ճանաչի», երիտասարդ աղջիկն էր, ում արյունը եռում էր իբր, կամ ինչո՞ւ իբր... Կինը նորից սկսեց բղավել, ընդ որում իր վրա հարձակված բոլոր կողմերի վրա, չմոռանալով ամեն նախադասության մեջ հիշեցնել, որ իր որդին Ղարաբաղում է...: «Ես կռված տղա եմ, էս ձեռքիս երկու մատը Ղարաբաղում եմ կորցրել, էլի հարցեր ունե՞ս», վարորդն էր: Քար լռություն տիրեց: Անգամ կարմիր վերարկուով կինը լռեց: Նա հո չգիտե՞ր եւ իրականում ոչ ոք երթուղայինում հո չգիտեի՞ն, որ վարորդը ոչ թե Ղարաբաղում կռվել է, այլ բենզինի գործ է արել՝ պատերազմի ժամանակ, ինչի կանիստրներից մեկն էլ ընկել է ձեռքին, երկու մատը կոտրել, հետո վարակ է անցել, հետո բժիշկները հեռացրել են մատերը... Մի խոսքով, ամեն հերոսի մասին չէ, որ մենք ամեն բան իմանում ենք, ավելին, ոչ մի հերոսի մասին մենք ամեն բան չգիտենք, ու դա հրաշալի է, քանի որ հակառակ պարագայում հազիվ թե հերոս ունենայինք:

Երեկոյան, երբ այս երթուղայինի ողջ անձնակազմը, այդ թվում վարորդը, տանն էին, ոմանք միս էին աղում, օրինակ վարորդը, ոմանք բլինչիկ էին փաթաթում, օրինակ կարմիր վերարկուն հանած տիկինը, հանկարծ վերջինիս բջջայինը զանգեց: «Վայ, մինուճարս ա», բացականչեց կինն ու թռավ հեռախոսը վերցնելու: Իրոք մինուճար որդին էր, ով արդեն հինգ տարուց ավելի ապրում ու երբեմն աշխատում էր Կիսլավոդսկում, եւ ամեն տարի, երբ զինկոմիսարիատից գալիս էին նրանց տուն, մայրը հպարտ ու անվախ հայտարարում էր՝ «Իմ տղեն ստեղ չի, իրա տեղը ինձ տվեք, կարա՞ք»:

Զինկոմիսարիատից եկածները թողնում-հեռանում էին, չնայած զինկոմիսարիատում մի քանի հոգի կային, ովքեր գիտեին, որ տղան Կիսլավոդսկում է, կոնկրետ հասցեն էլ գիտեին, փող ուղարկելու օրերն էլ...

Այսպես ապրում էր մի երթուղային դարձած ազգը, որը շուտով ազգ-բանակ է դառնալու: Հրացաններով, միս ուտելով եւ Կիսլավոդսկում:

# Դեւը ու հրեշտակը Հայաստանի հետ

Նոյեմբերի 15-ին Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում Սարյանի գույներով բացվել են Ռուսաստանում Հայաստանի մշակութային օրերը: Օրերի բացմանը մասնակցել են նախագահներ Սարգսյանն ու Պուտինը: Ի դեպ, վերջիններս նաեւ հանդիպել են, առանձնազրույց են ունեցել, քննարկել են հայ-ռուսական մեծ օրակարգը, ԵԱՏՄ շրջանակներում համագործակցությունը, այնուհետեւ տարածաշրջանային առկա խնդիրները: Բայց ամեն դեպքում, ՀՀ նախագահի՝ Մոսկվա կատարած այցի ամենակարեւոր դրվագն այն է, որ Տրետյակովյան պատկերասրահում երկու նախագահների մասնակցությամբ բացվել են անծայրածիր Ռուսաստանում փոքրիկ, բայց ծովից ծով Հայաստանի մշակութային մեծ օրերը, ավելի ճիշտ՝ փոքրիկ Հայաստանի՝ ծովից ծով մշակույթի օրերը: Մի կարեւոր բան էլ. Պուտինը Սարգսյանին է հանձնել Հայաստանում Ռուսական թանգարանից գողացված՝ Միխայիլ Վրուբելի «**Դեւը եւ հրեշտակը Թամարի հոգու հետ**» կտավը: Ի դեպ կտավը վերադարձնելու խոստում ՌԴ նախագահը տվել էր դեռեւս այս տարվա մարտին, սակայն այն ժամանակ դեռ կտավը վերականգնված չէր:

Նույն օրը ՌԴ նախագահը ուղերձ է հղել Ռուսաստանում եւ Նոր Նախիջեւանում Հայ առաքելական եկեղեցու թեմի 300-ամյակի առիթով: Պուտինն ընդգծել է, որ Ռուսաստանում Հայ եկեղեցու թեմը մեծ ներդրում ունի երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում: Իմիջիայլոց, բացի այս հոբելյանից, ռուս-հայկական բարեկամությունը նշում է երկու հոբելյան եւս. Հայաստան-Ռուսաստան **բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին** համաձայնագրի 20 եւ **ՀՀ-ՌԴ դիվանագիտական հարաբերությունների հաստատման** 25-ամյակները: Ուշագրավ է, որ փաստորեն անկախության առաջին հինգ տարիներին Ռուսաստանի հետ միայն դիվանագիտություն ենք արել, ոչ թե նաեւ դիվանագիտություն, համագործակցություն եւ փոխադարձ օգնության ցուցաբերում: Ինչեւէ:

Ցավոք սրտի ո՛չ ՀՀ նախագահի պաշտոնական կայքը, ո՛չ էլ Կրեմլը չեն նշել, որ նախագահներ Սարգսյանն ու Պուտինը գոնե միայն Տրետյակովյան պատկերասրահո՞ւմ բարձր տրամադրություն են ունեցել, մինչդեռ սա շատ կարեւոր է: Բանն այն է, որ նախքան Սերժ Սարգսյանը աշխատանքային այցով կլիներ Ռուսաստանում, պաշտոնական այցով այդ երկրում էր Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Թուրքիայի նախագահն ու Պուտինը Սոչիում պետք է խոսեին մեկ ժամ, բայց նրանց առանձնազրույցը տեւել է, ուշադրություն, 4 ժամ, ընդ որում ե՛ւ Թուրքիայի նախագահի, ե՛ւ ՌԴ նախագահի պաշտոնական աղբյուրները նշում են, որ հանդիպումից հետո նախագահներն ունեցել են բարձր տրամադրություն: Ավելին, Պուտինն անձամբ ասել է, որ Թուրքիայի նախագահի հետ չքննարկված հարց իրենք այլեւս չունեն, եւ որ այդ երկրի հետ ՌԴ-ի գործակցությունն ամբողջովին վերականգնված է, իսկ Էրդողանն ասել է, որ Ռուսաստանի հետ Թուրքիայի հարաբերությունները խորանում են րոպե առ րոպե: Այսինքն հիմա ավելի խորն են, քան բուն հանդիպման պահին: Ամանորին էլ ավելի խորն են լինելու, քան հիմա, աշխարհում ամենախորը՝ Բայկալ լճի պես:

Հետաքրքրական է, որ նախքան Պուտին-Էրդողան հանդիպումը ՌԴ նախագահի խոսնակ **Դմիտրի Պեսկովը** հայտարարեց, որ նախագահները քննարկելու են Սիրիայի հարցը: Հանդիպումից հետո, սակայն, նախագահները հայտարարեցին, որ իրենք քննարկել են ոչ միայն Սիրիայի հարցը, այլեւ երկկողմ գործակցությունն ամրապնդելու եւ ընդլայնելու հրամայականը, եւ, ուշադրություն, տարածաշրջանում առկա խնդիրները: Ընդ որում, ինչպես Պուտինն է ասել՝ **Թուրքիայի նախագահի հետ ունեցել ենք անկեղծ զրույց՝ առանց դիվանագիտական կեղծ ավելորդությունների**: Այսքան հարց ու այսկերպ քննարկելուց հետո էլ նրանք, ինչպես պաշտոնապես է հայտարարվում, ունեցել են բարձր տրամադրություն, ճիշտ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի պես, որը Պուտին-Էրդողան հանդիպումից հետո, ճիշտ ՀՀ նախագահի՝ Ռուսաստան կատարած այցի օրը, **Ենի Ազարբայջան** կուսակցության համագումարում հայտարարեց, որ «**Ադրբեջանը երբեք թույլ չի տա, որ հայկական երկրորդ պետություն լինի իրենց բնիկ տարածքներում**»: Իմիջիայլոց, պատմական տարածքների եւ պատմության հետ կապված նշեմ, որ ՀՀ նախագահը Ռուսաստանում Հայաստանի օրերի շրջանակներում Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի առաջնորդարան Սուրբ Պայծառակերպություն եկեղեցում դիտել է Ռուսաստանում հայ առաքելական եկեղեցու թեմի 300-ամյակին նվիրված «**Բիբլիական երկիր Հայաստան**» ցուցահանդեսը: Նախագահը նաեւ մասնակցել է եկեղեցու տարածքում հայկական ժամանակակից խաչքարերի ցուցահանդեսին, բայց քանի որ այդ խաչքարերը ժամանակակից են, չենք կարող դրանք ներկայացնել Ադրբեջանի հինավուրցության համատեքստում:

Ինչեւէ, Պուտին-Էրդողան, ապա Պուտին-Սարգսյան հանդիպումներից հետո, որոնցից առաջինն անցել է առանց դիվանագիտական կեղծ ավելորդությունների, իսկ երկրորդը՝ առանց թիթիզ ձեւակերպումների, խիստ պաշտոնական, ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը պատրաստվում է այցելել Երեւան, ապա Բաքու: Լավրովն ինքն է հայտարարել, որ առաջիկա շաբաթվա սկզբին ինքն այցելելու է տարածաշրջան: ՌԴ ԱԳ նախարարը ասել է, որ իր այցը պայմանավորված է Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ՌԴ-ի դիվանագիտական հարաբերություններ հաստատելու 25-ամյակներով, բայց հաշվի առնելով, որ այդ երկու հարաբերություններն էլ հաստատվել են՝ այո, 25 տարի առաջ, բայց ապրիլին, ապա կարելի է ենթադրել, որ Լավրովը այցելում է բոլորովին այլ նպատակով: Ինքն ի դեպ փոքրիկ հուշում է արել՝ նշելով, որ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հետ քննարկելու է տարածաշրջանում առկա խնդիրները ու ժնեւյան պայմանավորվածությունների կատարման ընթացքը:

Ես, իհարկե, չեմ պնդի, որ ԼՂ հարցով բանակցություններում ինչ-որ բան է տեղի ունենում, քանի որ դա ակնհայտ է: Հայտնի չէ մեկ ուրիշ բան, ինչո՞ւ Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հերթական հանդիպումից հետո ոչ առաջինը, ոչ երկրորդը, ոչ Հայաստանում, ոչ Ռուսաստանում բարձր տրամադրություն չի լինում, իսկ օրինակ Թուրքիա-Ռուսաստան բարձր մակարդակի հանդիպումներից հետո այս երկու երկրներում ու նախագահների մոտ լինում է: Չէ՞ որ ե՛ւ մենք ռուսների հետ, ե՛ւ ռուսները թուրքերի հետ քննարկում ենք տարածաշրջանում առկա խնդիրները... Ավելին, բացի խնդիրները քննարկելուց, մենք նաեւ մշակութային օրեր ենք անցկացնում Ռուսաստանում, եւ արդեն 20 տարի է, ինչ պայմանագրով հաստատված բարեկամներ ենք՝ փոխադարձ օգնություն ցուցաբերելու գրավոր պարտավորությամբ:

Ամեն դեպքում Հայաստանից գողացված կտավը Ռուսաստանը վերադարձնում է, սակայն միայն կտավը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 6



# ԲԱՑ ՆԱՄԱԿ

*Մոնթրէալ, 9 Նոյեմբեր 2017*

Պատուարժան Խմբագրութիւն ԱԶԳի,

Ուշադրութեանս յանձնուեցաւ թէ ձեր համացանցային հրատարակութեամբ 26 Հոկտեմբեր 2017ին «հրատարակած» էք հետեւեալ խորագրով ՆՈՐ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ ԴՐՈՅԻ ԱՆՑԵԱԼԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ գրութիւն մը որ թարգմանած էք անգլերէն «բնօրինակ»է մը որ կը կրէ ստորագրութիւնս:

Պիտի ուզէի ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալ կէտերը.

Ա) Այն «բնագիր»ը որմէ կատարած էք թարգմանութիւնը արդիւնքն է շաբաթներու վրայ տեւող երկար համացանցային բանավէճերու, ՓԱԿ մտաւորական խմբակի մը որ կը կոչուի 24April Yahoo Group: Որպէս այդ գրութիւններուն հեղինակը՝ ես ձեզի չեմ արտօնած առնել որեւէ մասնիկ մը անոնցմէ եւ հրատարակել: Որքան գիտեմ՝ ձեր թղթակիցներէն ո՛չ ոք մաս կը կազմէ այդ խմբակին, եւ ուրեմն ձեր «բնագիր»ը ստացած էք զարտուղի միջոցներով:

Բ) Աւելին, որպէս պատասխանատու լրագրամիջոց, ձեր թղթակիցներէն ո՛չ ոք նոյնիսկ կապի մէջ մտած է ինծի հետ ինձմէ նոյնիսկ արտօնութիւն խնդրելու, կամ ալ տեսակէտս ունենալու այս հարցով:

Գ) Ձեր հրատարակած նիւթը ամբողջութիւնը չէ այլ միմիայն մասնիկ մըն է ընդհանուր բանավիճային նիւթերէն, եւ ուրեմն իր նիւթային ենթահողէն ամբողջովին կտրուած է եւ կը փորձէ ներկայացնել բոլորովին գաղափարայնօրէն մեկուսացուած իրավիճակ մը (out of context):

Դ) «Թարգմանուած» գրութիւնը որ երբեմն յոռի թարգմանութիւն մըն ալ է, ունի ձեր կողմէն տեղադրուած յառաջաբան մը ինծի վերագրելով խօսքեր որ ես չեմ ըսած: Օրինակ, ես ՈՉ մէկ ակնարկ ունեցած եմ Դրօյի «դրամասիրութեան» մասին, կամ ալ թէ «մարտահրաւէր կը կատարեմ հանրութեան ինծի դէմ ճակատելու»: Այդպիսի բան գոյութիւն չունի: Մարտահրաւէրի խօսակցութիւնը կը վերաբերի ինծի հետ բանավէճի մասնակիցներուն որոնց հետ ունեցած եմ եւ ունիմ թէ՛ տարակարծութիւններ եւ թէ՛ ուժեղ մտաւորական կապեր տարիներու վրայ երկարող մեր համացանցային «խօսակցութիւններէն»: Կրկին կը շեշտեմ թէ անձնական եւ հանրութեան ՓԱԿ գրութիւններու հրատարակութիւնը առանց հեղինակի հաւանութեան եւ զանոնք իր ենթահողէն դուրս հանելով, պարկեշտ մասնագէտներու վայել չէ եւ անընդունելի է: Ձեր ընթերցողը՝ երբ կը տեսնէ նմանօրինակ յօդուածներ, կ՛ակնկալէ նուազագոյն լրագրական պարտաճանաչութիւն, որ այդ տողերուն հեղինակին հաւանութիւնն է, որ չէք ունեցած եւ չունիք:

Ե) Իմ անձնական համոզումներս Դրօյի անձին նկատմամբ եւ իր պատմական արժեւորումը ինծի կը պատկանին, ատիկա իմ մտաւորականի եւ ազատ մտածողի իրաւունքս է, սակայն ցաւալիօրէն անոնք կը ներկայացուին որպէս մաս մը եւ դիրքորոշում մը այսօրուան Հայաստանի մէջ Մայիս 28ի անկախութեան 100-ամեակի վիճաբանութիւններու շարքին: Արդ, կ՛ուզեմ յստակօրէն հաստատել, թէ ես ոչ մէկ ձեւով կապ ունիմ այն բոլոր կազմակերպութիւններուն կամ շարժումներուն հետ որոնք սոյն հարցով կողմնակալ օրակարգ մը կը հետապնդեն: Նաեւ՝ ես ո՛չ հետաքրքրուած եմ ինծի վերագրուած սրբապղծութեամբ եւ ո՛չ ալ կ՛ուզեմ խարամներ բանալ մեր ազգային իրողութենէն ներս, որոնք կը համարեմ վնասակար ու պառակտիչ:

Ուրեմն, ներողամտութիւնը կը հայցեմ անոնց, որոնք իմ փակ բանավէճերու անձնական գրութիւններս տեսնելով՝ ենթադրած են, որ իմ կարծիքներս հանրութեան ուղղուած են կամ նպատակադրուած յարձակում մըն են մեր պատմական անձնաւորութիւններու վրայ, նպատակս ո՛չ ոք վիրաւորել է: Կ՛ուզեմ ընդգծել թէ Հայաստանի Ա. Հանրապետութեան հարիւրամեակի արժանաւոր տօնակատարութեան կողմնակից եմ եւ միշտ ալ եղած եմ թէ՛ հանրօրէն թէ՛ անձնապէս: Մայիս 28ի հանդէպ այս դիրքը ունեցած եմ Հայաստանի անկախացումէն շատ առաջ իսկ, անոր Սովետական շրջանին ալ, որուն մասին կրնան վկայել զիս մօտէն ճանչցողները:

Զ) Տասնամեակներու վրայ ընթացող իմ ազգային ծառայութիւններուս գլխաւոր առանցքները եղած են միտքի ազատութիւնը, մարդկային իրաւունքները, ընկերային արդարութիւնը, քննադատական միտքի զարգացումը նամանաւանդ հանդէպ մեր պատմութեան, եւ առողջ գիտական եւ մտաւորական հասունութիւնը՝ կարենալու համար, նամանաւանդ երբ իրարու հետ համաձայն չենք, ազատօրէն ուսումնասիրել եւ հանրօրէն վիճիլ մեր բոլոր պատմական հանգրուաններուն մասին: Մտահոգ եղած եմ միշտ ու կը մնամ թէ մեր ժողովուրդի վերապրումն իսկ կապուած է այս հարցերուն, ինչպէս աշխարհի բոլոր յառաջացած ազգերու պարագային: Առ այդ, այն «բացայայտութիւնը» որուն կ՛ակնարկէք մատնանշում մըն պատմական արխիւի մը որ գոյութիւն ունի արդէն տասնամեակէ մը ի վեր եւ որ պէտք է ենթարկուի մասնագիտական վերլուծման: Ես քաջածանօթ եմ անոր պարունակութեանց, սակայն ուրիշներ ալ պարտին զանոնք ուսումնասիրել, ներկայացնել, բանավիճիլ եւլն: Միմիայն նմանօրինակ մօտեցումով մը կրնանք ապահովել անցեալէն դասեր առնելու մեր կարողութիւնը:

Է) Անցեալէն դասեր առնելը կ՛ենթադրէ նախանձախնդիր ըլլալ բոլոր պատմական նորանոր աղբիւրներուն մասին որոնք միշտ աւելի կը լուսաւորեն տարբեր պատմական դէպքեր եւ իրավիճակներ: Մեր ազգային բոլոր քաղաքական շարժումներն ալ վստահաբար ունեցած են մութ կապեր կոչուին անոնք ՍԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ թէ ուրիշներ: Այդ մաս կը կազմէ ծանր ժամանակներուն որոնցմէ անցած է մեր ժողովուրդը: Որպէս հայագիտական նիւթերու դասախօս, այդ պատճառաւ իսկ ակնարկած էի գրութեանս մէջ թէ մենք նաեւ պէտք է ուսումնասիրենք ուրիշ պետութիւններու գաղտնի սպասարկութեանց արխիւներն ալ, անշուշտ երբ որ անոնք տրամադրելի դառնան, որովհետեւ բոլորին մասին բոլոր մանրամասնութիւնները մաս կը կազմեն մեր պատմութեան: Ատիկա գիտական պարտականութիւն մըն է զարգացնելու համար մեր ազգային պատմաքննադատական միտքը որ նաեւ փաստը պիտի հանդիսանայ անոր մակարդակին եւ հասունութեան: Մեր ազգին պատմութեան բոլոր էջերը կը պատկանին մեզի բոլորիս, առանց «մենք եւ միւսները» բարդոյթներու:

Նկատի ունենալով վերոյիշեալ կէտերը՝ ձեզմէ կը խնդրեմ որ անյապաղօրէն վերացնէիք սոյն յօդուածը ձեր կայքէջէն, հրատարակէիք այս նամակը եւ պաշտօնապէս ու հանրօրէն ներողութիւն խնդրէիք ինձմէ եւ ձեր ընթերցողներէն կատարուած լրագրամիջոցային սկզբունքային խախտումներուն համար:

Սոյն նամակի օրինակները պիտի ղրկուին բոլոր գանատահայ մամուլի աղբիւրներուն եւ տրամադրելի են համացանցային այլազան ակումբներու որոնք պատրաստ են զայն ցրուելու հանրութեան:

Բարեկամօրէն՝

ՎԻԳԷՆ Լ. ԱԴԴԱՐԵԱՆ

# Պատասխան՝ նամակին

Կողքի սյունակներում նույնությամբ հրապարակում ենք, միայն ուղղագրական մի քանի սխալների սրբագրմամբ, Մոնրեալից մեզ ուղարկված «Բաց նամակը», որի հեղինակի անգլերեն գրությունից հոկտեմբերի 27-ի մեր համարում թարգմանաբար մի հատված էինք մեջբերել խմբագրական ներածականով, որը վերաբերում էր 20-րդ դարի առաջին կեսի մեր ամենահայտնի ռազմաքաղաքական գործիչներից մեկի՝ Դրաստամատ Կանայանի (Դրո) հակասական կերպարին: «Նոր բացահայտումներ Դրոյի անցյալի վերաբերյալ» խորագրով այդ հոդվածում չակերտներում ներկայացրել էինք նամակագրի՝ պրն Վիգեն Լ. Ադդարյանի արխիվային պրպտումների արդյունք վկայություններ Դրոյի՝ ամերիկյան կենտրոնական հետախուզական ծառայության (CIA) գործակալ լինելու վերաբերյալ, մինչ bolt տառատեսակով ներկայացված մեր խոսքը վերաբերում էր Դրոյի նկարագրին՝ արկածախնդրություն, դրամասիրություն եւ այլն:

Խոստովանենք, որ «**Ազգ**»ի հրապարակած այդ նյութը զանազան արձագանքների արժանացավ, մի քանի հեռախոսային եւ մեկ գրավոր: Ոմանք ոչ մի նորություն չէին գտել պրն Վ.Լ. Ադդարյանի վկայության մեջ եւ պնդում էին, որ Դրոն ոչ միայն ամերիկյան, այլեւ ֆաշիստական Գերմանիայի եւ նույնիսկ բոլշեւիկյան Ռուսաստանի գործակալ է եղել: Ուրիշներ մեզ մեղադրում էին կուսակցական կողմնակալության մեջ: Տակավին ուրիշներ, մեր դաշնակցական բարեկամներից, որոնք մտել-պրպտել էին պրն. Վ.Լ. Ադդարյանի մատնանշած կայքէջը, գտնում էին, որ նրա հայթայթած տվյալները ոչ թե գործակալների գաղտնազերծված պաշտոնական ցուցակներից են, այլ՝ զանազան զեկույցներից (reports): Իսկ միակ գրավոր արձագանքի հեղինակը՝ ՀՀ պահեստազորի գնդապետ Մնացական Խաչատրյանը, որի հոդվածը կհրապարակենք առաջիկայում, ամբողջովին «մաքրագրում» էր Դրոյին...

Մինչդեռ նամակագիր պրն Վ.Լ. Ադդարյանը մեզ մեղադրում է մահացու բոլոր մեղքերի մեջ՝ անպարկեշտություն, զարտուղի ճանապարհներով նյութը ձեռք բերելու, չարտոնված հրապարակում անելու, իր չգրածը իրեն վերագրելու, իր մտքերը կոնտեքստից դուրս ներկայացնելու, այլ խոսքով՝ լրագրողական վարքականոնը խախտելու, ընդհուպ՝ անհատական մի պարագա, որպիսին Դրոյի պարագան է, ընդհանրացնելով՝ Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին ընդառաջ Սփյուռքում ծավալված բանավեճի պարունակի մեջ տեղադրելու եւ այլ մեղքերի մեջ, եւ պահանջում է ներողություն խնդրել...

Բնականաբար մենք չենք պատրաստվում ներողություն խնդրել, թեեւ 26 տարվա պատմություն ունեցող մեր թերթը բազմիցս տվել է ապացույցը այդ տեսակետից բարդույթներ չունենալու մասին: Միայն ցավում ենք, որ ակամա, անգիտակցաբար, «մուտք ենք գործել» անհյուրընկալ մի շրջանակից ներս եւ ականջալուր եղել «ներքին» խոսակցությանը... Անշուշտ բոլորովին այլ կլիներ մեր վերաբերմունքը, եթե «փակ» շրջանակի դռան վրա գրված լիներ «չխանգարել» (don't disturb) արտահայտությունը կամ «խորհրդապահական» (confidential) նախազգուշացումը:

Մերժելով մերժում ենք նամակագրի պնդումները իր խոսքերը կոնտեքստից դուրս՝ «ենթահողէն ամբողջովին կտրուած» ներկայացնելու մասին: Ինչպես վերեւում ասվեց, մենք հստակորեն, առանձին տառատեսակով եւ չակերտների օգտագործմամբ անջատել ենք խմբագրության խոսքը հեղինակի բերած տվյալներից, անշուշտ մեզ վերապահելով դրանք մեկնաբանելու իրավունքը: Եվ այս առթիվ դարձյալ պնդում ենք՝ Դրոն հակասական կերպար է. նա ե՛ւ Բաշ-Ապարանի հերոսն է, ե՛ւ հայոց բանակի թիկունքը թաթար-ազերիական հրոսակներից մաքրողը, ե՛ւ ֆաշիստների հետ դավաճանական գործարքի մեջ գտնվողը, ե՛ւ 1956-ին Սիրիայում հօգուտ Մ. Նահանգների եւ Իսրայելի լրտեսական ցանցի կազմակերպիչը: Ու որպեսզի մեր ասածները կրկին անգամ չվերագրվեն կուսակցական կողմնակալությանը, ստորեւ հրապարակում ենք մի փոքր վկայություն նախկին դաշնակցական, «Նայիրի» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր, գրող Անդրանիկ Ծառուկյանի «Մեծերը եւ... միւսները» գրքից:

Այո, համաձայն ենք նամակագրի այն մտքի հետ, որ մեր ավանդական մյուս կուսակցությունների՝ ՌԱԿ-ի եւ ՍԴՀԿ-ի մեջ նույնպես պետք է եղած լինեն, չմոռանալով նաեւ Հայ եկեղեցու որոշ սպասավորներին, տարբեր երկրների գաղտնի ծառայությունների հետ համագործակցողներ, որոնց վերաբերյալ նյութեր ու տվյալներ երեւան հանելն ու քննելը մեր նոր սերնդի պարտականություններից է, ոչ միայն այդ գործիչների կենսագրությունը բացահայտելու եւ ի ցույց դնելու, այլ՝ մեր ժողովրդի վերջին 100-150 տարվա պատմությունը ավելի ճիշտ հասկանալու եւ մեկնաբանելու անհրաժեշտությունից մղված, հեռո՛ւ հերոսապաշտումների եւ առասպելաբանության այն շղարշից, որը այսօր պատել է մեր ժողովրդի պատմության լույսն ու ստվերը:

Այս առիթով չենք կարող գոհունակություն չհայտնել սակայն, որ հեռավոր Կանադայում եւ այլուր մի խումբ հայ տղաներ, թեկուզ «փակ» շրջանակ կազմած, իրար միջեւ եւ իրար հետ «ներքին» խոսակցություններ, մտքեր ու տվյալներ են փոխանակում մեր մոտավոր անցյալի դեպքերի ու դեմքերի մասին՝ պատմական ճշմարտություններ բացահայտելու, մեր ազգային ձախողումներն ու նվաճումները, նաեւ մեր ապագան ավելի լավ հասկանալու նպատակադրումով:

Միայն անհասկանալի է այս «ներքին» ամոթխածությունը, կուսակցական եւ ոչ կուսակցական «կարգուկանոնից» դուրս չգալու այս փակվածությունը, որի արտահայտություններից մեկն էլ պետք է համարել կողքի սյունակներում հրապարակվող նամակը, բա՛ց նամակը:

*«ԱԶԳ»*

## Ա. ԾԱՌՈՒԿՅԱՆԸ ԴՐՈՅԻ ՄԱՍԻՆ

**Ամէն բանէ առաջ խիզախ եւ անվախ մարտիկ եղաւ Դրօն, անձնուէր ֆետայի մը, բայց ոչ այն տեսակէն, օրինակ, Անդրանիկի մը կամ Մուրատի մը խմորէն, սակաւապէտ, եարի փոխան զէնքը գրկող ֆետային, որ մի տեղ հանգիստ քուն չունէր, այլ ֆետայի մը՝ որ կը սիրէր զէնքին հետ եարն ալ գրկել, կը սիրէր պարիլ ճոխ կեանքով, ցարական իշխանի մը փարթամ կենցաղով: Եւ այդ շռայլ կենցաղասիրութիւնը մղիչը եղաւ, որ մեր ազգային Աքիլլէսը խոցելի կրունկ մը ունենայ: Անջնջելի երկու բիծեր պիտի արատաւորեն շքեղօրէն առնական իր դիմագիծը: Առաջինը՝ երկրորդ պատերազմի ընթացքին հայկական օժանդակ ջոկատներ կազմելը գերման բանակի կողքին ընդդէմ Սովետական ուժերուն, որ աւելի բարոյական արատ մը եղաւ իրեն համար, քան թէ Հայաստանին հասցուած վնաս մը, ու երկրորդը՝ Սուրիա-Լիբանանի մէջ լրտեսական ցանցի մը կազմակերպութիւնը Ամերիկայի հաշոյն, որուն հետեւանքով բարգաւաճ գաղութ մը քայքայուեցաւ, Հալէպի մէջ պատճառ դառնալով որ տասնեակներով ընկերներ ձերբակալուին, բանտերու մէջ խոշտանգուին կամ երկրէն փախուստ տան, ստեղծելով տասնեակ հազարաւորներու հոսանքը Հալէպէն դէպի Պէյրութ...**

**Երկու պարագաներուն ալ, Գերմանիան ըլլար վճարողը թէ Ամերիկան, մեծ գումարներ շարժման մէջ մտան եւ մատակարարը եղաւ ինքը, Դրօն...**

*«Մեծերը եւ... միւսները», Պէյրութ, 1992, էջ 182-183:*

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 7



# Լիբանան - վերադարձի երկիր

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրականագետ, արվեստաբան

*Մի քանի օրից, նոյեմբերի 22-ին, Լիբանանը նշում է իր անկախության տարեդարձը: Տեւական խաղաղություն եւ կայուն բարգավաճում մաղթելով այդ սիրելի երկրին՝ տպագրում ենք հուշառաս մի հոդված՝ արտատպելով Հայաստանում Լիբանանի դեսպանության նախաձեռնությամբ եւ մեր բարեկամ Գեւորգ Յազըճյանի կազմած գրքույկից:*

Վայրեր կան, որոնցից միշտ ափսոսանքով ես բաժանվում եւ հեռանալուց հետո ուզում ես անմիջապես վերադառնալ: Դրանք ձգողական անդիմադրելի ուժի, անբացատրելի հմայք ունեցող վայրեր են, ուր միշտ ուզում ես վերադառնալ: Ինձ համար այդպիսի վայր, այդպիսի երկիր է Լիբանանը...

❖❖❖

Իրերի պատեհ բերումով սրանից մոտ երկու տասնամյակ առաջ, երեւանյան կոշտ ձմեռից դուրս գալով, ես հայտնվեցի Լիբանանում: Մինչեւ Լիբանանը տեսնելը ես, ով գիտի, հազար անգամ արտասանել եմ Լիբանան բառը. Արմենակ Շահմուրադյանի «Կիլիկիա»-ն էինք լսում եւ հետը երգում էինք՝ «Լեռն Լիբանան եւ իր մայրեր...»: Եվ հիմա ես եկել էի հանդիպելու մեզ համար անիրական թվացող երկրի հետ: Մինչ այդ ես, խորհրդային երկրում ծնված, խորհրդային երկիրը տեսած, այդ երկրում ապրած անձս (սա ինչ-որ բան ասում է) եղել էի արտասահմանյան երկրներում՝ Լեհաստան, Հնդկաստան, Մալայզիա, Սինգապուր, Ամերիկա... Եվ բնական է, շատ բանի վրա զարմացել եմ, շատ ու շատ բաներով հիացել եմ, բայց վերադարձել եմ, մխրճվել առօրյայի մեջ եւ... մոռացել:

Լիբանանի պարագային ամեն բան այլ կերպ եղավ:

Նախ ասեմ, որ բախտս բերեց, որ Լիբանանում ես ծանոթացա մի հրաշալի եւ բացառիկ անձնավորության՝ նկարիչ ու բազմաշնորհ Շահե Տեր-Հարությունյանի հետ: Շահեն կյանքին ու բնությանը սիրահարված մարդ է: Ես չգիտեմ, չեմ էլ կարող պատկերացնել, թե Լիբանանում կա՞, ապրո՞ւմ է մի երկրորդ անձնավորություն, որն այդքան մանրամասնորեն գիտի Լիբանանի ամեն մի գյուղը, ամեն մի անկյունը եւ այդքան մանրամասնորեն է սիրում այդ երկիրը:

Եվ ահա Շահեն դարձավ իմ առաջնորդը իմ լիբանանյան կյանքի բոլոր ազատ օրերին: Շահեն մի փոքրիկ ավտոմեքենա ուներ, ու մեր բոլոր ազատ օրերին մենք շրջում էինք ողջ Լիբանանով մեկ, հյուսիսից հարավ, Քֆար Նունից մինչեւ Բըքֆոր: Մենք ծրագիր էինք կազմել, քարտեզ ունեինք եւ անցանք Լիբանանի գրեթե բոլոր քաղաքներով ու գյուղերով, լեռները բարձրացանք եւ իջանք գեղեցիկ հովիտները: Շահեն ինձ ցույց տվեց փյունիկյան հնագույն երկիր Լիբանանը՝ իր պատմական վկայություններով, Հռոմեական հզոր կայսրության հարուստ պրովինցիա Լիբանանը՝ անկրկնելի ու աննման, ուղղակի համաշխարհային հռչակ վայելող հուշարձաններով, ժամանակակից Լիբանանը՝ իր ողջ գեղեցկությամբ, Ադմայի նման շքեղ ու տպավորիչ բնակավայրերով:

Շահեն ինձ ցույց տվեց Լիբանանի բնության ողջ գեղեցկությունն ու հմայքը, իմ առջեւ բաց անելով Լիբանանի բնության գաղտնարանները, մատնացույց անելով մարդկանց աչքերից ծածկված, հեռու մնացած գողտրիկ անկյուններ՝ լեցուն կյանքի հրճվանքով եւ բանաստեղծությամբ: Հայտնի վայրերը բոլորը գիտեն՝ Ժայիտա, Բաալբեք, Ժբեյլ, Սուր, Սայդա... Եվ, իհարկե, լիբանանյան նշանավոր մայրիները, Բշարրեի հարեւանությամբ, Էրզում, ապա Թաննուրինում, Շուֆում... Բեքաայի արեւաշող հովիտը, Լիթանիի ձորը՝ Շուֆի բարձրությունից դիտված... Այս թվարկումը կարող եմ անվերջ շարունակել...

Բայց ես այլ վայրեր եմ ուզում հիշել... Հնարավո՞ր է մոռանալ Քֆար Հելդայի եռաստիճան ջրվեժը, անձայն, որովհետեւ մեզ՝ դիմացի լանջից ջրվեժը դիտողներիս, պարզ ու սքանչելի օրվա մեջ ձայնը չէր հասնում: Աֆկայի պաղ ջրերը, Սաննինի լանջերի ձյունհալը, Յախշուշ գետի երգեցիկ մեղեդին, Աքքարի ամրոցը, Զահլեի հարեւանությամբ, Նիհա գյուղի մոտ գտնվող հռոմեական տաճարը, Ֆարայայի խստաշունչ ձյուներն ու վարը փռված հովիտը, Ազունիեից Բարուկ ձգվող կանաչազգեստ անտառները, Ռաշայայի հնձած արտերի թախծալի գեղեցկությունը...

Անկարելի է դիմանալ գայթակղությանը եւ չհիշել Զահլեն՝ աննման, թագի ադամանդի նման շողուն ու կատարյալ Զահլեն՝ Բեքաայի նորահարսը: Զահլեի մասին ոչ խոսել է պետք, ոչ պատմել. Զահլեն տեսնել է պետք: Զահլեն արժի՛ եւ՛ պոեմ, եւ՛ վեպ, եւ՛, իհարկե, պատարագ: Զահլե հասնելու համար Շթորայից պետք է թեքվել ձախ:

Լիբանանը վայրեր ունի, որոնք մեզ՝ հայերիս համար առանձնակի իմաստ ու նշանակություն ունեն: Շթորայի անունը տվեցի. Շթորան այդ վայրերից մեկն է: Այստեղ ամառները ապրել է մեր ժողովրդի մեծ զավակներից մեկը՝ ընտիր գրականագետ եւ բանասեր, անմրցելի գրքնադաս Նիկոլ Աղբալյանը: Նա այստեղ տուն է կառուցել. իր ժամանակակիցները, ճեմարանում դասավանդած իր գործընկերները պատմում էին, թե ինչ դժվարությամբ, ինչ տառապանքով է պարզ ուսուցիչ Նիկոլ Աղբալյանը կառուցել այդ տունը... Այստեղ էլ նա կնքել է իր մահկանացուն:

Շթորայում մի օր մենք գտանք Նիկոլ Աղբալյանի տունը: Բակ մտանք: Տան դռները, անշուշտ փակ էին: Բարձրացանք երկրորդ հարկ տանող դրսի աստիճաններով: Հարկը ապակեպատ պատշգամբ-նախամուտք ուներ, ապակեպատ դռնով, որ նույնպես փակ էր: Նախամուտք-պատշգամբի ներսը պարզ երեւում էր: Մեզ առաջնորդում էր մի տարեց հայ կին, որի տունը գտնվում էր Աղբալյանի տնից մի երկու տուն այն կողմ: Կինը մեզ պատմեց, որ Աղբալյանը հենց այդ պատշգամբում է կաթվածահար վայր ընկել: Հայաստանից՝ ընտանիքից նամակ է ստացել, բացել է եւ կարդալիս կաթվածահար վայր ընկել...



Լուռ կանգնեցինք ու խոնարհվեցինք...

Տասնամյակներ էին անցել, բայց Աղբալյանի տունը անվթար կանգնած էր. թվում էր՝ տանտերը այստեղ է, մոտակայքում ինչ-որ տեղ: Սա ցույց էր տալիս, թե ինչ ազնիվ մարդիկ են ապրում Շթորայում, ինչ ազնիվ են եղել Աղբալյանի անցյալ ու ներկա հարեւանները:

Շթորան Աղբալյանով ու իր տնով դարձավ մեզ համար առանձնապես սիրելի:

Լիբանանում ես տեսա, թե ինչքան լավ են զգում իմ հայրենակիցները այս երկրում: Տասնամյակներ շարունակ Լիբանանում եղել է լիարյուն հայկական կյանք՝ ստեղծվել է մշակույթ, մշակվել է գրականություն, եղել են գրական-մշակութային, կրթական-հասարակական ազգային հաստատություններ՝ դպրոցներ եւ զանազան այլ կրթօջախներ, թատրոն եւ երաժշտություն, մամուլ եւ հրատարակչություններ, մի խոսքով՝ ամեն բան, ինչ անհրաժեշտ է ազգային կյանքով ապրող համայնքի համար: Եվ արդեն պարզ դարձավ, թե ինչո՞ւ է Լիբանանի հայությունը այդքան ջերմ սիրով կապված այդ երկրի հետ, նրա բարքերին, կյանքին, սովորություններին, լեզվին ու խոհանոցին: Եվ հասկացա, որ իմ հայրենակիցների՝ Լիբանանի հանդեպ ունեցած սերն ու առանձնակի վերաբերմունքը նույնպես ազդել են ինձ վրա, որոշակի բաժին ավելացնելով իմ վերաբերմունքին: Ես տեսա նաեւ այն խորին հարգանքը, որ Լիբանանի իշխանությունները եւ Լիբանանի ժողովուրդը ունեն հայության, Հայ եկեղեցու եւ հայ մշակույթի հանդեպ: Սա նույնպես, իր հերթին եւ իր չափով, իմ մեջ ավելացրել է Լիբանանի հանդեպ ունեցած իմ սիրո եւ հարգանքի չափը:

Լիբանանում ես շատ բան տեսա. մանրամասն պատմելու համար հարյուրավոր էջեր են պետք: Տեսա նաեւ ստվերներ եւ անցանկալի գույներ. կա՞ իր կամ առարկա, որ ստվեր չունենա: Տեսա, ասենք, Բուրջ Համմուդի հսկա աղբակույտը, որ եգիպտական բուրգերի հետ կարող է մրցել, տեսա... Բայց, ճիշտն ասած, դրանք մոռացվել են, ես Լիբանանից միայն լավ եւ գեղեցիկ պատկերներ ու զգացումներ եմ հիշում... Այնպես որ ես միշտ պատրաստ եմ Լիբանան վերադառնալու:

❖❖❖

Լիբանան այցելելուց, Լիբանանը ճանաչելուց հետո ես եղա եվրոպական եւ այլ շատ երկրներում՝ Ֆրանսիա, Իսպանիա, Բելգիա, Հոլանդիա, Իտալիա եւ այլն: Եվ այնուամենայնիվ Լիբանանը ինձ համար մնում է այն երկիրը, ուր կուզեի միշտ վերադառնալ: Դա սքանչելի գեղեցկությամբ երկիր է, ուր ապրում են ինձ շատ սիրելի մարդիկ՝ իմ ընկերներն ու բարեկամները:

Մի օր տղաս ծիծաղելով ինձ ասաց. «Հայրիկ, ինձ թվում է, թե եթե մի օր քեզ առաջարկեն ընտրություն անել՝ գնալ անծանոթ ու շատ հետաքրքրական մի երկիր կամ թե նորից, հերթական անգամ այցելել Լիբանան, դու հաստատ կընտրես Լիբանանը»:

Հաստա՛տ: Իսկապես կընտրեի Լիբանանը:

Ինձ համար Լիբանանը այն երկիրն է, ուր միշտ կուզեի վերադառնալ...

# Ո՞վ է 2018 թվականի բյուջեի պատասխանատուն

⇨1

**Վարչապետն էլ մի տեսակ համակերպվածի նման էր եւ անգամ բյուջետային ուղերձով հանդես չեկավ ԱԺ-ում, բյուջեն քննարկվում էր մեծամասնականների բացակայությամբ համարյա՝ ՀՀԿ-ից մի քանի մարդ, ՀՅԴ-ից երկու-երեքն էին ներկա լինում դահլիճում: Ընդհանուր պատկերը, մեղմ ասած, այնքան էլ մխիթարական չէր այս կառավարության համար, եթե չասենք ավելին՝ Կարեն Կարապետյանի անհավես պատասխանները ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ խոսում էին եկող տարի բոլորվին նոր կառուցվածքի ու բովանդակության կառավարման համակարգ ունենալու մասին, անկախ սահմանադրական եւ օրենսդրական փոփոխությունների կարգավորումներից: Ասել է, թե անկախ նրանից, ով է հիմա ինչ պաշտոնի՝ իրական կառավարումն այլ տեղ է նաեւ այսօր:**

**Անցած շաբաթ ԱԺ նախկին նախագահ Գալուստ Սահակյանն ասում էր, որ ԱԺ նախագահի պաշտոնի գործառույթներն այս խորհրդարանում այնքան չեն, ինչպես նախորդում՝ շատ բան որոշում է ԱԺ խորհուրդը: Սակայն եթե Ազգային ժողովի միջանցքներում կամ բուֆետում տեսնեք միասին երեւացող Արա Սաղաթելյանին, Արման Սաղաթելյանին, Սամվել Ֆարմանյանին, Հրայր Թովմասյանին, կհասկանաք, որ ԱԺ-ն, անկախ ԱԺ խորհրդից, նույնպես ավելի խորքային կառավարում ունի, ու նախագահականի դեսանտն այստեղ ոչ միայն իր պաշտոնեական գործառույթները լավագույնս իրականացնող պաշտոնյաների տեսքով է, այլեւ արտալիազորություններով: Այնպես որ՝ ԱԺ-ն, իր նոր դերով ու լիազորություններով ապահով ձեռքերում է, իսկ քվեարկությունները, որոնցով այստեղ հարցեր պիտի վճռվեին, ամենավերջին գործիքն են: Սա էլ ընդհանուր համատեքստում ենք դիտարկում:**

**Իսկ խորքային կառավարման մասին, որ շատ երկրներում է տեղ գտել ու աստիճանաբար հաստատվեց նաեւ Հայաստանի բոլոր առանցքային նշանակության օղակներում եւ ԶԼՄ-ներում, անգամ ԶԼՄ-ների հայտնատես կենտրոնացում է կատարվում այս պահին հոլդինգներում՝ խորքային-ստվերային կառավարմանը զուգահեռ, տարբեր մոտեցումներ կան: Դա վատ չէր լինի որոշ դեպքերում, մանավանդ պատերազմական վիճակում, քանի որ ռեսուրսի (այդ թվում տեղեկատվական) կառավարման կենտրոնացումը արդյունավետ է, սակայն ոչ հիմա եւ ոչ մեր երկրի դեպքում, որտեղ հենց խորհրդարանում հրապարակվեց՝ յոթ անձ հրացնում է ութսուն տոկոս շրջանառությունը: Ուրեմն նախ էդ մոնոպոլացմանն է ծառայում ու ծառայելու կենտրոնացումը, ու ամեն ինչ է այդ մոնոպոլացմանն է ստորադաս: Այսինքն՝ Հայաստանը կզարգանա այնքան, որքան ուզեն կամ թույլ կտան այդ յոթ մարդը, ու տարօրինակ չի լինի այլեւս, որ մի «Առինջ մոլի» կամ այլ մոլերի խնդիրը կդառնա խորհրդարանական խնդիր, ավելի ակտուալ, քան ասենք գիտության ապագայի խնդիրը: Դրա համար էլ երբ նայում ու տեսնում ես՝ իրականությունն այլ է, քան բյուջեի մասին սիրուն-պաշտոնեական ելույթներն են, իրոք խնդիր կա պարզաբանել այդ մասին հանրությանը, դա վստահեցնում ենք, որեւէ խմբի շահերով առաջնորդվելով չենք անում, այլ, իրոք, երկրի ապագայով մտահոգված: Ուզում ենք պարզ լինի՝ եթե մեկ միլիարդ դոլար է ներդրվում էներգետիկ ոլորտում, իսկ այդ ոլորտի առանցքային ձեռնարկությունը ներդրողինն է, ապա սա մի՞թե սովորական բիզնես-պարտավորություն չէ, եւ ոչ թե՝ ներդրում, ու այս գործելակերպով Հայաստանն ավելի չի՞ հեռանալու տնտեսության իրական ու երկրին հարկավոր ոլորտների զարգացումից, Ալիսան էլ էլի ծուռ հայելիների աշխարհում վերստին չի՞ հայտնվի:**

**Մենք ոչինչն չունենք այդ յոթ մոնոպոլիստի դեմ, ուղղակի շատ որոշակի ըմբռնում ենք, որ Հայաստանը կամացուկ կմարի՝ հասկացեք, ուղեղ ու արժանապատվություն ունեցող մարդկանց սերունդը կխամրի՝ կամաց-կամաց դուրս հոսելով մի քանի մոնոպոլիստի ենթակա երկրից եւ սնելով այլ պետությունների ուղեղային ռեսուրսը, գոնե այդ սերնդին կրթելու վրա դրած համազգային ջանքն ու ֆինանսն ափսոսացեք:**

**Եթե այս վիճակն է լինելու 2018-ի ապրիլից հետո, Հայաստանը սմքելու է էլի, է, ով որ հավակնում է այս վիճակը շարունակելի ու խորացող դարձնել՝ կա՛մ պետք է հրաժարվի իր հավակնությունից, կա՛մ իսկապես կարողանա փոխել վիճակը՝ օդ չկա շնչելու յոթ օլիգարխանոց երկրում: Կամ-կամ է՝ երրորդ տարբերակ չկա:**

**Առայժմ բավարարվենք ֆինանսների նախարար Վարդան Արամյանի հավաստիացմամբ՝ բյուջեի նախագծի վերաբերյալ, թե նախագծում ներդրվածը ճիշտ ուղղություն է եւ տանում է մեր տնտեսության կայունացման: Իսկ չորս օր հետո (խորհրդարանում նախագծի քննարկման ավարտից հետո նախատեսված չորսօրյա դադար է) հասկանալի կլինի, թե ով էր խոսում՝ միայն խոսելու համար, ով ուզածը ստացավ, եւ ով՝ ինչպես է քվեարկելու:**

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 8



ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

# Ովքե՞ր են տեսել Նիկիտա Միխալկովին

*Մտավորականությունը սոցիալական խումբ է՝*
*կրթական բարձր մակարդակով, զբաղվում է մտավոր*
*բարձր ու ստեղծագործական աշխատանքով,*
*գիտության, կրթության, մշակույթի զարգացմամբ ու*
*տարածմամբ, աչքի է ընկնում հոգեւոր-բարոյական*
*վեհ ձգտումներով, պարտքի ու պատվի սուր զգացումով:*

*Վիքիպեդիա*

Ես չգիտեմ, Հայաստանում դիտո՞ւմ են նշանավոր կինոռեժիսոր Նիկիտա Միխալկովի «Բեսոգոն» քաղաքական-խոհական հեռուստահաղորդաշարը, որը տեսարձակվում է «Россия-24» հեռուստաալիքով: Վերջին հաղորդումը՝ «Թեւավոր սենատորներ» վերնագրով, մեկ շաբաթվա մեջ կրկնվեց չորս անգամ: Բնականաբար, բնավ էլ ոչ պատահականորեն:

Իր երկրում Միխալկովը ճանաչված է ոչ միայն որպես տաղանդավոր կինոռեժիսոր, այլեւ որպես մեծ ինտելեկտուալ եւ, ամենահատկանշականը, ռուս հայրենասեր (չասենք նացիոնալիստ): Նշյալ շարքի իր հաղորդումներում նա չի խոսում կինոյի մասին, այլ գերազանցապես իմաստուն մտավորականի ու արվեստագետի հայացքով բացահայտում եւ մտորումների առարկա է դարձնում այն հասարակական-քաղաքական խոցերն ու բացերը, որոնք խանգարում են Ռուսաստանի զարգացմանը, խաթարում նրա ազգային-բարոյական նկարագիրը:

Եվ ինչո՞վ էր առանձնանում նրա այս վերջին հաղորդումը: Նախ՝ ռուսաստանյան իրականության մի յուրահատկության մասին: Եթե Հայաստանում ընդդիմադիր մի անձ կամ ուժ քննադատում է երկրի ղեկավարներին կամ առանձին անհատների, ապա նա գործ է ունենում բացառապես իր հայրենակիցների՝ հայերի հետ: Իրավիճակն այլ է Ռուսաստանում: Այստեղ իրեն հայրենասեր համարող ռուսը շատ ավելի բախվում է հրեաների հետ: Գերբարդ մի խնդիր:

Ահա եւ, իր վերջին հաղորդման մեջ Միխալկովը կրկին անդրադարձավ իր կողմից բազմիցս անողոք քննադատության ենթարկված եկատերինբուրգյան «Ելցին-ցենտրի» ստեղծման հարցին: Միխալկովի կարծիքով, Բորիս Ելցինը բացարձակ չարիք էր Ռուսաստանի համար, առավելագույնս քայքայեց ու այլասերեց երկիրը, եւ նրա թողած «ժառանգությունը» իրավունք չունի դառնալու հրապարակային ուշադրության առարկա: Կինոռեժիսորը բազմաթիվ կոնկրետ փաստեր բերեց հետխորհրդային Ռուսաստանի առաջին նախագահի հիրավի երկրակործան գործունեությունից: Եվ ի պատասխան իր չարակամ ընդդիմախոսների, Միխալկովը վերհիշեց ու կրկին ցուցադրեց «Ելցին-ցենտրի» բացման արարողությունը ու այդ իրադարձությունը փառաբանողներին: Գուցեեւ հատուկ չէր ընտրել, սակայն բոլոր ողջունողները հրեա էին՝ Վենեդիկտով, Գուսման, Սվանիձե, Պոզներ եւ ուրիշներ: Եվ հենց այս խավն էլ շարունակում է մնալ Ռուսաստանի ու Միխալկովի քաղաքական հակառակորդը: Հարցադրումը միանշանակ էր՝ ինչո՞ւ են գովերգում ու հավերժացնում ռուսաց շահերին դավաճանած այդ անձին: Որպես իր վերաբերմունքի անփոփում Միխալկովը բերեց նաեւ չուբայսյան սեփականաշնորհման սարսափազդու արդյունքները, երբ նույնիսկ ստրատեգիական նշանակության բազմաթիվ ռազմական օբյեկտներ «ջրի» գնով վաճառվել են ամերիկացիներին ու եվրոպացիներին, երբ այդ հանցագործ առուծախից պետբյուջեն միայն չնչին գումարներ է ստացել: Թվերն ու փաստերն իրոք աղաղակող էին: Միխալկովն արժան համարեց ներկայացնել նաեւ Անատոլի Չուբայսի տեսագրված կենդանի խոսքը, որն իրեն հատուկ ցինիզմով ու չարախնդությամբ խոսում էր Ռուսաստանում կոմունիզմի վերացման ապարեզում ներդրած իր «ավանդի» մասին:

Այսուհանդերձ, սակայն, սա չէր Միխալկովի այս հաղորդման նպատակադրույթը: Նրա մտահոգության առանցքը ռուս (ոչ թե ռուսաստանյան) մտավորականության անդեմությունն է, անգործունեությունը, եսասիրությունը, երբ նա դառնում է անուղ հատկապես ռուսաց պատմության ճակատագրական պահերին: Այս կապակցությամբ կինոռեժիսորը սրտի ցավով (պետք էր միայն տեսնել նրա դեմքի արտահայտությունը) մեջբերեց Անտոն Չեխովի հայտնի խոսքերը. «Ես չեմ հավատում մեր մտավորականությանը՝ կեղծ, հիստերիկ, անդաստիարակ, ծույլ, չեմ հավատում նույնիսկ այն դեպքում, երբ նա տառապում է ու դժգոհում, քանզի նրան հալածողները ծնունդ են առնում նրա իսկ ընդերքից»: Խիստ ուսանելի էին հայրենասեր արվեստագետի խորհրդածությունները այս հրատապ թեմայի շուրջը:

Ինչո՞ւ ենք այսքան մանրամասնում օտարի մտահոգությունները: Ասացեք, խնդրեմ, ինչո՞վ է տարբերվում անկախ Հայաստանի մտավորականությունը հայ ժողովրդի համար նույնպես բախտորոշ այս ժամանակահատվածում: Ո՞ւմ մեղքով է նա հայտնվել սոսկ պասիվ դիտորդի դերում: Հայաստանի, Ղարաբաղի մասին ռուսաց լրատվատարածքում ամենից շատ գրում է REGNUM լրատվական գործակալությունը: Ընդ որում, հայոց երկրի ներկան ու հեռանկարները վերլուծում են և՛ հայաստանցի, և՛ մոսկվացի քաղաքագետներ ու փորձագետներ, տրվում են հայ մամուլի տեսություններ եւ այլն: Լավատեսական ոչինչ չկա այդ նյութերում, լավագույն դեպքում՝ անորոշություն: Հիմա էլ պարզորոշ է դառնում, որ Հայաստանի կյանքում ոչինչ չի փոխվի նաեւ առաջիկա վարչապետական «ընտրություններում», որ ասպարեզ չեն գա նոր մարդիկ՝ նոր մտքերով: Եվ չես հասկանում, թե երկրի համար ճակատագրական այս ամիսներին ինչու չեն հավաքվում մտավորական հայ գիտնականը, արվեստագետը, բժիշկը, տնտեսագետը, սոցիոլոգը, պատմաբանը, գրողը եւ չգիտես էլ ով ու համատեղ չեն ներկայացնում երկրի զարգացման իրենց այլընտրական թեկուզեւ պատկերացումները: Մեկ Միխալկով էլ չկա Հայաստանում: Միթե հայ մտավորականությունը չի հասկանում, որ եթե իրոք առաջիկա «ընտրություններում» ոչինչ չփոխվի, ապա սոցիալ-տնտեսական ողբալի իրավիճակից, անարդար իրողություններից ու անհեռանկարությունից հուսահատված հայաստանցին արդեն կատարյալ զզվանքով ու նոր ակտիվությամբ է հեռանալու հայրենիքից, թքելով նաեւ մտավորականության վրա:

Միխալկովը չմոռացավ նորեն առաջադրել երկրի դրամատիկ պահերին ռուս մտավորականության առջեւ հառնող եւ արդեն ավանդական դարձած երկու հանրահայտ հարցադրումները՝ ո՞վ է մեղավոր եւ ի՞նչ անել: Գուցե հայ մտավորականությունն էլ համակվի այս հարցերով, առավել եւս, որ նա չունի որեւէ հրեական խնդիր:

Եվ վերջում մի պարզաբանում. ինչո՞ւ էր Միխալկովը իր հաղորդումը եթեր հանել «Թեւավոր սենատորներ» խորագրով: Բանն այն է, որ նա մեկ տարի առաջ հանդես գալով ռուսաց խորհրդարանի վերին պալատի նիստում, սենատորներին խնդրեց լսել իրեն՝ «Ելցին-ցենտրը» միայնապականիչ ազդեցություն կունենա այն այցելողների ու հատկապես երիտասարդության վրա: Եվ առ այսօր սենատորները շարունակում են «լսել» նրան: Բայց ահա, Միխալկովի վկայությամբ, հայտնի չէ ինչ նախախնամությամբ մի խումբ... ագռավներ, հայտնվելով թանգարանի երկնակամարում, կտուցից արձակված քարերով «ռմբակոծել» ու ջարդել են չարագույժ կառույցի պատուհանները: Երեւի սրանք են միայն «լսել» Միխալկովի հուսահատ ձայնը, դառնալով «թեւավոր սենատորներ»:

Չպատասենք, թե հայաստանաբնակ ագռավները երբ պիտի քարեր նետեն համանման հայկական որեւէ կառույցի վրա:

---

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

# Անարդար վերաբերմունք

**Վերջերս «Արմենիա» հեռուստատեսության «Սուր անկյուն» հաղորդաշարից մի տեղեկություն ստացա, որն ինձ անչափ վրդովեցրեց: Բանը նրանումն է, որ Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորները իրենց աշխատանքային գործունեության ընթացքում բավականին բարձր աշխատավարձ են ստանում, որին ես բնավ էլ դեմ չեմ: Ճիշտ է, նրանց մի մասը աշխատանքի է ներկայանում միայն քվեարկությունների ժամանակ կոճակ սեղմելու, այլ ոչ բովանդակային ելույթներ ունենալու համար:**

**Հիմա դառնանք ամենագլխավոր հարցին: Բանից պարզվում է, որ անկախության տարիների ընտրությունների ժամանակ լոկ մեկ անգամ պատգամավոր ընտրված անձն իր պաշտոնը կորցնելուց հետո ամսական ցմահ ստանալու է պատգամավորի աշխատավարձի 80%-ի չափով գումար, որը կազմում է մոտ 500000 դրամ: Եվ սա մեր սուղ բյուջեի դեպքում, երբ շարքային աշխատավորներն աշխատանքից ազատվելիս ոչինչ չեն ստանում, մինչդեռ միջին թոշակառուն ընդամենը 30-50000 դրամի հույսին է մնում: Այնինչ պատգամավորներից շատերը տարիների ընթացքում տարբեր բիզնեսների «տեր են դառնում» եւ էլ ավելի հարստանում: Հարց է ծագում. գոնե թոշակի անցնելուց հետո ինչո՞ւ մեր ժողովուրդը մոտավորապես հավասար գումար չի ստանում: Եվ երկրորդ հարցը. արդյո՞ք շատ երկրներ կան, որոնք այսպիսի անհավասար քաղաքականություն են վարում իրենց ժողովուրդների նկատմամբ: Պատասխանատու անձանցից ակնկալում եմ խելամիտ պատասխան:**

**ՀԱՅԿ ԱՂԱՅԱՆ**
**գիտաշխատող**
**24 հոկտեմբեր, 2017 թ.**

---

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նյու Յորք

# Պենտագոնի ապրող լեգենդ՝ 95 ամյա Սարգիս Թաթիկյանը դեռ չի շտապում կենսաթոշակի անցնել

**«Այն ժամանակ է սկսվում կյանքի հետընթացը, երբ դու վաղ արթնանալու որեւէ պատճառ չունես: Եվ եթե սիրում ես այն ինչ անում ես եւ զգում գործիդ թողած արժեքը, ապա դա աշխատանք չէ այլեւս, այլ՝ երկնային պարգեւ»: 95 ամյա մեր հայրենակից Սարգիս Թաթիկյանին այս փիլիսոփայությունն է օգնել ծերության դեմ պայքարում: Նա սահմանել է մարդկային կարողությունների նոր նշաձող ԱՄՆ զինված ուժերում իր 75 տարիների պետաշխատողի շարունակվող գործունեությամբ:**

**ԱՄՆ ռազմածովային ուժերի վետերանը կենսաթոշակի պետք է անցներ դեռ 1973-ի հոկտեմբերին, վաստակած հանգստի բազմոցը սակայն իր եռանդի հետ անհամատեղելի գտնվեց մի ամբողջ 44 տարի եւս: ԱՄՆ ռազմածովային ուժերի համակարգի հրամանատարության (NAVSEA) պաշտոնական կայքը տեղեկացնում է, որ սեպտեմբերին 26-ին կայացել է Սարգիս Թաթիկյանի մեծարման արարողությունը, նվիրված այդ համակարգում նրա պետական ծառայության 75 ամյա վաստակին, ինչն աննախադեպ է Պենտագոնի պատմության մեջ: Այս յուրօրինակ հոբելյանի առիթով Սարգիս Թաթիկյանին շնորհակալական ուղերձ է հղել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, սենատոր Ջոն Մաքքեյնը (Ռ - Արիզ.), ԱՄՆ պաշտպանության քարտուղար Ջեյմս Մաթիսը եւ ռազմածովային ուժերի հրամանատար Ռիչարդ Սփենսերը:**

**Վաշինգտոնում կայացած միջոցառմանը NAVSEA- ի հրամանատար, փոխծովակալ՝ Թոմաս Մուրը, ամերիկյան նավատորմում Թաթիկյանի ավանդի մասին խոսելիս նշել է, որ երբ ինքը նավատորմ էր մտնում որպես թիկնապահ, Թաթիկյանն արդեն ուներ 39 տարվա դաշնային ծառայության ստաժ (federal/government service):**

**ԱՄՆ նավատորմում քաղաքացիական ծառայողի իր կարիերան Ս. Թաթիկյանը սկսել է 1942թ.**



**հուլիսին, որպես Ֆիլադելֆիա եւ Նյու Ջերսի նահանգների ռազմածովային նավատորմի կրտսեր ռադիոտեխնիկ: 1943 թ. մարտին թողնելով այդ պաշտոնը մտել է ակտիվ նավատորմ, որպես ծառայող նավաստի: 1946 թ.-ին Թաթիկյանը կրկին վերադարձել է քաղաքացիական ծառայություն (civil service), աշխատելով ռազմածովային ուժերի առաջին սերնդի ղեկավարվող հրթիռային համակարգերի վրա, ապա ստանձնել դաշնային բյուրոյի փոքր բիզնեսի վերլուծաբանի պաշտոնը: Կազմակերպել է փոքր բիզնեսի ցուցահանդեսներ, շրջագայելով ափից-ափ, այցելելով ամերիկյան բոլոր նահանգների մայրաքաղաքները: Իր կազմակերպչական ջանքերի համար Սարգիս Թաթիկյանն արժանացել է Կոնգրեսական ճանաչման (Congressional recognition): 1979 թ.-ից մինչ օրս նա աշխատում է Պենտագոնի ռազմածովային ուժերի փոքր բիզնեսի ծրագրերի գրասենյակում, որպես գործակից տնօրեն:**

**Ծնողները Հայոց ցեղասպանությունից փրկված առաջին ներգաղթյաների թվում Մ. Նահանգներ են եկել 1920 ական թվականներին: Հայրը՝ Հարություն Թաթիկյանը, Խարբերդի նահանգի Արաբկիր քաղաքից էր, մայրը՝ Արեւմտյան Հայաստանի Գեյվե բնակավայրից: Ծնվել է Ֆիլադելֆիայում 1922 թ.-ին: Մինչեւ հինգ տարեկանը անգլերեն չի խոսել, մայրը պարտադրել է իրեն միայն հայերենը:**

**Պրն Թաթիկյանի հետ իմ զրույցում հարցրեցի նաեւ իր երկարակեցության գաղտնիքի մասին: Ասաց, մի զավեշտական դեպք պատմեմ. «Մի անգամ չինացիների մի խումբ այցելեց իմ գրասենյակ, նրանցից մեկը նայելով ինձ ասաց, - Օ՜յ, Ինչ մեծ ականջներ ունի: Ուղեկցողը կասկարմիր կտրած հանդիմանեց չինացուն:- Դա հաճոյախոսություն է,- ասաց չինացին,- Բուդդայի ականջների նման են, իսկ նա եղել է առողջ ու երկարակյաց»:**

**Սարգիս Թաթիկյանը երբեք Հայաստանում չի եղել: Իր տեւական աշխատանքային գործունեության ընթացքում ընդամենը մեկ օր է արձակուրդ գնացել: Կուտակված ահռելի քանակությամբ արձակուրդային ժամերը (annual leave) նվիրաբերել է քաղցկեղով հիվանդ իր գործընկերներին: Ցավոք, նրա մասին քիչ գիտեն Ամերիկայի հայկական համայնքում: Նրա նկատմամբ պատշաճ ճանաչումն ու հարգը զարմանալիորեն շրջանցվել է Վաշինգտոնում գործող հայկական եկեղեցու, ամերիկահայ ազդեցիկ այլ կազմակերպությունների կողմից: Նա ծանոթ անուն չէ նաեւ Հայաստանում: Անկասկած, նրա ռազմական փորձն ու գիտելիքներն այսօր շատ տեղին կլիներ օգտագործել հայոց բանակաշինության մեջ: Շտապենք, փութանք շտկել այս մեծ թերացումը մեր լեգենդար հայրենակցի նկատմամբ:**

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 9



# Սելֆի

## *Լարա-թվային աշխարհի տարօրինակ դրսեւորումները (*)*
## *(Manifestations of a Wired Weird World)*

Մեր օրերում «սելֆի անելը» այնքան «մոդայիկ» է դարձել, որ նույնիսկ նախագահներն են դրանից օգտվում: Թրամփը ձեզ օրինակ:

**Որո՞նք են այն գլխավոր ուժերը, որոնք ձեւավորում են մարդու ինքնությունը: Ինչպե՞ս ենք մենք արձագանքում դրանց: Ի՞նչ ազդեցություն է թողնում միջավայրը, որի շրջապատում մեծանում է երեխան, պատանին կամ պարմանուհին: Որո՞նք են տեխնոլոգիական նորամուծությունների ազդեցությունները անհատի վրա: Այդ ազդեցությունները սոցիոլոգիակա՞ն են, կենսաբանակա՞ն, հոգեբանակա՞ն, թե՞ նեորոգիտական: Այս եւ հարակից այլ հարցերի է փորձում պատասխանել Աննա Քաթարինա Շաֆները «Թայմսի» գրական հավելվածի (TLS) (2017 թ. սեպտեմբերի 8-ի) համարում գրախոսելով միանգամից չորս հեղինակների գործերը՝ Ուիլ Սթորի «Սելֆի» (Will Storr: Selfie), Մայքլ Հարիսի «Մենակություն» (Michael Harris: Solitude), Մայքլ Ֆինկելի «Օտարականը անտառում» (Michael Finkel: The Stranger in the Woods) եւ Էնդրու Օ՛Հեյգանի «Գաղտնի կյանք» (Andrew O՛Hagan: The Secret Life) գրքերը:**

Շատերն են մտահոգված, որ նորագույն տեխնոլոգիական ձեռքբերումները, որոնք միտված են մարդկանց կյանքը դյուրացնելու, իրականում դարձել են մտավոր եւ ֆիզիկական առողջության սպառնալիքներ: Մայքլ Հարիսը միակը չէ, որ հարցնում է, թե արդյո՞ք սոցմեդիաները մեզ սոցիալապես ավելի շփվող են դարձրել: Ճիշտ է հարատեւ կապերի մեջ ենք, բայց երբեք ամբողջովին հագեցած այդ կապերից: Հեշտացել է «իրեն ցուցադրելու» արվեստը, բայց ի՞նչ որակով: Բյուրավոր փաստեր կան, որ նոր մեդիա հասանելիությունը մեզ շատ ավելի մենակյաց է դարձրել, շատ ավելի ինքնասիրահարված, շատ ավելի ընկճված, եւ շատ ավելի անհանգիստ, քան մեզ նախորդած սերունդները:

Սեփական անձի, ինքնության խնդիրը առավել անհանգստացնող է դառնում, երբ մենք հաշվի ենք առնում մեր մշակույթներում ամրագրված որոշակի արժեքներ, որոնք բնական են համարվում: «Սելֆի. ինչպե՞ս ենք մենք դարձել այդքան ինքնասեւեռված եւ ի՞նչ ազդեցություն է դա թողնում մեզ վրա», գրքում Ուիլ Սթորը քննարկում է արեւմտյան անհատականության կազմավորման մեջ այնքան կարեւոր, անհատի մշտական կատարելագործման, կամ իրեն կատարելագործելու գաղափարի պատմությունը: Նա հետաքննում է դրա էվոլյուցիան՝ սկսած հին հունական փիլիսոփայությունից մինչեւ քրիստոնեականության առաջացումը, արդյունաբերական հեղափոխությունը եւ արդի հոգեբանությունը: Ըստ նրա, համարձակ, շփվող, եսակենտրոն, ինքնամեծարմամբ եւ ձեռնհասության խորամանկությամբ օժտված անհատը դարձել է ժամանակակից անձի մոդելը, ստվերում թողնելով բոլոր նրանց, ովքեր չեն կարողանում իրենց դրսեւորել կյանքում վերոնշյալ հատկանիշների բացակայության պատճառով:

Արդյունքում ինչպես Մ. Նահանգներում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում, որոնցում Սթորը ուսումնասիրություններ է կատարել, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ինքնավնասումը, անկանոն սնվելը, ընկճվածությունը, մտահոգվածությունն ու մարմնական խեղումները անհամեմատ մեծ աճ են արձանագրել ժամանակակից մարդկանց շրջանում:

Սթորը համոզիչ կերպով պնդում է, որ անձի «գերազանցության» այս գաղափարը ընկած է Հին Հունաստանի «քաղաքացիություն» հասկացողության եւ հատկապես Արիստոտելի այն գաղափարի հիմքում, որ անհատը «քաղաքական կենդանի» է: Ի հակադրություն, Հեռավոր Արեւելքում անձի գերակշռող մոդելը համարվում էր «խմբակային ներդաշնակության» համապատասխանողը: Սթորը այնուհետեւ, կոնֆուցիականությանն ու ֆրեյդիզմին անդրադառնալուց հետո, կենտրոնանում է Կարլ Ռոջերսի, Ֆրից Պերլսի եւ Ուիլ Շուտցի գաղափարախոսության վրա, որ մարդու «անսահման կարողությունների» մասին է խոսում: Նշում մարդու ինքնագնահատման, ինքնարժեւորման դրսեւորումների մասին, որոնք ինքնասիրահարվածության, մի ամբողջ «սելֆի սերունդի» ծնունդի (Generation selfie) պատճառ դարձան: Գիտնականներն այժմ ուսումնասիրում են ծնողների կողմից իրենց երեխաների չափից ավելի գովաբանման հարցերը:

«Եսի» գերագնահատումը սերտորեն կապված է թվային եւ լարային կախվածության հետ, որը տարօրինակ ձեւով անջատվածության եւ մենակության է առաջնորդում: «Մենակություն» գրքում Հարիսը տարանջատում է «իրական» (կամ դրական) մենակությունը, առանձնացվածությունը եւ «ձախողված» (կամ բացասական) մենակությունը, որին բնորոշ է տխրությունը՝ միայնակ լինելու հետեւանքում: Անգլերեն «solitude» եւ «loneliness» բառերն առավել ճշգրիտ կարող են գուցե արտահայտել տարբերությունը: Հարիսի կարծիքով առաջինը մտածողության թերագնահատված աղբյուր է: Առանձնացվածությունը կարող է բերրի հող նախապատրաստել նոր գաղափարների ծնունդի, ավելի առողջ ապրելակերպի (կենտրոնացվածություն), եւ ինքն իրեն եւ ուրիշներին ավելի ճիշտ ճանաչելուն: Մինչդեռ երկրորդը վհատության, հոռետեսության կարող է առաջնորդել: Արտաքնապես անվնաս թվացող նոր տեխնոլոգիաները, Հարիսի համոզմամբ, աննկատելիորեն ազդելու են մեր ապրելակերպի վրա, պատճառելով կախվածություն եւ նիհիլիզմ: Թվային խաղերով տարված մենք կորցնում ենք կենտրոնացված առանձնացվածության հնարավոր օգուտները: Իրականությանը մեջքով շուռ գալու փոխարեն Հարիսը առաջարկում է սավառնել անուրջների աշխարհում, վերահաստատել կապը բնության հետ եւ անջատվել սարքերից ու նրանց առաջարկած անհեթեթ խաղերից:







Մենակյաց ապրելակերպի յուրահատուկ դրսեւորման մասին է Մայքլ Ֆինկելի «Օտարականը անտառում» հատորը, որ պատմում է մեր օրերի մի ճգնավորի մասին: Քսանյոթ տարի շարունակ Քրիստոֆեր Նայթը ապրել է Մենի (Maine- Նոր Անգլիա, ԱՄՆ) շրջակա անտառներից մեկում, եւ 47 տարեկանում հայտնաբերվել եւ ձերբակալվել՝ ոստիկանության աշխատողների կողմից: Հանկարծական ներքին մղումի ազդեցության տակ է թողել տունն ու աշխատանքը (թե ինչից է փախչել կամ խուսափել՝ պարզ չէ, բայց ինտերնետն ու apps-ը դեռ տարածված կամ հայտնաբերված չէին այդ ժամանակ) եւ իր համար ստեղծել աչքից հեռու մի «բնակարան»: Գոյատեւել է հարեւանությամբ գտնվող տնակներից գողանալով ուտելիք եւ այլ անհրաժեշտ պարագաներ: Բայց սահմանափակ քանակով, չխախտելով էթիկայի կանոնները: Գողացված մարտկոցներով լսել է ռադիո, դիտել հեռուստացույց, երբեմն խմել, կարդացել այն գրքերը, որոնք կարողացել է ձեռք բերել: Եղել է մաքուր եւ կոկիկ հագնված: Ձերբակալվելուց չի կարողացել հիշել ընտանեկան մի խնդիր, որի պատճառով հեռացած լիներ տնից: Մասնագետների կարծիքով, այնուամենայնիվ, նա որոշակի խանգարումներ ունեցող անձ է եղել, բայց ամեն ինչից հրաժարվելով մենակյաց ապրելը դեռեւս մնում է չլուծված ու հարցական, մանավանդ որ անհրաժեշտ պարագաներ գողանալու հետեւանքով նա հոգեկան եւ այլ վնասներ է պատճառել հարեւանությամբ ապրող մարդկանց:

Նայթի (knight) պարագան նման չէ, անշուշտ, ժամանակին հիացմունքի առարկա դարձած հասարակությունից կամ քաղաքակրթությունից կամավոր հրաժարված մարդկանց կյանքին, որոնց մասին հիշատակությունները հասնում են մինչեւ մ.թ.ա. III հազարամյակում ստեղծված «Գիլգամեշ» դյուցազնավեպը: Ֆինկելը նրանց երեք դասի է բաժանել. բողոքարկողների, ուխտագնացների եւ հետապնդվողների: Լաո-Ցզուն, Սիդհարթա Գաուտաման, Հիսուսը, Մոհամեդը եւ այլք, բոլորն էլ երկար ժամանակ մենակության մեջ են ապրել նախքան հոգեւոր քարոզչությամբ զբաղվելը: 18-րդ դարում անգլիացի արիստոկրատական խավերում խիստ մոդայիկ էր կալվածներում ճգնավորներ ունենալը, որոնք «բարիություն եւ դատողություն էին ճառագայթում»: Նրանց լավ էին վճարում եւ պայմանագրերը նրանց հետ երբեմն մինչեւ յոթ տարի էին ձգվում: Անգլիացիներից բացի այլ ազգերի մոտ էլ ճգնավորները հարգված մարդիկ են եղել: Նրանց իմաստուն մարգարեի, գուշակի եւ գիտնականի որակավորում են տվել:

Չորրորդ, Օնդրու Օ՛Հեյգանի «Գաղտնի կյանք: Երեք իրական պատմություններ» գիրքը քննության է առնում մարդու ինքնությունը, եսը՝ թվային դարաշրջանում: Նրա շնորհալիորեն գրված էսսեները ժանրերի եւ ոճերի հիանալի միաձուլումներ են, որոնք ե՛ւ փաստագրական են, ե՛ւ խոհական: Առաջինը WikiLeaks-ի հիմնադիր Ջուլիան Ասանժին է ներկայացնում, երկրորդը՝ կիբերտարածությունում ստեղծված մի հնարավոր ինքնության, իսկ երրորդը Քրեյգ Սթիվն Ռայթին (Craig Steven Wright), ով կարող է լինել (կամ չլինել) Բիթքոյն (Bitcoin) դրամական կրիպտոսիստեմի լեգենդար հիմնադիր Սաթոշի Նաքամոթոն: Հեղինակը «Բյուլետեններ ժամանակակից ինքնության եզրերից» անվան տակ ներկայացնում է «եզակի, կառնավալային հրավառությամբ հագեցած մի քանի անձնավորությունների, որոնք արտասովոր են իրենց անցյալով, փառասիրություններով եւ պատրանքներով»: Նա թափանցում է հաքերների, կիբեր հանցագործությունների, առցանց անվտանգության եւ ինքնության գողության ոլորտները, չմոռանալով անդրադառնալ մարդկային ինքնության խանգարումների, ինչպես նաեւ ազատության, թափանցիկության եւ շուկայական ուժերին առնչվող հարցերին: Ասանժի եւ Ռայթի համար ինքնության գիտակցությունը (ինքնագնահատումը նաեւ) թելադրված է այդ միեւնույն թվային աշխարհով, որի պարամետրերը հենց իրենք էլ մշակել են: Նրանք ե՛ւ վարպետ հորինողներն են, ե՛ւ տուժող ենթակաները իրենց ստեղծագործությունների:

Ժամանակակից ինքնությունը կարող է լինել նարցիսական (ինքնասիրահարվածության հետեւանք), գերկապակցված, արմատապես միայնակ եւ կոտրված կամ էլ այս բոլորը միաժամանակ: Այս չորս գրքերը հավաստիացնում են, որ շրջապատող աշխարհի եւ մարդու ինքնության հարաբերությունները հիմնականում մնում են դիալեկտիկական հարթության վրա: Ինչպես Սթորն ու Հարիսն են փորձում հիմնավորել, մարդու անձնական վարքագիծը, ձգտումներն ու դավանած արժեքները ձեւավորվում են ինչպես ծնողների, դասատուների եւ շրջակա միջավայրի, այնպես էլ տեխնոլոգիաների եւ տնտեսական մոդելների հիման վրա, որոնք երբեմն մեր վերահսկողությունից վեր են:

Պատրաստեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

**Խմբ. կողմից.-** Իսկ մեզ մոտ՝ Հայաստանո՞ւմ: Չենք ասում գիրք, բայց ինչո՞ւ մի լուրջ հոդված, ուսումնասիրություն չեն հրատարակում մեր հոգեբանները, սոցիոլոգներն ու մտավորականությունը: Թե՞ նորագույն տեխնոլոգիաները մեզ մոտ խնդիրներ չեն առաջացնում ընդհանրապես:

*(*) Ի դեպ «www» հապավումը շատ անգամ նաեւ առնչվում է «wired weird world-ի» հետ, որը նշանակում է «լարերով համակված տարօրինակ աշխարհ», ակնարկելով երիտասարդների մոտ նշմարվող երաժշտություն կամ խոսակցություն լսելու լարային հարմարանքներին:*

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 10



ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ռգք Էներգետիկ աշխարհաքաղաքականության ու միջազգային անվտանգության մասնագետ

# Նոր սերնդի պատերազմները եւ պահեստազորի կարեւորությունը դրանցում

*«Պատերազմը հնարավոր է հետաձգել, բայց խուսափել դրանից անհնար է»*

Օտտո ֆոն Բիսմարկ

**21-րդ դար մարդկությունը թեւակոխեց պատերազմներով. սկզբում Բալկաններում ու Աֆղանստանում, իսկ հետագայում դրանք շարունակվեցին Իրաքում, Եմենում, Սիրիայում, Սուդանում եւ այսպես շարունակ: Մարդկանց հույսը, որ Սառը պատերազմի ավարտից հետո աշխարհը ավելի խաղաղ ու անվտանգ կլինի, ի դերեւ ելավ, եւ կուտակված խնդիրների լուծման «լավագույն» տարբերակը հակամարտող կողմերը շարունակում են տեսնել ռազմական գործողությունների իրականացման մեջ: Արդյունքում միջազգային անվտանգության համակարգերը, զսպման ու հավասարակշռության մասին տեսությունները դադարում են աշխատել, երբ կուտակված խնդիրները եւ զենքի մեծ քանակը գայթակղիչ է դարձնում հարցերը ռազմական ճանապարհով հնարավորինս արագ լուծելու տարբերակը:**

**Ժամանակակից տեխնոլոգիաները փոխում են պատերազմների վարման ընդունված համակարգերը, առաջ են քաշվում ռազմական գործողությունների իրականացման նոր մարտավարություններ ու ռազմավարություններ: Ռազմական ճակատային գիծ հասկացողությունը դադարում է նախկին նշանակությունն ունենալ, հրթիռա-հրետանային նորագույն համակարգերը խոցելի են դարձնում անգամ խորքային քաղաքներն ու գյուղերը, իսկ խաղաղ բնակիչները հակամարտող կողմերի համար դառնում են առաջնային թիրախ: Աշխարհի տարբեր վայրերում ընթացող ռազմական գործողությունները դրա վառ ապացույցն են:**

**Պաշտպանվել նմանատիպ ժամանակակից զինատեսակներից եւ անխոցելի դարձնել բնակավայրերը հրետանային հզոր համակարգերից՝ դառնում է համարյա անհնար, ինչը ստիպում է նոր լուծումներ փնտրել եւ նոր ռազմավարություններ մշակել: Արցախյան առաջին պատերազմը ցույց տվեց, որ պատերազմի արագ ավարտման ու հրթիռակոծությունների կանխման լավագույն տարբերակը թշնամուն իր իսկ տարածքում հնարավորինս ավերիչ հարված հասցնելն է եւ ռազմական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելն է, ինչը հնարավոր է միայն կազմակերպված, մարտունակ եւ մեծաքանակ ռազմական միավորների առկայության պայմաններում:**

**Արցախյան պատերազմի հաղթանակի հիմնական գրավականը դարձավ Մռավի լեռներից մինչեւ Արաքս ռազմական ճակատի ձեւավորման ռազմավարությունը, ինչի արդյունքում ռազմական գործողությունները տեղափոխվեցին թշնամու խորը թիկունք, նրան զրկելով հայկական բնակավայրերը ռմբակոծելու հնարավորությունից, ինչպես նաեւ հայկական ուժերի առաջխաղացումը կանխելու ընդունակությունից: Հայկական ուժերը դուրս եկան ռազմավարական տարածքներ եւ նրանց առաջխաղացումը հնարավոր եղավ կանխել միայն հրադադարի Բիշկեկյան կոչվող տխրահռչակ համաձայնագրի կնքման պայմաններում:**

**Ապրիլյան առճակատման ժամանակ պարզ դարձավ, որ հրթիռահրետանային համակարգերի կատարելագործման ու դրանց համազարկի խորության ավելացման պայմաններում վնասը բնակավայրերի համար ավելի մեծ ու ավերիչ է լինելու, քան կար նախորդ պատերազմի շրջանում: Ապրիլյան պատերազմի 4 օրերի ընթացքում կողմերը ավելի շատ արկեր էին օգտագործել, քան արցախյան պատերազմի մեկ տարվա ընթացքում: Սա նշանակում է, որ հնարավոր պատերազմը հեռահար ռմբակոծմամբ կարող է արյունալի ու միմյանց ռեսուրսներն ու մարդկային ուժը քամող հակամարտության վերածվել, ինչը կարելի կլինի կանխել միմիայն հակառակորդին տարածքային մեծ կորուստներ պատճառելու ճանապարհով:**

**Նման ռազմավարության իրականացման համար հիմք կարող է հանդիսանալ միայն մոբիլ պահեստազորային բանակի ստեղծումը, որն ի վիճակի կլինի մի քանի ժամվա ընթացքում ոտքի կանգնել, եւ լինելով մարզված ու լավ պատրաստված, իրականացնել համապատասխան առաջադրանքը, թշնամուն հնարավորինս ավերիչ հարված հասցնելու եւ ռազմական գործողությունները նրա տարածք տեղափոխելու հարցում: Սակայն նմանատիպ պահեստազորի ստեղծումը ժամանակ, ջանքեր, համապատասխան օրենսդրական դաշտ ու հսկայական ռեսուրսներ է պահանջում պետության կողմից: Դա նաեւ Հայոց բանակին մաս կազմելու պարտավորության ու հպարտության զգացում պետք է առաջացնի յուրաքանչյուր քաղաքացու մոտ, ինչը նշանակում է նոր գաղափարաբանության ու մշակույթի ձեւավորում Հայաստանում:**

**Պահեստազորի մասին օրենքով, եվրոպական շատ երկրներում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում, ծառայությունը սկսվում է 18 տարեկանից, իսկ ավարտվում, երբեմն միայն 60 տարեկանում, երբ հայտարարվում է զորացրման մասին: Այդ ամբողջ տարիների ընթացքում պահեստազորի զինվորները եւ սպաները պարբերաբար մասնակցում են զորահավաքներին՝ երբեմն մեկ կամ երկու տարին մեկ անգամ՝ մինչեւ երեք շաբաթ ժամկետով, որի ընթացքում նրանք անցնում են համապատասխան ռազմական վերապատրաստում:**

**Նմանատիպ զորահավաքները պարտադիր են բոլորի համար եւ խուսափելը հավասարազոր է դասալքության, ինչը նշանակում է, որ ոչ ոք չի կարող դրանից հրաժարվել: Գործող օրենսդրության համաձայն, պահեստազորի զինծառայողները պաշտպանված են օրենքով եւ նրանց բացակայության ժամանակ նրանց հեռացնել աշխատանքից ոչ ոք չի կարող: Բացի այդ, պահպանվում է նրանց աշխատավարձը եւ պաշտոնը մինչեւ զորահավաքի ավարտը: Օրինակ, Շվեյցարիայում նման զորահավաքներին մասնակցում են բոլորը, անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից, սոցիալական կարգավիճակից ու հասարակական դիրքից:**

**Նման շարունակական զորահավաքները մասնակիցներին հնարավորություն են տալիս լավագույնս ճանաչել միմյանց ու ստեղծել համապատասխան մթնոլորտ ռազմական գործողությունների դեպքում բարձր մակարդակի համագործակցության ու հաջողության հասնելու համար: Շատ պետություններում պահեստազորի զինվորները իրավունք ունեն համազգեստը եւ նույնիսկ զենքը իրենց մոտ պահել, ինչը հնարավորություն է տալիս շատ արագ կերպով ներկայանալ այն վայրը, որտեղ եւ պետք է իրականացվի մարտական առաջադրանքը: Նման մոբիլությունն ու շարժունակությունը անգնահատելի է դարձնում պահեստազորի դերը հնարավոր պատերազմում:**

**Սա նաեւ հակամարտության կտրուկ սրման պայմաններում զինված ուժերի թվաքանակը շատ կարճ ժամանակահատվածում եռապատկելու ու նույնիսկ հնգապատկելու հնարավորություն է ստեղծում, ինչը իր հերթին ռազմական գործողություններն արագ կերպով ավարտին հասցնելու ու թշնամուն հնարավորինս ավերիչ հարված հասցնելու ներուժ է ստեղծում: Հայաստանի պայմաններում պահեստազորի հավաքը չպետք է կարգավորվի զորակոչային հանձնաժողովների կողմից, ինչը մինչ օրս կատարվում է, այլ դրանք պետք է կցված ու կապված լինեն կոնկրետ զորամիավորումներին ու գործեն համապատասխան վայրում, ինչը հնարավորություն կտա ծանոթ լինել թե՛ հրամանատարությանը եւ թե՛ այն տեղանքին, որտեղ ընթանալու են ռազմական գործողությունները: Սահմանամերձ շրջանների բնակչությունը պետք է կապված լինի հենց սահմանի պահպանումը իրականացնող զորամիավորումներին, իսկ պահեստազորայինները պետք է նաեւ զենք ու համապատասխան ռազմամթերք ունենան իրենց տանը, ինչը հնարավորություն կտա շատ արագ կերպով արձագանքել թշնամու կողմից ոտնձգության յուրաքանչյուր փորձին:**

**Ինչեւէ, պահեստազորի խնդիրը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար եւ այս ուղղությամբ համապատասխան օրենսդրական դաշտի, կազմակերպչական գործողությունների իրականացման եւ դրա կարեւորության շուրջ քննարկումների համար պետք է սկսել պատրաստել համապատասխան միջավայր: Անկեղծ լինենք. այս հարցում մենք բավականին ուշացել ենք եւ խնդրի հետագա հետաձգումը միայն կդժվարացնի դրա իրականացումը:**

# Արցախ պետությունը վաղուց փաստ է Եվրոմիության համար

## *Իսկ մյուսների՞*



Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարների կանոնավոր հանդիպումները երկկողմ ռազմավարական համագործակցության, ՀԱՊԿ-ին եւ ԵԱՏՄ-ին երկու երկրների մասնակցության վկայություններից են:

Սակայն հորիզոնում ի հայտ է եկել նոր նրբերանգ. նոյեմբերի վերջերին Բրյուսելում սպասվում է Եվրոմիության հետ Հայաստանի շրջանակային համաձայնագրի ստորագրումը: Ավելին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան **Ռիչարդ Միլսը** «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում արել է բարձրագոչ հայտարարություն, որի համաձայն Եվրոմիության հետ Հայաստանի համաձայնագրի ստորագրումից կախված կլինի ՀՀ ինքնիշխանության մակարդակը: Դա որոշ փորձագետների հիմք տվեց պնդելու, թե Երեւանը վերստին հայտնվել է իր զարգացման ճամփաբաժանում: Ինչպես 2013թ. հայտարարել էր ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**, ԵԱՏՄ-ին անդամակցելը խոչընդոտում է Հայաստանի եւ Եվրոմիության միջեւ ազատ առեւտրի համաձայնագրի կնքմանը: Թե հետո ինչ տեղի ունեցավ 2013-ին, ամենքին հայտնի է: Այնուհետեւ մշակվեց ՀՀ-ԵՄ նոր համաձայնագիր, որը չի պարունակում խիստ կտրական պայմաններ: Եթե համաձայնագրից հանենք դրա տնտեսական բաղադրիչը, ապա կուրվագծվի մի հետաքրքրական պատկեր, նշում է «Ռեգնում» գործակալությունը:

Դրա առաջին մասը հետեւյալն է: Բանն այն է, որ Եվրոմիության հետ բանակցություններ վարել է նաեւ Բաքուն: Բայց Եվրոմիությունը հրաժարվում է նախաբանում ներառել «Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանում» արտահայտությունը, ինչը միանգամայն ձեռնտու է Հայաստանին, քանի որ դա իրեն ապահովագրում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման տեսակետից: Ակնհայտ է, որ Հայաստանի հետ որոշակի ձեւակերպումներով համաձայնագիր ստորագրելով՝ Եվրոմիությունը չի կարող կամայականորեն այն փոխել Ադրբեջանի դեպքում: «Նոր Ազերբայջան» կուսակցության 25-ամյակի առթիվ օրերս ելույթ ունենալով՝ **Իլհամ Ալիեւը** հայտարարեց, որ իր երկիրը մտադիր չէ սկզբունքային փոփոխություն կատարել ԼՂ հարցում իր որդեգրած դիրքորոշման մեջ: Խոսելով Եվրոպայի մասին, նա ընդգծեց, որ Ադրբեջան-ԵՄ հարաբերությունները ապրել են արհեստական ճգնաժամ, եւ եթե այդ ճգնաժամը խորանա, ապա Ադրբեջանն իրավասու կլինի կատարելու իր ընտրությունը: Բայց գլխավորը Ալիեւի այն պնդումն է, թե Ադրբեջանը թույլ չի տա հայկական երկրորդ պետության ստեղծում, թեեւ Արցախի Հանրապետությունը փաստորեն արդեն գոյություն ունի:

Ինտրիգի երկրորդ մասն այն է, որ Ադրբեջանը հասկացնել է տալիս, թե Արեւմուտքն է առաջ մղում հայկական երկրորդ պետության նախագիծը: Եվ եթե նախագահ Սարգսյանը հրաժարվի Եվրոմիության հետ ստորագրել համաձայնագիրը, ապա Հայաստանում որոշակի շրջանակներ նրան կմեղադրեն դավաճանության մեջ, որի պատճառով Հայաստանը «դադարում է լինել ինքնիշխան պետություն»:

Ինտրիգի երրորդ մասն այն է, որ Թուրքիան եւ Ադրբեջանը փորձել են Ռուսաստանի միջոցով առաջ տանել ԼՂ հակամարտության կարգավորման իրենց տարբերակը, որի մանրամասնությունները հայտնի չեն: Սոչիում ՌԴ նախագահ Պուտինի հետ բանակցելուց առաջ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** երկու անգամ բարձրացրեց այդ հարցը՝ ակնարկելով, որ այստեղ շատ բան կախված է Ռուսաստանից եւ անձամբ Պուտինից: Տվյալ դատողությունների հիմքը հակաարեւմտյան Թուրքիա-Ռուսաստան-Ադրբեջան ենթադրյալ դաշինքն է, ինչը, «Ռեգնում» գործակալության գլխավոր խմբագիր **Մոդեստ Կոլերովի** կարծիքով, ընկալվում է որպես յուրատեսակ դիվանագիտական խաղ, որի հետեւում նկատվում է Արցախի հակամարտությանն ակտիվորեն մասնակցելու եւ Անդրկովկասում սեփական դիրքերն ամրապնդելու Թուրքիայի ձգտումը: Պատահական չեն տեղեկությունների այն արտահոսքերը, որոնց համաձայն Երեւանն իբր պատրաստվում է կարճ ժամկետում Բաքվին վերադարձնել հինգ կամ յոթ շրջաններ: Սակայն Սոչիի Պուտին-Էրդողան բանակցություններում Ղարաբաղի հարցը նշված չէր օրակարգում: Նախ եւ առաջ այն պատճառով, որ դա չի վերաբերում ռուս-թուրքական երկկողմ հարաբերություններին:

Մոսկվայում ՀՀ արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** օրերս հանդիպում ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ: Բանակցություններին մասնակցում էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկը: Ստացված տեղեկությունների համաձայն, կողմերը քննարկել են ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ Վիեննայում, Սանկտ Պետերբուրգում եւ Ժնեւում ընդունված որոշումների կենսագործմանն առնչվող հարցեր: Համանման բանակցությունների վարման նպատակով Մոսկվա կժամանի նաեւ Ադրբեջանի արտգործնախարար **Էլմար Մամեդյարովը**: Եվ ահա հաղորդվում է այն մասին, որ առաջիկա շաբաթվա սկզբներին Երեւան եւ Բաքու է ժամանելու ՌԴ արտգործնախարար **Սերգեյ Լավրովը**: Տարբերակներից մեկի համաձայն, Լավրովը մտադիր է համաձայնեցնել Մամեդյարով-Նալբանդյան առաջիկա հանդիպման օրակարգը, որի կենտրոնում կլինեն Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները: Մեկ այլ տարբերակի համաձայն, Լավրովը կառաջարկի հակամարտության կարգավորման նոր ծրագիր:

Ըստ երրորդ տարբերակի, Մոսկվան Բաքվին եւ Անկարային թույլ է տվել օգտագործել իրեն, բայց ժամանակն է, որ «դաշտը մաքրվի եւ իրավիճակը սառեցվի մինչեւ ավելի լավ ժամանակներ»: Այնպես որ ՌԴ արտգործնախարարին սպասվում են լարված բանակցություններ, եւ հնարավոր է, որ ամեն ինչ սկսվի նորից:

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT.QXD 15/11/2017 22:17 Page 11



# ՌԴ-ՉԺՀ-Իրան-Ռիադ. դաշինք ընդդեմ նավթադոլարների

## *Քիչ հայտնի մանրամասնություններ*

Ինչպես ֆիզիկայում, այնպես էլ աշխարհաքաղաքականության մեջ ուժը հարուցում է իրեն հավասար հակադարձ ուժ: Նախահարձակ կողմը ճնշված երկրին դրդում է գտնել դաշնակիցներ եւ դիմել պատասխան գործողությունների: Հիմա հենց դա է տեղի ունենում ԱՄՆ-ի դեպքում:

2016 թվականին Չինաստան-Իրան եւ Չինաստան-Ռուսաստան եռանկյունն արդեն ուրվագծվել էր, իսկ չորս միավորների ամբողջականացման համար պահանջվում էր միայն Թեհրան-Մոսկվա տնտեսական դաշինքը եւ սաուդցիների ներգրավումը:

2017թ. նոյեմբերին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Իրանի Գերագույն հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի հանդիպումը ռուս-իրանական առաջին լուրջ շփումների հիմքը դրեց: Խամենեին առաջարկեց միավորել երկու երկրների ջանքերը միջազգային առեւտրում դոլարից հրաժարվելու, երկկողմ առեւտրում ազգային արժույթների օգտագործման հաշվին դոլարից խուսափելու համար: Դեռ մեկ տարի առաջ, երբ ԱՄՆ-ում չէր վիճարկվել Իրանի միջուկային ծրագրի հետ կապված շատ կարեւոր բազմակողմ գործարքը, պատժամիջոցներ չէին ձեռնարկվել իրանցի պաշտոնատար անձանց նկատմամբ եւ չէին բարդացվել Իրանի զարգացման հեռանկարները, Թեհրանում կառավարող վերնախավի տրամադրությունները հիմնականում ամերիկամետ էին:



Միայն 2016թ. Ռուսաստանի եւ Իրանի երկկողմ ապրանքաշրջանառությունն ավելացավ 70 տոկոսով: Ռուսական կողմը ծրագրում է Ադրբեջանական գազամուղով գազ մատակարարել Իրանի հյուսիսին: Եթե, ինչպես ենթադրվում է, ռուսական եւ իրանական նախագծերը ֆինանսավորվեն ազգային արժույթներով, ապա դա կարող է ցավագին հարված դառնալ ԱՄՆ-ի համար: Սրա արդյունքում նավթադոլարներից երկու մեծ տերությունների՝ Ռուսաստանի եւ Չինաստանի հրաժարումը, ինչպես նաեւ էներգակիրների խոշորագույն արտադրողներ Ռուսաստանի եւ Իրանի հետ խոշորագույն սպառող Չինաստանի եռյակ դաշինքը զգալի է եւ շատերի հետաքրքրությունն է առաջացնում արդեն այսօր:

Վերջերս Վենեսուելայի դեմ ԱՄՆ-ի ձեռնարկած պատժամիջոցներից հետո յուանով կատարվող նավթի առեւտրին միացավ նաեւ Վենեսուելան: Սակայն դաշինքի գլխավոր «մրցանակը» կարող է դառնալ Սաուդյան Արաբիան, որն առաջին երկչոտ քայլերն է կատարում դեպի Մոսկվա եւ Պեկին շրջվելու համար:

Սաուդյան Արաբիան նավթադոլարի հիմքն է, բայց նաեւ մերձավորարեւելյան երկիր, որը ղեկավարվում է որոշակի շահադիտական նկատառումներով: Սա նշանակում է, որ անցած տարիներին սաուդցիների ամերիկամետ դիրքորոշումը կապված է եղել ոչ միայն ԱՄՆ-ի սպառնալիքների, այլեւ սաուդյան գահատոհմի անձնական շահերի հետ: Մինչեւ 2017 թվականը ԱՄՆ-ը նավթի խոշորագույն ներմուծողն էր աշխարհում, եւ, հետեւաբար, սաուդցիների արտադրանքի գլխավոր սպառողը: Այժմ իրավիճակն արմատապես փոխվել է:

Ներկայումս Սաուդյան Արաբիան Չինաստանին մատակարարում է տարեկան մոտ 16 մլրդ դոլարի նավթ եւ, փաստորեն, նույնքան էլ առաքում է ԱՄՆ: Չինաստանի շուկայում սաուդցիների գլխավոր մրցակիցը Ռուսաստանն է, որն անցյալ տարի ՉԺՀ-ին վաճառեց 17 մլրդ դոլարի նավթ: Սաուդցիները հասկանում են, որ ռուսները նավթի մատակարարման ծավալներով իրենցից առաջ անցան վերջերս Չինաստանին յուանով մատակարարելու վերաբերյալ կնքած գործարքի շնորհիվ: Չինաստանն ու Ռուսաստանը պարզորոշ ցուցադրեցին, թե ինչ է հարկավոր անել «ընտանիքում» ընդունելի դիրքերում մնալու համար:

Ռուսաստանն ու Չինաստանը հաստատ մտադրվել են առաջիկա ամիսներին նավթի մատակարարումներն իրականացնել սեփական՝ ոչ դոլարային արժույթներով: Այդ նպատակով Չինաստանը համաշխարհային շուկայում ընդունված WTI-ի եւ Brent-ի փոխարեն արդեն ներկայացրել է նավթի առեւտրի յուանային էտալոն: Իսկ մոտ ժամանակներս գործի կդնի մեխանիզմ, որտեղ նավթի դիմաց յուան ընդունող յուրաքանչյուր արտահանող կկարողանա յուանը ոսկու փոխարկել Շանհայի սակարանում:

Դրանից կշահեն նավթ արտահանող բոլոր երկրները, մանավանդ՝ Վաշինգտոնի հետ լարված քաղաքական հարաբերություններ ունեցողները: Դոլարի դիրքերի ամեն մի թուլացում կնվազեցնի Վաշինգտոնի հակառուսական պատժամիջոցների հնարավորությունները, այս կապակցությամբ արձանագրում է «Ռեգնում» գործակալությունը, իսկ Ռուսաստանը, Իրանը, Վենեսուելան եւ Սաուդյան Արաբիան կկարողանան հարկ եղած դեպքում խուսափել պատժամիջոցներից:

Ռուսաստանը ՉԺՀ-ի նավթի գլխավոր մատակարարն է, ՉԺՀ-ն՝ այդ վառելիքի գլխավոր գնորդը, Իրանն ու Վենեսուելան նույնպես նրանց հետ են, բայց առանց Սաուդյան Արաբիայի ներգրավման հեղաշրջում տեղի չի ունենա: Ռուս-չինական դաշինքը բոլոր նախադրյալներն ունի սաուդցիներին իր կողմը գրավելու համար:

Նախ եւ առաջ, Մոսկվան եւ Պեկինը առաջարկում են ոչ միայն հրաժարվել դոլարային նավթային շուկայից եւ անցնել ոսկու ու յուանի: Պեկինը երաշխավորում է նրանց վնասների փոխհատուցումը, իսկ Մոսկվան՝ ձեռնարկումների պաշտպանությունը: Երկրորդ, եթե Սաուդյան Արաբիան Մոսկվայի ու Պեկինի պայմաններին համաձայնելով կորցնի ամերիկյան շուկայի մի մասը, ապա Չինաստանում նավթային նոր բորսայի գոյությունը էական հակակշիռ կդառնա: Երրորդ, Վաշինգտոնը Էր-Ռիադին արդեն սպառնում է պատժել անհնազանդության համար: Իսկ ներկայիս թագավոր Սալման իբն Աբդել-Ազիզ ալ-Սաուդը բավականաչափ խելացի է եւ հասկանում է, թե ամերիկացիները ինչպես են վարվում իրենց երբեմնի դաշնակիցների հետ, նույնիսկ եթե նրանք համաձայնվում են ԱՄՆ-ի պայմաններին:

Եվ այդուհանդերձ, տվյալ գործընթացում եռյակ դաշինքին ամենից շատ օգնում է հենց ԱՄՆ-ը: Հենց որ սաուդցի թագավորը պաշտոնական այց կատարեց Մոսկվա, ֆինանսական շուկայի ամերիկացի եւ բրիտանացի կարգավորիչները անմիջապես մտահոգություն արտահայտեցին սաուդցիների նավթային խոշորագույն ընկերություն Saudi Aramco-ի եւ սաուդյան իշխանությունների սերտ կապերի առնչությամբ: Այն, ինչը անցյալում Արեւմուտքի համար խնդիր չէր, այժմ դարձել է անհաղթահարելի պատ: Երկու տրիլիոն դոլար կապիտալ ունեցող ընկերության համար միմյանց հետ պայքարող Նյու Յորքի եւ Լոնդոնի սակարանները հանկարծ պարզեցին, որ դրա կապիտալը հազիվ մեկ տրիլիոնի է հասնում:

Պատճառն ակնհայտ է. OPEC-ի հետ նավթային գործարքի մեջ Ռուսաստանի ներգրավումը փաստորեն վիժեցրեց Ռուսաստանի տնտեսությունը խեղդելու Վաշինգտոնի ծրագիրը, իսկ ռուսական -400 համալիրներ ձեռք բերելու Էր-Ռիադի որոշումը սաուդցիներին հնարավորություն է տալիս նոր իրավիճակ ստեղծելու Մերձավոր Արեւելքում եւ դուրս գալու ամերիկյան «ռազմական հովանոցի» տակից:

Այժմ իրավիճակն արմատապես փոխվել է: Ռուսաստանն առաջարկում է լուծել սաուդցիների ռազմական խնդիրները, իսկ Չինաստանը պատրաստ է ֆինանսապես աջակցել՝ 100 մլրդ դոլարով ձեռք բերել Saudi Aramco ընկերության բաժնետոմսերի 5 տոկոսը: Երկու երկրները ռազմական եւ ֆինանսական առումներով պատրաստ են կասեցնել սաուդցիների վրա գործադրվող ճնշումները: Եթե հաջողվի սաուդցիներին համոզել յուանով նավթի առեւտուր անել, ապա երեքին գումարած մեկ համակարգը կարող է շատ բան փոխել նավթադոլարային համակարգում, Հարավային Կորեան եւ Ճապոնիան կարող են միանալ այդ դաշինքին, իսկ հետո կլինեն նաեւ ուրիշ երկրներ:

Իհարկե Վաշինգտոնը Սաուդյան Արաբիայի նկատմամբ կարող է կիրառել հարկադրանքի միջոցներ: Օրինակ, կարող է դժվարացնել սաուդյան պարտատոմսերի տեղաբաշխումը, որոնք ներկայումս օգտագործվում են բյուջեի պակասորդը ծածկելու համար, սեպտեմբերի 11-ի զոհերի հայցադիմումների շրջանակներում սառեցնել սաուդյան ակտիվները: Չի կարելի բացառել նաեւ Էր-Ռիադի նկատմամբ գունավոր հեղափոխությունների կիրառումը: Սակայն Չինաստանը գրավիչ է նավթի առեւտրի հարցում, քանզի կարելի է յուանով նավթ վաճառել Շանհայում եւ ապա յուանը ոսկու փոխարկել Հոնկոնգի սակարանում:

Նավթ-յուան-ոսկի սխեման նավթարտահանողներին կազատի նավթադոլարային կախվածությունից: Իսկ Ռուսաստանը կարագացնի այդ գործընթացը՝ յուանով նավթ վաճառելով Չինաստանով, ռուբլով՝ Պետերբուրգի սակարանում:

Ռուսաստան + OPEC գործարքը ցույց է տալիս, որ Մոսկվայի եւ Էր-Ռիադի համագործակցությունը կարող է լրջորեն ազդել նավթի համաշխարհային շուկայի վրա, իսկ Ռուսաստանի, Իրանի, Չինաստանի, Սաուդյան Արաբիայի, Վենեսուելայի եւ մյուսների միաժամանակյա հրաժարումը նավթասոլարային առեւտրից կարող է իսկական հեղափոխություն կատարել ֆինանսական աշխարհում, ըստ որում, բոլոր վերոհիշյալ երկրների օգտին:

Առայժմ աշխարհն ավելի շատ վստահում է Դաշնային պահուստային համակարգի արժույթին՝ դոլարին, քան չինական յուանին:

Ամերիկյան արժութային համակարգի առաջին իսկ դժվարությունների դեպքում նավթադոլարը կկորցնի իր դիրքերը: Այդ փաստի հետ կապված ճգնաժամը կթուլացնի ԱՄՆ-ը, բայց ֆինանսատնտեսական ճգնաժամն այս անգամ ԱՄՆ-ին թույլ չի տա սեփական դժվարություններից ազատվել ուրիշի կամ ուրիշների հաշվին: **Պ.Ք.**

# Պատերազմի վտանգ Մերձավոր Արեւելքում

Վերջին օրերին ի հայտ է եկել վտանգ, թե Մերձավոր Արեւելքում կարող է նոր պատերազմ բռնկվել: Մեղավորը Սաուդյան Արաբիան է, որը Լիբանանը իբրեւ նոր մարտադաշտ է ընտրել եւ անսովոր դաշինք կնքել Իսրայելի հետ, հաղորդում է գերմանական Suddeutsche Zeitung թերթը:

Սաուդյան Արաբիայի համար նվազ չափով խոսքը լիբանանյան «Հզբոլլահի» դեմ պայքարելու մասին է, բայց ավելի շատ՝ տարածաշրջանում տիրապետող դիրք գրավելու եւ Իրանի ազդեցությունը թուլացնելու մասին:

Սաուդցիները չեն ուզում ինքնուրույնաբար ռազմական հարձակում սկսել: Իսկ Իսրայելը կկրողանար նրանց փոխարեն կատարել այդ կեղտոտ գործը: Իրավիճակը այս խոսքերով է բնութագրել Իսրայելում ԱՄՆ-ի դեսպան եւ Մերձավոր Արեւելքի գործերի նախկին հավասարմասար **Դանիել Շապիրոն**:

Հակամարտությունը Սիրիայից տեղափոխվում է դեպի հարավ: Արդեն մի քանի շաբաթ է, ինչ Իսրայելը Սիրիայում օդային հարվածներ է հասցնում «Հզբոլլահի» դիրքերին, նշում է գերմանական թերթը: Ըստ որում, Իսրայելի վարչապետ Նաթանյահուի համար պատերազմը կլիներ վտանգավոր ձեռնարկում, քանզի մեծ է այն բանի հավանականությունը, որ Իսրայելի հարձակումից հետո հակամարտությանը կմիջամտի Իրանը, ինչպես դա տեղի ունեցավ հարեւան Սիրիայի դեպքում:

Դոնալդ Թրամփի փեսա Ջարեդ Կուշների Սաուդյան Արաբիա եւ Իսրայել կատարած մի քանի այցելություններից հետո ի հայտ եկան ենթադրություններ, որ ռազմական գործողություններին քողարկված կարող է մասնակցել նաեւ ԱՄՆ-ը: Որպես անդրկուլիսյան «տիկնիկավարներ» հանդես եկող Սաուդյան Արաբիան եւ ԱՄՆ-ն իրենցից ներկայացնում են վտանգավոր համադրություն, ընդգծում է Suddeutsche Zeitung-ը:

Իսրայելը իր ռազմական զորությունը ներկայումս ցուցադրում է իր պատմության մեջ օդուժի խոշորագույն զորավարժություններում: Այդպիսով, Իսրայելի կառավարությունը ցույց է տալիս իր պաշտպանունակությունը: Սակայն նա պատրաստ է նաեւ հարձակման, եւ դրանով իսկ ենթակա է դառնում Սաուդյան Արաբիայի եւ Իրանի պատերազմին միջնորդավորված ձեւով մասնակցելու վտանգին: Նաթանյահուն գնում է հակամարտության ծավալման վտանգավոր ուղիով, եզրակացնում է թերթը:

**Պ.Ք.**

# ՎիվաՍել-ՄՏՍ-ում կայացել է iPod ապրանքանիշի ստեղծող Թոնի Ֆադելի հանդիպումը ՏՀՏ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ

Այսօր ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր, լիբանանյան ծագումով ամերիկացի գյուտարար, «Nest Labs» ընկերության հիմնադիր Թոնի Ֆադելն այցելել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակ: Թոնի Ֆադելն ութերորդն է ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակին արժանացածների շարքում: iPod ապրանքանիշի հեղինակ, գյուտարար Թոնի Ֆադելը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն, մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ **Ռալֆ Յիրիկյանը**, մրցանակաբաշխության գործադիր խորհրդի նախագահ, «Սինոփսիս Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն **Հովիկ Մուսայելյանը**, մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ, «Վիասֆեր Տեխնոպարկ» ընկերության նախագահ **Թոնի Մորոյանը** պատասխանել են լրատվամիջոցների հարցերին:



Թոնի Ֆադելը ՏՀՏ (Տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների) հանրության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում անդրադարձել է տարբեր թեմաների, այդ թվում՝ արհեստական բանականության, տեխնոլոգիաների զարգացման եւ հանրության ու հաջորդ սերունդների բարեկեցության վրա դրանց թողած ազդեցությանը: Պատասխանելով այն հարցին, թե արդյո՞ք բոլոր ոլորտներում ռոբոտների տարածումը սպառնալիք չի ներկայացնում մարդկության համար, Ֆադելն ասել է. «Ես լավատես եմ մարդու եւ ռոբոտի համագոյակցության հարցում»:

Թոնի Ֆադելի խոսքով՝ գյուղատնտեսության ոլորտը հսկայական է եւ տեխնոլոգիաները կարող են զգալիորեն խթանել ոլորտի եկամտաբերությունը՝ ի նպաստ աշխարհի տարբեր մասերում գտնվող գյուղատնտեսական համայնքների բարեկեցության: Ըստ գյուտարարի՝ գյուղատնտեսական տեխնոլոգիաներն այն ոլորտն է, որտեղ նա ցանկանում է ներդրումներ կատարել առաջիկա տարիների ընթացքում:

iPod-ի ստեղծող Թոնի Ֆադելն Հայաստան է այցելել՝ ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակը ստանալու նպատակով: Մրցանակաբաշխության արարողությունը կկայանա այսօր՝ ՀՀ Նախագահի նստավայրում: ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի ամենամյա մրցանակը հիմնվել է 2009թ.՝ ՀՀ Նախագահի հրամանագրով, եւ շնորհվում է ՏՏ ոլորտում բացառիկ ներդրումներ կատարած հեղինակավոր անհատների, որոնց ներդրումները ՏՏ ոլորտում բերել կամ բերում են հեղափոխական կամ համանման բնույթ ունեցող զարգացումների, որոնք դրականորեն են անդրադարձել կամ ներուժ ունեն դրականորեն անդրադառնալու պատմության ընթացքի վրա:

Թոնի Ֆադելը ութերորդն է ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակին արժանացածների շարքում: Նախորդ մրցանակակիրներն են «Ինտել» կորպորացիայի տնօրենների խորհրդի նախկին նախագահ Քրեյգ Բարրեթը (2010թ.), «Էփլ Քոմփյութերս» կորպորացիայի համահիմնադիր Սթիվ Վոզնյակը (2011թ.), «Սինապտիկս» ընկերության պատվավոր նախագահ Ֆեդերիկո Ֆաջինը (2012թ.), Կիսահաղորդիչային արդյունաբերության մասնագետների միության եւ «Թեքնո վիժն» ընկերության նախագահ Ցուգիո Մակիմոտոն (2013թ.) ե՛ւ «Cisco» ընկերության զարգացման գծով նախագահ Մարիո Մացցոլան, (2014թ.), «Կասպերսկի լաբորատորիայի» գործադիր տնօրեն Եվգենի Կասպերսկին (2015թ.) եւ «Open-Root» կազմակերպության գլխավոր տնօրեն, համացանցի համահիմնադիր Լուի Պուզենը (2016թ.):

Անդրադառնալով ՀՀ Նախագահի մրցանակին՝ Թոնի Ֆադելը մասնավորապես ասել է. «Ինձ համար մեծ պատիվ է ստանալ այս մրցանակը ե՛ւ անկախ նրանից, թե որքան փոքր կամ մեծ է ձեր երկիրը, մեկ անհատ կամ մեկ թիմ կարող է հանգեցնել աշխարհում մեծ փոփոխության: Եվ կարիք չկա, որպեսզի դուք հասնեք Սիլիկոնյան հովիտ՝ արդեն հաջողված նախաձեռնությունը կրկնելու համար: 1991 թ.՝ նույն թվականին, երբ Հայաստանը ձեռք բերեց իր անկախությունը, ես առաջին անգամ մեկնեցի Սիլիկոնյան հովիտ, եւ դա հրաշալի փորձառություն էր: Այնուամենայնիվ՝ ես որոշեցի, որ պետք է շրջագայեմ ամբողջ աշխարհով մեկ՝ իմանալու համար ավելին, թե ինչպես կարող է տեխնոլոգիան միավորել տարբեր համայնքների՝ դրանք ավելի լավը եւ ուժեղ դարձնելու համար: Ուստի ես քաջալերում եմ բոլոր նրանց, ովքեր գտնվում են Հայաստանի ՏՀՏ ոլորտում կամ ցանկանում են մուտք գործել այդ ոլորտ, որպեսզի ներարկեմ վստահություն առ այն, որ հնարավոր է արձանագրել մեծ հաջողություններ եւ դրանց հասնել սեփական ռեսուրսներով, պայմանով՝ եթե բաց եք աշխարհի առջեւ»:

«Երբ ութ տարի առաջ հիմնվեց այս անչափ կարեւոր մրցանակաբաշխությունը, քչերն էին հավատում, որ այն իրականանալի է, որ ՏՏ ոլորտի համաշխարհային լեգենդներն ամեն տարի կժամանեն Հայաստան ստանալու այս պատվավոր մրցանակը: Այսօր այն լիովին կայացած եւ միջազգային տեխնոլոգիական հանրության կողմից ընդունված պարգեւ է: Եվ ես եւ իմ գործընկերներն անչափ հպարտ ենք այս հանգամանքով», - ասել է Հովիկ Մուսայելյանը:

«Զարգացած տեխնոլոգիաները տնտեսական զարգացման եւ առաջընթացի գրավականն են: Տեխնոլոգիական լուծումները ստեղծագործ մտքի, որակյալ մասնագիտական կրթության եւ նորարարությունը խթանող միջավայրի արգասիք են: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանն ունի չիրացված հզոր ներուժ: Որպես ՏՀՏ ոլորտի ներկայացուցիչ՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակաբար աջակցում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում ազգային կարեւորություն ներկայացնող ՏՀՏ ծրագրերի իրականացմանը՝ այդպիսով խրախուսելով ոլորտի հետագա առաջընթացը: Ութերորդ տարին անընդմեջ մենք մասնակցում ենք այս ծրագրի իրականացմանը՝ նախեւառաջ նպատակ ունենալով նպաստել հայ հասարակության եւ աշխարհի կողմից Հայաստանի, որպես ՏՀՏ ոլորտում զարգացման նշանակալի հեռանկար ունեցող երկրի, վարկանիշի բարձրացմանը»,- ասել է Ռալֆ Յիրիկյանը:

«Այս տարի մենք մեծ պատիվ ունենք ավելացնելու ՀՀ Նախագահի մրցանակաբաշխության դափնեկիրների շարքին Թոնի Ֆադելին՝ գլոբալ ՏՏ ոլորտի հսկային, ով իր հայտնագործությունների շնորհիվ մեծ ազդեցություն է ունեցել մարդկության վրա: Թոնին կարողացել է նախագծել եւ ստեղծել iPod-ի ապրանքանիշը, որը հանդիսանում է հիմնական բջջային հարթակներից մեկը եւ որն արդեն փոխել է գլոբալ արդյունաբերությունը, տնտեսությունը եւ մարդկության զարգացման ընթացքը», - նշել է Թոնի Մորոյանը:

ՏՏ ոլորտում ՀՀ Նախագահի մրցանակը կարեւոր է՝ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հնարավորությունների ստեղծման, ինչպես նաեւ Հայաստանը աշխարհի ՏՏ քարտեզի վրա՝ որպես բարձր տեխնոլոգիաների ոլորտում զարգացման զգալի ներուժ ունեցող երկիր, ներկայացնելու տեսանկյունից: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործունեության հիմքում ընկած է համոզմունքը, որ հայ երիտասարդությունն ունի անհրաժեշտ որակներ եւ ինքնակատարելագործման ներուժ, որի լիարժեք բացահայտման համար անհրաժեշտ է հետեւողական աջակցությունը: ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակը կարեւոր է նաեւ հայ երիտասարդների ուշադրությունը ՏՏ ոլորտի վրա հրավիրելու առումով՝ իբրեւ մասնագիտացման ոլորտ: Մրցանակաբաշխության աջակցությունը ընկերության կողմից իրականացվող ներդրումներից է՝ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը նպաստելու առաքելության շրջանակում:

Ութերորդ տարին անընդմեջ ՎիվաՍել-ՄՏՍ-ը ստանձնում է մրցանակաբաշխության գլխավոր գործընկերությունը: Մինչ օրս ընկերությունը 162.2 միլիոն դրամ է տրամադրել՝ ծրագրի իրականացման նպատակով:

# Իրականացված երազանք՝ տարիների սպասումից հետո

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը եւ «Ֆուլեր տնաշինական կենտրոնը» տարիների հաջողված գործակցության արդյունքում բազմաթիվ ընտանիքների բնակարանամուտ տոնելու երջանկություն են ընձեռել: Այս անգամ գործընկեր կառույցների ղեկավարներն այցելել են Շիրակի մարզի Սարալանջ գյուղ, որտեղ բնակվող Սիմոնյանների համար գործակցության արդյունքները շոշափելի են դարձել:**

**50 տարի առաջ կառուցված նրանց տունը ժամանակի ընթացքում խարխլվել եւ հիմնանորոգման կարիք ուներ: Ամիսներ առաջ, երբ կազմակերպությունների կամավորներն ընտանիքի հետ շինարարական աշխատանքներ էին կատարում, Սիմոնյանների՝ տարիների երազանքի իրականացումն սկսվել էր: Այսօր արդեն ընտանիքի անդամները զգում են բարեկարգ տուն ունենալու բերկրանքը. անցյալում են կաթող տանիքն ու խոնավ պատերը, սանհանգույցի բացակայությունը եւ խոհանոցը փոխարինող բետոնապատ միջանցքը:**

**«Երջանիկ օր է մեզ համար, երբ հնարավորություն ունենք հյուրընկալելու այն մարդկանց, ովքեր իրականացրեցին մեր վաղեմի ու անիրականանալի թվացող երազանքը: Շատ բան հարկավոր չէ երջանիկ լինելու համար, սակայն երբեմն այդ քիչն էլ անհասանելի է լինում: Տան հետ կապված դժվարություններն այսօր անցյալում են, առօրյա բարդություններն արդեն չեն վախեցնում: Ամուր տանիքով ու տաք օջախում ոչ մի ձմեռ ու առօրյա հոգս սարսափելի չեն: Աստված օրհնի ձեզ»,- ասել է ընտանիքի հայրը՝ Էդուարդը:**

**Կազմակերպությունների վեց տարվա համատեղ ջանքերի շնորհիվ՝ բարեկարգ բնակարաններ, առողջ միջավայր եւ ապագայի նկատմամբ հավատ է ստեղծվել 150 ընտանիքի համար:**

**Նույն գյուղում բնակվող մեկ այլ ընտանիքի՝ Մկրտչյանների համար, օրը եւս տոնական էր. 10 հոգուց բաղկացած ընտանիքը երջանիկ էր իր հարկի տակ ընդունելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին՝ ում անձնական ֆինանսավորմամբ վերջապես հնարավոր եղավ հիմնանորոգել կաթացող տանիքը:**

**«Իրականացված բոլոր ծրագրերի արդյունքը հարկավոր է գնահատել երկու՝ տեսանելի հաջողության եւ մարդու հոգում կատարված փոփոխության տեսանկյունից: Այս մարդիկ, տարիների սպասումից հետո ձեռք են բերում բնակարան, ինչի կարեւորությունը քննարկման ենթակա չէ: Առավել կարեւոր ձեռքբերում է սեփական ուժերին հավատալու եւ ոտքերի վրա ամուր կանգնելու զգացողությունը: Տուն կառուցելու համար միայն ֆիզիկական ուժը բավարար չէ. անհրաժեշտ է նաեւ խնդիրները հաղթահարելու կամք եւ վճռականություն: Գործընկեր կառույցի հետ, տարիներ շարունակ ձգտում ենք մեր հայրենակիցներին փոխանցել այդ կամքն ու լավատեսությունը»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**«Մեր այցելությունը զուտ մշտադիտարկում չէ, այլ մեր ընտանիքների կողքին լինելու, նրանց ուրախությունը կիսելու հնարավորություն, ինչը, շատ դեպքերում, բավական կարեւոր հոգեբանական խնդիր է լուծում: Բնակարանաշինության մեջ ներդրում կատարելով, մենք ոչ միայն առողջ միջավայր, այլեւ ավելի լավ ապագայի հիմք ենք ստեղծում ընտանիքի անդամների համար»,-ասել է «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» նախագահ Աշոտ Եղիազարյանը:**

**Բնակարանաշինության ծրագրի իրականացման համար ՎիվաՍել-ՄՏՍ-ը 2017 թվականին կատարել է 31 մլն ՀՀ դրամի, իսկ ընդհանուր առմամբ՝ մոտ 370 մլն ՀՀ դրամի ներդրում:**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 16.11.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

Ազգ ՀԱՎԵԼՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 43(355)
17 ՆՈՅԵՄԲԵՐ
2017

# «Պողիկտոսի» երկրորդ կյանքը 24 տարի անց

**Նաիր ՅԱՆ**

«Հայաստանում մութ է, ցուրտ, սով, իսկ հայերը «Պողիկտոս» են բեմադրում». գրել է արտասահմանյան մամուլը 1993-ին, երբ Հայաստանում մութ էր, ցուրտ, սով, իսկ հայերը «Պողիկտոս» էին բեմադրում: Դոնիցեթթիի «Պողիկտոսը» 1993-ին երեւանյան բեմ է հանել ՀՀ ժողովրդական արտիստ **Տիգրան Լեւոնյանը**: Հայաստանում ու օպերային թատրոնում հովհարային անջատումներ էին, բեմի տեխնիկական հնարավորությունները՝ սուղ. այդ պատճառով էլ «Պողիկտոսը» շատ քիչ խաղացվեց: Հետո եկան Տիգրան Լեւոնյանի եւ էլի մի շարք արտիստների համար ոչ բարենպաստ ժամանակներ, «Պողիկտոսը» դարձյալ հազվադեպ էր բեմ դուրս գալիս, սակայն 2001 թվականին քրիստոնեության ընդունման 1700-ամյակի կապակցությամբ այն ներկայացվեց Զվարթնոց տաճարում. օտարազգի հյուրերի արձագանքը հպարտություն ներշնչող էր:



Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար **Կոնստանտին Օրբելյանը** պաշտոնավարման առաջին իսկ ամիսներին խոստացավ անդրադառնալ իտալացի կոմպոզիտոր **Գաետանո Դոնիցեթթիի** «Պողիկտոս» երեք գործողությամբ օպերային:

Բեմադրական, ստեղծագործական աշխատանքները մոտ երկու տարի տեւեցին. «Պողիկտոսն» արդեն օպերային թատրոնի խաղացանկում է: Բեմադրող ռեժիսոր Տիգրան Լեւոնյանի ներկայացումը նույնությամբ վերականգնել է ռեժիսոր **Ժաննա Թամիզյանը**: Պրեմիերայից առաջ նա նկատեց. «Տիգրան Լեւոնյանն այնքան լավ է բեմադրել օպերան, որ որեւէ փոփոխության կարիք չկար: Այդ պատճառով էլ ես ուղղակի նույնությամբ վերաբեմադրել եմ այն: Դեկորացիաները, բարեբախտաբար, պահպանվել էին. մեզ մնում էր մի փոքր նորացնել, թարմացնել ու վերջ: Միայն զգեստներն ենք նորից կարել, բայց նախկին ներկայացման հագուստներին հար եւ նման: «Պողիկտոսը» դասական օպերա է իր ամբողջ բովանդակությամբ ու ձեւաչափով: Այդպիսին էլ պետք է պահպանել»:

Կոնստանտին Օրբելյանը եւս ոգեւորված էր օպերայի պրեմիերայով: «Պողիկտոսը» թատրոնի մշտական խաղացանկում կլինի, բայց ծանր դեկորների պատճառով հնարավոր չի լինի այն տարեկան 7-8 անգամից ավելի բեմ հանել:

«Պողիկտոսը» երեւանյան բեմում երկրորդ կյանք ստացավ: 24 տարի է անցել առաջին բեմադրությունից, վստահ եմ, որ հայ հանդիսատեսը նորից ոգեւորությամբ կընդունի այն, ինչպես 24 տարի առաջ: Օպերայի բեմադրությունը լուրջ աշխատանք ու ջանքեր է պահանջում. դասական գործ է ու հին ժամանակների շունչը, միջավայրը, կերպարները վերարտադրելը հեշտ չէ: Դոնիցեթթիի երաժշտությունը երգելն էլ հեշտ չէ: Այդ է պատճառը, որ «Պողիկտոսն» աշխարհի շատ քիչ թատրոններ են բեմադրել: Վերջերս մի բեմում տեսա այս օպերայի մոդեռնիզացված տարբերակը, բայց, հավատացեք, տպավորիչ չէր: Այս օպերան, իմ կարծիքով, պետք է պահպանել դասականի կանոններով ու օրենքներով: Ի դեպ, օպերան մեծապես առնչվում է մեր անցյալին, քրիստոնեության ընդունման պատմությանը. վստահ եմ, որ նաեւ այդ պատճառով այն կհետաքրքրի մեր երաժշտասեր հանրությանը»,- ասաց Կոնստանտին Օրբելյանը:

Ինչպես առաջին բեմադրության ժամանակ, այս անգամ էլ Պաոլինայի դերում ՀՀ վաստակավոր արտիստուհի **Անահիտ Մխիթարյանն** է: Պողիկտոսի դերերգը վստահվել է **Սարգիս Աղամալյանին**:

«Պողիկտոսը» ստեղծվել է 1838 թվականին Նեապոլի «Սան-Կարլո» թատրոնի համար, սակայն կրոնական բովանդակության պատճառով այն արգելվել է: Երկու տարի անց Դոնիցեթթին օպերան վերամշակել է ֆրանսիական բեմի համար: «Մարտիրոսներ» անվանումով այն բեմադրվել է 1840 թվականին , իսկ իտալական տարբերակի պրեմիերան եղել է 1848-ին Նեապոլի նույն թատրոնում, որտեղ 10 տարի առաջ այն արգելվել էր: «Պողիկտոսի» իտալերեն լիբրետտոյի հեղինակը **Սալվատորե Կամմարանոն** է: Նա բառերը գրել է Պիեր Կոռնելիի «Պողիկտոս» ողբերգության հիման վրա: Օպերայի սյուժեի հիմքում 3-րդ դարում Մալաթիա (Մելիտինե) քաղաքում ապրած ազգությամբ հայ Պողիկտոսի մահվան պատմությունն է: Չլսելով կնոջ աղերսանքները՝ Պողիկտոսը քրիստոնեություն է ընդունում՝ ենթարկվելով հալածանքների. նա իր նոր հավատքի համար նահատակ է լինում:

«Պողիկտոսի» պարտիտուրան Հայաստան է բերվել 1970-ականներին Վատիկանի գրադարանից Վազգեն առաջինի եւ Հռոմի պապի բանակցությունների շնորհիվ:

**Աստղիկ ԿԻՒՃԵԼԵԱՆ**

Լոնտոն

# Բացառիկ նուագահանդէս Լոնտոնի մէջ

9 նոյեմբեր 2017-ին Լոնտոնի St James Piccadilly եկեղեցի-համերգասրահին մէջ Հայ Հիմնարկը (Armenian Institute) իր հիմնադրութեան 16-ամեակը նշեց սքանչելի նուագահանէսով մը, մասնակցութեամբ համբաւաւոր երեք հայ արուեստագէտներու, յանձինս՝ ջութակահար **Լեւոն Չիլինկիրեանի**, թաւջութակահար **Ալեքսանդր Չաուշեանի** եւ դաշնակահար-կոմպոզիտոր **Կարէն Յակոբեանի**, որոնք թէեւ միջազգային երաժշտական շրջանակներու մէջ ծանօթ են որպէս մենակատարներ, սակայն այս առիթով հանդիսատեսին ներկայացան որպէս եռանուագի (trio) անդամներ: Սխալ չհասկցուելու համար մատնանշենք, որ Լեւոն Չիլինկիրեան, թէեւ որպէս մենակատար ունեցած է անհամար ելոյթներ, 1971-էն սկսեալ գլխաւորաբար նուագած է իր իսկ հիմնած «Չիլինկիրեան Քառեակ»ին հետ:

Իւրաքանչիւր արուեստագէտի կատարողական ոճն ունի իր անհատական կնիքը: Աւելին՝ ամէն արուեստագէտ իր նուագած ստեղծագործութիւնը կ՚ընկալէ ու կը մեկնաբանէ ըստ իր հասկացողութեան եւ զգացողութեան: Ուրեմն, միշտ չէ որ անհատապէս յաջողութեան բարձունքներ գրաւած արուեստագէտը նոյն բարձունքին կը հասնի, երբ ելոյթ կ՚ունենայ որպէս նուագախումբի մը մէկ անդամը: Անշուշտ Լ. Չիլինկիրեանի պարագան տարբեր է, քանի որ ան իր քառեակին հետ երկար տարիներ նուագելով կուտակած է հարուստ փորձառութիւն: Անտարակոյս, այդ հանգամանքը այս նուագահանդէսին բացառիկ յաջողութեան մէջ եւս ունեցաւ իր դրական դերը:

Արդ, կրնանք անվարան հաստատել, որ նուագահանդէսի ամբողջ տեւողութեան, եռեակի երեք անդամները ցուցաբերեցին բացառիկ իրարհասկացողութիւն, ինչպէս նաեւ երաժշտութեան հետ մերուելու, խնդրոյ առարկայ ստեղծագործութիւնը յաջող կատարելու բոլոր տուեալներն ու պահանջքները ներդաշնակօրէն իրար աղիւսելու հազուագիւտ ընդունակութիւն: Անոնք կրցան, առանց իրենց կատարողական ինքնուրոյնութեան դաւաճանելու, ստեղծել եռեակէ մը պահանջուած ներդաշնակ միասնականութիւնը, ձայներու՝ երբեմն կրքոտ, երբեմն ալ մեղմանուշ գիրկընդխառնումէն ծնած երաժշտական առինքնող մթնոլորտը:

Յայտագիրը կը բաղկանար Ժոզեֆ Հայտընի, Առնօ Բաբաջանեանի եւ Պեթհովենի դաշնամուրի համար գրուած եռանուագներէն, երեքն ալ հրաշալի ստեղծագործութիւններ՝ զորս *կատարեց ճշգրիտ մեկնաբանութեամբ, հաւասարակշռուած յուզականութեամբ, անկեղծութեամբ, ապրումով եւ մեծ արուեստագէտներուն միայն յատուկ վարպետութեամբ:*

Հանդիսատեսը եռանուագի կատարումները ողջունեց երկար ծափահարութիւններով, իսկ Բաբաջանեանի պարագային՝ գնահատանքի փոթորկոտ բացականչութիւններով:

Այսու կը շնորհաւորենք Հայ Հիմնարկը, իր հիմնադրութեան 16-րդ տարեդարձին առիթով: Կը շնորհաւորենք նաեւ Լեւոն Չիլինկիրեան, Ալեքսանդր Չաուշեան եւ Կարէն Յակոբեան եռեակը, որ այս առիթով իր տուած նուագահանդէսով երաժշտասէր հանդիսատեսին պարգեւեց անսահման գոհունակութիւն: Սոյն նուագահանդէսը ճիշդ բնութագրելու համար պարտադիր է օգտագործել ՀԻԱՍՔԱՆՉ ածականը:



Այս առիթով հակիրճ տեղեկութիւն տանք Հայ Հիմնարկի մասին:

ՀԱՅ ՀԻՄՆԱՐԿ (Armenian Institute)

Հայ Հիմնարկը կեանքի կոչուած է Լոնտոնի մէջ 2001-ին՝ հայ մշակութային արժէքներն ուսումնասիրելու եւ տարածելու նպատակով: Այդ առաջադրութեան իրագործման համար Հայ Հիմնարկը տարին շուրջ երեսուն ձեռնարկ կը կազմակերպէ, ներառեալ դասախօսութիւններ, ցուցահանդէսներ, համերգներ, գեղարուեստական հաւաքոյթներ եւայլն:

Հայ Հիմնարկը ունի բաւական մեծ եւ որակաւոր գրադարան, բաղկացած՝ հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն, օսմաներէն եւ վրացերէն 8000 հատորներէ, որոնք նուիրուած են հայոց եւ Հայաստանի դրացի երկիրներու պատմութեան եւ մշակոյթին:

Հայ Հիմնարկի մասին յաւելեալ տեղեկութիւն ստանալու համար դիմել՝

**www.armenianinstitute.org.uk**

AZG NEW MSHAKUIT.qxd 15/11/2017 18:09 Page 2



ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

# ՆԱԻՐԱ ՓԻՐՈՒՄՅԱՆԻ ՄԵԿ ՏԵՐԵՎԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Առաջին հայացքից պարզ եւ անգամ՝ պատմություն թվացող պատմվածքները բացվում են դեպի հոգու խորքերը տանող նեղ արահետով, սակայն այդ արահետը հասնում է խոր ակոսներով լայնահուն ճանապարհների, որոնք դարձյալ հեռուներ ունեն: Այսպիսին է իմ տպավորությունը Նաիրա Փիրումյանի «Տերեւը» պատմվածքների ժողովածուին ծանոթանալուց հետո:

Փոքր արձակն ունի բազում գաղտնիքներ: Այդ տարածքը նվաճելու համար գրողից մեծ ջանք է պահանջվում: Եվ այստեղ դա երեւում է: Հեղինակը փորձել է հնարավորինս մոտենալ ընթերցողին: Ժողովածուի մեջ մտնող վեց պատմվածքներն առանձնանում են իրարից, տարբերվում, թեեւ ունեն ներքին բազմաթիվ նմանություններ: Ոչ միշտ է պահպանված կառուցվածքի տրամաբանությունը, սակայն պատմողի նպատակասլացությունը հաճախ փրկում է այն: Դիպվածը, ուսումնասիրվածը, զգացածը փոխանցվում է ընթերցողին մանրամասնություններով, որոնք ավելի են ուժգնացնում ասելիքը: Փոխանցումն այս դեպքում դառնում է լավագույն միջոցը՝ պատումը, ցավը, կսկիծը հաղորդելու. ոչ թե լալու, կարեկցանք եւ գութ աղերսելու, այլ դրանք որպես կյանքի ռիթմ եւ գույն հայտնաբերելու: Պատմողի տեսակն է ամենահետաքրքրականն այստեղ, եւ ժողովածուի նորույթը պիտի գտնենք ա՛յս կերպարում: Նա հետեւում է իրադարձություններին, հերոսների ճակատագրերին, անկեղծանում է, եզրահանգումներ անում. «Երգը հոսում է, դուրս հորդում քո ներսից՝ խաղաղացնելով սիրտդ ու հոգիդ: Թե՛ մեկը, թե՛ մյուսը լի են ուրախ հիշողություններով, որոնք գալիս են հեռվից՝ դեռ արեւածագից: Տխրություն չկար առավոտյան, իսկ եթե կար, ապա այն չես էլ նկատել: Ուրիշների՝ օդում կրակած ծուռ միտքը, վատ վարմունքը թեթեւ խաղ ես համարել ու մոռացության գրկում թողել, քանզի դրանք հոգուդ խորքեր այդպես էլ չհասան»:

Սա մի փոքրիկ հատված է «Օրը» պատմվածքից, որտեղ օրը պատկերված է որպես ամբողջ մի կյանք՝ արեւածագից մայրամուտ: Խոհափիլիսոփայական ընդհանրացումներով եւ արձակի ինքնատիպ հյուսվածքով՝ այն տալիս է օրվա բոլոր մասերի տրամադրությունը, հայտնաբերում օրը վայելելու, այն զգալու, սքանչանալու եւ գնահատելու հնարավորությունները:

Կերպարներ եւ բնավորություններ ներկայացնելը Փիրումյանի ժողովածուի հենակետերից է: Կերպարները շեշտված բնավորություններ ունեն, որոնց նախատիպերը, ենթադրվում է, լավ ուսումնասիրված են: Դրանք գուցե նույնանում են պատմողին, բայց եւ հեռանում՝ դառնալով սոսկ պատումի հյուսվածքի միավորներ: Այս դեպքում պատմվածքների հաջողվածությունը պիտի փնտրենք հերոսների հոգեբանությունը ճշմարտորեն վրձնելու մեջ: Պատերազմ, ֆիզիկական եւ հոգեւոր ցավեր, կորուստ, անցյալի վերհուշ, կենցաղ, նվիրում, հատկապես վերջինն ամենահարազատն է արձակագրին:

Գրական ստեղծագործության մեջ միշտ երեւում է հեղինակը, նրա եւ հասարակության միջեւ կապը, միջավայրը, ժամանակը, հատկապես՝ կենսագրությունը: Զգալ ցավը եւ սոսկ վերարտադրել այն, նշանակում է հեռանալ գրականությունից, սակայն ցավը կերպավորելը, նրան որպես ընթացք ներկայացնելը շատերն են փորձել: Հայ արձակում լավագույն օրինակ է Աղասի Այվազյանի «Պորտը վրան» պատմվածքը, որի հերոսուհի Մարթայի՝ երեխա լույս աշխարհ բերելու ցավը ստեղծում է այն միջավայրը, որի շուրջ զարգանում է պատումի հյուսվածքը: Ճիշտ այդպես նաեւ «Տերեւը» ժողովածուի «30 սանտիմետրը»: Քսանամյա աղջկա կյանքի պատմությունը, կյանքի հանդեպ ունեցած այդօրինակ նվիրումը կոգեւորի շատերին: Խորհրդանշական է պատմվածքի բնաբաններից մեկը, որը վերցված է Օսքար Ուայլդից. «Տառապանքն ամենից նուրբ զգացումն է, որ կա աշխարհի երեսին: Խոնարհվում եմ նրա առաջ»:

Անցյալ դարի 50-ականներին ծնվեց Ֆրանսուազ Սագանի «Բարեւ, թախիծ» վիպակը, որը ցնցեց ֆրանսիացի ընթերցողին: Գրողը միանգամից ճանաչվեց իր երկրում, իսկ հետո՝ ամբողջ աշխարհում: Տասնութամյա աղջկա սիրո, կյանքի պատմությունը հետաքրքրեց շատերին: Վիպակում թեւում է թախծի թեման: Հերոսուհին անհարմարություն է զգում այդպիսի միջավայրում: Եվ թախիծը՝ որպես կերպար, առաջնորդում է վիպակի հյուսվածքին:

Նաիրա Փիրումյանի հերոսուհու ցավը բազմաշերտ է: Ցավի ֆիզիոլոգիան այստեղ գնահատվում է ամբողջապես: Դա սկսվում է հենց առաջին բառից եւ շարժել տալիս ծավալվող իրադարձությունների ընթացքը: Պատմողը ականատեսն է.




ինքն է զգում, ճանաչում, բացատրում: Հատկապես այս պատմվածքը կարդալուց հետո ընթերցողն իր համար չափազանց կարեւոր եզրահանգումներ կանի՝ կյանքը գնահատելու եւ այն պահպանելու համար: Հոգեւոր եւ ֆիզիկական ցավի ետեւում կյանքի շեմին մոտեցող աղջնակը հերոսաբար է տանում «ցավ-նվերը», որի միջոցով էլ նա բացահայտում է ոչ միայն իրեն, այլեւ՝ մինչ այդ անծանոթ շատ երեւույթներ. «Ժամանակը կանգ առավ, ես կորցրի նրա զգացողությունը: Անէացա թե՛ ժամանակի, թե՛ տարածության մեջ: Ոչ թե ապրում ես այդ ընթացքում, այլ ընդամենը շոշափում ես կյանքը: Խեղդվողի պես թափահարում ես ձեռքերդ, փորձում բռնել կյանքի փեշերից... Ցավն այնքան ուժեղ է, որ եթե սրախողխող անեն ոտքդ, չես էլ զգա: Իսկ եթե իրո՞ք սուր մտցնեն: Վստահ էի, որ միայն դա կհանգստացնի: Ցավոք, սուր չկար...»:

Փիրումյանը գրականություն է բերում իր հերոսին՝ ցավի եւ երջանկության սահմաններում բնակվողին, առաջինի դեպքում՝ երբ պիտի կրի այն, մյուսի դեպքում՝ երբ այն վաղուց իր մեջ է: Այսպիսի հակադրությունների տարածքում է հյուսվում պատմվածքը, որի պատմողը մանրամասնում է դեպքերի ընթացքը, հետեւում հոգու ձայներին մինչեւ վերջ, թափանցում իրականության գրեթե բոլոր շերտերը: Այս ոչ դյուրին եւ համարձակ աշխատանքը մեծ համբերություն է պահանջում. «Հենակների օգնությամբ սկսեցի կամաց-կամաց քայլել: Գնում էի նույնիսկ հարեւան սենյակներ՝ սուրճի ու զրույցի: Իրական սուրճի համը ես այս պատերի ներսում զգացի: Հետագայում ինչ ձեւով էլ պատրաստվեր սուրճը, կուրգանյան սուրճը մնաց անկրկնելի: Ինչո՞ւ: Երեւի հաճույքի այդ պահերը, երբ մեղմացած է ցավդ (իհարկե դեղով) եւ դու նստած ես քեզ նմանների հետ ու խոսում ես թեկուզ ամենաաննշան բաներից՝ ի՞նչ գույն ես սիրում, նոր եկած հիվանդն ըստ քեզ ինչպիսի՞ն է, չի՞ խանգարի գիշերներն իր ճիչերով, քեզ տալիս են լիարժեքության ու գեղեցիկ ապրելու բոլորովին նոր լիցքեր եւ, իհարկե, սուրճի համն էլ ուրիշ է դառնում»: «30 սանտիմետր»-ը հոգու պատմություն է: Շրջապատը, մյուս մարդկանց, միջավայրը պատկերելը սոսկ խլացնում են հերոսի ցավը, նրան ժամանակավորապես կտրում իրական ցավի որոգայթներից:

Ժողովածուում տեղ են գտել ոչ միայն ժամանակակից կյանքն արտացոլող պատմվածքներ, այլեւ ոչ հեռու անցյալի պատմական մի շարք իրադարձություններ, որոնք իրենց խոր կնիքն են դրել մարդկային ամենատարբեր ճակատագրերի վրա: Կինը հինգ տասնամյակ սպասել է ամուսնուն, որը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ անհայտ կորած է համարվել («Վերջին ժպիտը»): Նա գորովանքով է հիշում Նիկոլի հետ ապրած տարիները, սպասում նրա վերադարձին: Այդ դրամատիկ «վերադարձը» հենց պատմվածքի ամենահաջողված հատվածն է: Կյանքը խամրում եւ անգունանում է կնոջ համար: Այդ տարիքում էլ նա սրտում պահել էր սիրո կրակը, որը հանգչում է այն պահից սկսած, երբ հասկանում է, որ «եթե հինգ տարի իր հետ է ապրել, ապա քառասուն տարի՝ օտար հողում ա՛յն կնոջ հետ», ուրեմն՝ կգնա նորից այն երկիրը եւ այն կնոջ մոտ: Արեւհատի վերջին՝ մահվան ժպիտում անգամ սպասում կա. «Կհանդիպենք երկնքում, մեր փայ Աստծու քըշտին ու էլ չենք հեռանա իրարից»: Գրիգոր Զոհրապի հերոսուհին էլ «Այրին» պատմվածքում սպասում էր պանդուխտ ամուսնու վերադարձին: Կարեւոր չեն պատճառները, բայց սպասումը՝ որպես ժամանակի եւ հոգու ամբողջություն, երկու պատմվածքներում էլ կարեւորվում ու կերպավորվում է: Պատմական անցյալից բխող հուշերի վրա հիմնված «Ցավի գույնը» պատմվածքը օտար ափերում հայրենի Բիթլիսից գաղթած արեւմտահայերի իրականությունից վերցրած պատառիկ է: Վերհուշության, ճակատագրի հարվածի տակ, թեկուզ բարեկեցիկ կենցաղով երկրում, միեւնույն է, երբեք չի մոռացվում հայրենի երկիրը. կարոտը մշտարթուն հետապնդում է պատմվածքի հերոսներին:

Գրքի հեղինակը հավանաբար երկար է մտածել խորագրի մասին եւ ճիշտ հետեւության հանգել: Որովհետեւ խարիսխն այստեղ «Տերեւը» պատմվածքն է: Խորհրդապաշտական եւ իրատեսական գույներով՝ այն խորհելու առիթ է տալիս կյանքի հավերժության ու ակնթարթի, մեծ եւ առաջին հայացքից աննշան թվացող երեւույթների շուրջ: Խոկումներով, մակընթացություններով եւ տեղատվություններով՝ հեղինակը ստեղծում է ընդամենը մեկ տերեւի «առասպելը»: Թվում է՝ ամեն ինչ գիտենք թափվող աշնանային տերեւների, գույների եւ ուշ աշնան տրամադրության մասին, բայց պատմողը նոր բան ունի ասելու աշնան անտառում մենակյաց կանաչ տերեւի մասին: Ստեղծվում է տարածության եւ ժամանակի հետաքրքրական խտացում: Խորհրդանշական տերեւի կյանքն աղերսներ ունի միայնության եւ օտարացման հետ: Երամից հեռու, չհասկացված, թեկուզ երիտասարդ՝ տխրում է կանաչ տերեւը: Ստեղծվում է հոգեբանական պատկերայնության աշխարհ. գունային, զգայական, դեպի ավարտը շտապող պատումի յուրահատուկ հյուսվածք. «Ոչ ոք այգում չէր երեւում: Միայն ծառերն էին՝ մերկ ու գորշ, կանաչ տերեւը՝ կպած ճյուղից: Մերկ ծառի ճյուղին կպած միակ տերեւը, կանաչ տերեւը հանկարծ սկսեց մեղմիկ երգել: Նա երգո՞ւմ է, զարմացան ներքեւինները»: Փաստորեն, կարելի է լքվել, միայնակ մնալ, բայց՝ երգել: Պատմվածքը հագեցած է արձակի ռիթմի հնարավորություններով: Moderato տեմպի բոլոր ելեւէջները կան այստեղ, հանդարտ ընթացող պատումի ընթացքը խզվում է աղեկտուր տագնապից՝ հեռվից սպասվող ձայնից, որն ամբողջանում է արդեն պատմվածքի ավարտում պատկերված ցավի հետ: Բայց ֆանտասմագորիկ է հատկապես պատմվածքի ավարտը: Կանաչ տերեւը չի խառնվում ցածում արդեն հողին խառնված տերեւների հոգեվարքին: Նա ապրել է ուզում: Եվ շուտով գտնում է իր նման թեւավորների եւ նոր երամ կազմում նրանց հետ՝ չմոռանալով իր անցյալը, ընկերներին: Ազատությունը՝ որպես գլխավոր մետաֆոր, տիրական է այստեղ: Ընդհանրապես, ժողովածուն, ամբողջությամբ, կրում է իր մեջ ազատության գաղափարներ:

Վերջերս լույս տեսած Նաիրա Փիրումյանի «Տերեւը» ժողովածուն ապրված ցավի, տառապանքի ու տխրության խտանյութ ունի, բայց նաեւ՝ լավատեսության նվագներ: Ժողովածուում ընդգրկված պատմվածքներն, անշուշտ, կհետաքրքրեն ընթերցողին պատումի՝ միայն իրեն բնորոշ անհավանական աշխուժությամբ եւ փայլով:

## Վան Դայքի «Արշալույս» պիեսը Պան-Ասիական թատրոնի կատարմամբ

Նյու Յորքի Պան-Ասիական ռեպերտուարային թատրոնը 2018-ին ներկայացնելու է ճանաչված դրամատուրգ Ջոյս վան Դայքի «Արշալույս» (Daybreak) պիեսը: Այն մաս է կազմելու 41-րդ թատերաշրջանի խաղացանկին եւ Բեքեթ թատրոնում հանդիսատեսի դատին է հանձնվելու ապրիլի 21-ից մայիսի 13-ը ընկած ժամանակահատվածում: Բեմականացումը իրականացնելու է Լյուսի Թիպերգիենը:

«Արշալույսը» ազդեցիկ պիես, է ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի, որն ընդգրկում է երեք ժամանակաշրջան: Հիմնված է Ցեղասպանությունից ճողոպրած երկու ընկերուհիների իրական պատմությունների վրա: Այն ցույց է տալիս մարդկային ոգու տոկունությունը եւ համամարդկային կոչ է հղում ճանաչման եւ ապաքինման:

Ջոյս վան Դայքը թատերագրություն եւ Շեքսպիր է դասավանդում Նորթիստերն ու Հարվարդ համալսարաններում: Անդամ է «MacDowell Colony» եւ «Huntington Theatre Playwriting» թատերական ընկերությունների: 2009-ին նրա «Նավթի գողը» (The Oil Thief) պիեսը, բեմականացված «Boston Playwrights´ Theatre»-ի կողմից, արժանացել է «Էլիոթ Նորթոն» մրցանակի: Հայկական թեմայով նրա մյուս՝ «Աղջկա պատերազմը» (A Girl's War) պիեսը, բեմականացված երեք տարբեր թատերախմբերի կողմից, նույնպես մրցանակի է արժանացել (այս անգամ «Գասներ» մրցանակի) եւ ընդգրկվել է «Բոստոն Գլոբ» թերթի «Top Ten», տասը լավագույն պիեսների շարքում:

Հ. Ծ.

AZG NEW MSHAKUIT.qxd 15/11/2017 18:09 Page 3



# Լիլի Խարազովան՝ ԲՈՐԻՍ ՊԱՍՏԵՌՆԱԿԻ ՀԱՐԱԶԱՏ ՀՈԳԻՆ

**Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ**

Բորիս Պաստեռնակի գրական ժառանգությանը քաջատեղյակ ընթերցողին հայտնի է նրա «Լիլի Խարազովա» փոքր հոդվածը (1928)՝ գրված հավանաբար **Լիլի (Ելենա) Խարազովայի** (1903-1927) բանաստեղծական ժողովածուի հետմահու հրատարակության առթիվ:

Ո՞վ է եղել այդ հայանուն կինը, որին ռուս մեծ գրողը առանձին հոդված է նվիրել...

Նախ ներկայացնենք այդ հոդվածը՝ մեր թարգմանությամբ (որոշ կրճատումներով).

*«Առաջին անգամ ես տեսա Լիլի Խարազովային 1926 թվականի գարնանը եւ իր բանաստեղծություններից, իսկ ավելի շատ՝ պոեզիայի վերաբերյալ իր անկաշառ պատկերացումներից գուշակեցի, որ արվեստը նրա ճակատագրում միայն դիպված է եւ որ լինելով անդիմադրելի հմայիչ, շռայլորեն օժտված եւ խորապես դժբախտ՝ նա մնացել է ազատ եւ արվեստի ստրուկը չի դարձել: Նրա կյանքի վեպը, որը նա պատմեց այն ժամանակ, ամեն ինչ բացատրեց ինձ: Այդ սարսափելի վեպը վերապատմելն անհնար է, քանի որ դրան մաս կազմող մարդիկ ողջ են, իսկ մեղադրողը՝ ոչ:*

1918-ին, տասնհինգ տարեկանում, նա ստիպված եղավ միանգամից, գրեթե ստեղանից վեր կենալուց անմիջապես հետո հեռանալ Շվեյցարիայից, որտեղ նա ծնվել եւ մեծացել էր՝ դաստիարակվելով Ցյուրիխի լավագույն պանսիոններից մեկում այնպիսի միջոցներով, որոնցով ամերիկյան միլիարդատերերի դուստրերի շրջապատում կարող էին չհետաքրքրվել, եւ միայնակ, առանց հարազատների, կյանքում ոչ մի բառ լսած չլինելով ռուսերեն, տեղափոխվեց Ռուսաստան՝ քաղաքացիական պատերազմի, կործանման, սովի եւ տիֆի ժամանակ, այսինքն՝ եկավ մի աշխարհ, որը չեզոք երկրում դաստիարակված աղջկա համար ավելի անսպասելի էր, քան ժողովուրդների գաղթը, հայտնվեց մի կյանքի մեջ, որտեղից մինչեւ վերջին պտուտակը հանել էին հին պետությունը, բարոյական խստությունից զրկված տարտամ օդի մեջ, որը հազար վերստ շառավղով սուլում էր չկայացած ստորությունների դատարկության մեջ, մի շարք քաղաքներում՝ ամբողջ կարգուսարքով սառած՝ անանցանելի անտառների մեջ եւ մեռնող՝ հողի վրա, որը հանձնված էր ողջ հողագործ հասարակությանը, այլ կերպ ասած՝ հայտնվեց մի իրականության մեջ, որը թվում էր ծանր մի երազ, որը հազիվ արթնացած՝ կմոռացվի:

Այստեղ նա ընկել էր մի միջավայր, որը երբեք ոչ մեկի չի տվել ոչինչ՝ խառնաշփոթից ու վեճից բացի, որտեղ տասնյոթ տարեկանում մայրանալով, ականատես լինելով տարբեր քաղաքների եւ դիմակայելով անվերջանալի վիրավորանքների ու տանջանքների՝ կյանքի մասին կազմել էր այնպիսի հասկացություններ, որոնց պատճառով ցանկացած ուրախություն, որ նրան այդուհետ վիճակվելու էր, նրա համար անշրջելիորեն վերածվելու էր դժբախտության:

Լիլին..... քսաներկու տարեկան էր, երբ ինձ ծանոթացրին նրա հետ: Չնայած փորձություններին՝ նրա մեջ դեռ ապրում էր այն չարաճճի-երազող, երկչոտ-հանդուգն երեխան, որպիսին նա, հավանաբար, եղել էր, երբ իր հայրենիքում տարվել էր Մոիսսիով (***գերմանա-ավստրիական դերասան Ալեքսանդր Մոիսսի - Ա. Բ.***) *եւ ընկերություն արել Վիլլի Ֆեռերոյի (**իտալացի հրաշամանուկ դիրիժոր - Ա. Բ.**) հետ եւ որպիսին, հավանաբար, մնացել էր, երբ մեկ տարի անց, աշխարհի մյուս ծայրին, բոլորի կողմից նորից լքված եւ բոլորից կտրված, ծնել էր իր որդուն օտար, պաշարված քաղաքում՝ հրետանային ռմբակոծության տակ:*

Նրա գոյությունն ինձ թվաց անձեռնմխելի, բոլոր ճամփաները նրա առաջ բաց էին, ամենից հեշտ կարելի էր ենթադրել, որ արվեստը երբեւիցե կգրավի նրան լրջորեն ու կդառնա նրա իրական կոչումը: Առավել եւս ցավալի էր տեսնել, որ դա այդպես չէ եւ որ նրա ուժերը խաթարված են, եթե ոչ՝ վերջնականապես սպառված: Միայն մեկ միջոց կար նրան շտկելու եւ նույնիսկ երջանկացնելու, բայց ուրիշ պատճառներով այն անիրագործելի էր: Նրան պետք էր (եւ դեռ ուշ չէր) հետ ուղարկել Շվեյցարիա: Այս միջոցառման անհրաժեշտության՝ առանց այդ էլ ակնհայտ լինելը հատկապես համոզում էր Լիլիի տարօրինակ գրվածությունը, որն ուղեկցում էր նրա բոլոր շարժումներին: Դա կիսով չափ բացակա մարդու վիճակ էր, որն ինչ-որ տեղ ինչ-որ կարեւոր բան էր մոռացել եւ ապրում էր այդ անհայտության ճնշման ներքո: Պարզ էր դառնում, որ այդ անսպասելի բացթողումը նրա հետ տեղի էր ունեցել տանը՝ Ցյուրիխում, որտեղ, ութ տարի առաջ, պարտադրված դրամահավաքի աճապարանքի մեջ, նա սխալմամբ աչքաթող էր արել իր առողջությունը, եւ բավական էր, որ նա նորից հայտնվեր այնտեղ, եւ առողջությունն անմիջապես կվերադառնար, ինչպես հիշողությունը՝ խոր ուշաթափությունից հետո: Ցավոք սրտի, ինչպես ես արդեն ասացի, դա հնարավոր չեղավ անել, եւ, դուրս չգալով այդ կիսով չափ շղթայված վիճակից, որը նրան չէր խանգարում ապրել ու շարժվել եւ կողքից տեսանելի չէր՝ անցյալ տարվա աշնանը նա մահացավ տիֆից՝ այդպես էլ չտեսնելով իր իրական կյանքի շարունակությունն իր նախնական բնագրով, որը մի օր փոխել էին նրան խորթ եւ անտանելիորեն հորինված տարբերակով, որն էլ սպանեց նրան:

Ամեն մի հանկարծակիորեն ընդհատված կյանք հարուցում է ծանր կորստի զգացում: Հատկապես դժվար է հաշտվել դրա հետ, քանի որ այն անարդար է եւ հսկայական»: (տե՛ս Б.Пастернак, Лили Харазова, Полное собрание сочинений в 11 т., Москва, Слово, 2004, т. V, էջ 32):



Պաստեռնակը չի նշել, թե ինչու է դեռատի աղջիկը ստիպված եղել թողնել ապահով Շվեյցարիան ու մեկնել թոհուբոհի մեջ գտնվող Ռուսաստանը: Լիլին իրականում 1918-ին մեկնել է հոր հետքերով, որը չորս տարի առաջ վերադարձել էր իր ծննդավայր Վրաստան: Լիլին եղել է Սուխումում, Դոնի Ռոստովում, իսկ 1922-ին հաստատվել է Մոսկվայում: Գերմանալեզու ամսագրերում տպագրել է բանաստեղծություններ եւ ռուս պոեզիայից կատարած թարգմանություններ: Դարձել է Բանաստեղծների համառուսական միության անդամ: 1928-ին Բեռլինում հետմահու լույս է տեսել նրա գերմաներեն բանաստեղծությունների ժողովածուն՝ Մարիա Վիսս ծածկանունով:

Պրպտումները բացահայտեցին նաեւ, որ աղջկա հայրը՝ Թիֆլիսում ծնված **Գեորգի Արտեմի Խարազովը** (Գեւորգ Հարությունի Խարազյան, 1877-1931), եղել է բավական նշանակալից դեմք: Նա տնտեսագետ էր, մաթեմատիկոս, հոգեբան եւ բանաստեղծ, ռուս իրականության մեջ առաջին ֆրոյդիստներից մեկը, որի դերը ռուսական գիտության մեջ երկար ժամանակ մնացել է անտեսված: Խարազովը միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսում եւ Օդեսայում, մաթեմատիկա է ուսանել Հայդելբերգի (Գերմանիա) համալսարանում: 1902-ին նրա հրատարակած դոկտորական ատենախոսությունը գրավել է մաթեմատիկոսների ուշադրությունը: 1907-1908 թթ. աշխատել է Ցյուրիխի, իսկ 1909-1912 թթ.՝ Լոզանի համալսարաններում՝ խորանալով տնտեսագիտության մեջ, գրելով քաղաքատնտեսական աշխատություններ, ապարդյուն փորձել իր գաղափարները հաղորդակից դարձնել գերմանացի տնտեսագետ Կառլ Կաուտսկիին եւ ավստրիացի քաղաքական գործիչ Օտտո Բաուերին: Վերադառնալով Թիֆլիս՝ դարձել է գրական-բանաստեղծական շարժման մասնակից, աշխատակցել «Ars» ռուսերեն պարբերականին, փորձել կազմակերպել սեփական «Բանաստեղծության ակադեմիան»: Նրա տնտեսագիտական ժառանգությունն ամփոփված է երկու գերմաներեն հատորում (ստորագրված Գեորգ ֆոն Խարազով՝ von Charasoff)՝ «Կառլ Մարքսը մարդկային եւ դրամատիրական տնտեսության մասին: Նրա ուսմունքի նոր շարադրանքը» (1909) եւ «Մարքսիզմի համակարգը. ներկայացում եւ քննադատություն» (1910): Իր «Տեսական մեխանիկայի սկիզբը» աշխատությամբ (1923) Խարազովը հիմք է դրել Էյնշտեյնի հարաբերականության տեսության շուրջ բանավեճերին ԽՍՀՄ-ում: Նրանից պահպանվել են նաեւ Կաուտսկիին ուղղված երեք նամակ, հոդվածներ, որոնցում առաջինն է ռուսերենով անդրադարձել Ֆրոյդին, ինչպես նաեւ ռուսերեն բանաստեղծություններ, որոնցից մեկում հիշել է Լելային՝ դստերը... Հետաքրքրական է, որ Պաստեռնակը Մարինա Ցվետաեւային գրած մի նամակում Գեորգ Խարազովին բնորոշել է որպես «տաղանդավոր սրիկա, միստիկ անարխիստներից եւ միջակ որակի հանճարներից, մաթեմատիկոս, բանաստեղծ, ինչ ուզում ես»:

Գեորգի Խարազովը մահացել է 1931-ին, Զապորոժյեից ոչ հեռու գտնվող Կիչկասում: Հայտնի չէ, թե ինչպես է ընթացել նրա կնոջ՝ Մարիայի (հավանաբար՝ շվեյցարուհի կամ գերմանուհի) եւ երեք որդիների՝ Արթուրի, Սերգեյի եւ Ալեքսանդրի կյանքը (հայտնի է, որ վերջինս նույնպես տեղափոխվել է Ռուսաստան, որտեղ 1937-ին դարձել է ստալինյան բռնաճնշումների զոհ):

Պաստեռնակի մասնագետները գտնում են, որ Լիլի Խարազովան բանաստեղծի համար շատ բան է նշանակել, «նա եղել է ամենազարմանալի կնոջ ճակատագրերից նույնիսկ այն ժամանակվա հորձանուտում», որ գրողը Խարազովային համարել է գեղեցկուհի, ոգեհմա, սակայն բարձր չի գնահատել նրա բանաստեղծությունները՝ չհավանելով դրանցում առկա կամայականությունը, երազային պատկերները, Լոտրեամոնի ոճի սյուրռեալիզմը, որի պատճառը ոչ թե գրական մոդային հետեւելն էր, այլ այն կիսաքնած, կիսախելագար վիճակը, որի մեջ եղել է Լիլին՝ ընդմիշտ ցնորված Ռուսաստանով, հեղաշրջմամբ ու սեփական անձնական ողբերգությամբ: Նրա կենսագրության մեջ «բանաստեղծը տեսել է սեփական ճակատագրի հավանական եւ վիրավորական տարբերակը.... Պաստեռնակի հետ Լիլի Խարազովան ծանոթացել է 1926-ի գարնանը, բանաստեղծին նվիրված երեկույթին՝ իրեն զգալով նրա հետ հարազատ հոգի եւ ձգվելով դեպի այդ հարազատությունը: Պաստեռնակը փորձել է փրկել Խարազովային, բայց փաստորեն չի հասցրել. շրջապատը հենց խրախուսում էր խելագարությունը»...

## Սբ. Սահակ-Սբ. Մեսրոպ շքանշան
### Գրիգոր Սաթամյանին



Կալիֆոռնիայում հովվապետական այցելությամբ գտնվելու օրերին Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.ն Ամերիկայի արեւմտյան թեմի հայկական եկեղեցում նոյեմբերի 1-ին, ի ներկայության ընտանեկան եւ ընկերական շրջանակների ներկայացուցիչների, Սբ. Սահակ-Սբ. Մեսրոպ պատվո շքանշանով եւ հայրապետական կոնդակով պարգեւատրել է սիրված ու ճանաչված դերասան եւ բեմադրիչ Գրիգոր Սաթամյանին, թատերական արվեստին բերած իր երկարամյա ծառայությունների համար:

«Անզուգական րոպեներ եմ ապրում այս պահին: Երկար ճանապարհ եմ անցել եւ բախտավոր եմ, որ ինձ տրվել է հնարավորություն իրականացնելու իմ սիրած աշխատանքը: Հպարտ եմ ծառայելու հայ ժողովրդին ՀԲԸՄ-ի մշակութային եւ հատկապես թատերական ծրագրերի միջոցով», նշել է **Սաթամյանը** այդ առթիվ:

Սաթամյանը 1960-ին նախ միացել է ՀԲԸՄ-ի Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախմբին որպես դերասան, ապա նշանակվել է նրա գեղարվեստական ղեկավարը: Այնուհետեւ Նյու Յորքում դարձել է ՀԲԸՄ-ի Ազգային թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ այդ օրվանից թատերական ընկերություններ հիմնել Բոստոնում, Դետրոյթում, Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Լոս Անջելեսում եւ Բուենոս Այրեսում: 2013-ից Լոս Անջելեսի իր անվան թատերական խմբի գլխավոր գեղարվեստական ղեկավարն է: Բեմադրել է մոտ 90 պիես եւ խաղացել ավելի քան 70 պիեսներում եւ ֆիլմերում: Աշխատակցել է Բրուք Շիլդի, Ջո Թրավոլտայի եւ Ջոն Քյուսակի հետ: Դրամատիկական արվեստ է դասավանդել Բեյրութի Ամերիկյան համալսարանում եւ Կանոգա պարկի ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան վարժարանում:

Հ. Ծ.

# ԹՄՄ-ի 70-ամյակը կնշվի մեծ շուքով

**Օրինակելի որեւէ կազմակերպության հոբելյանը հիշարժան տարեթիվ է, բայց երբ այդ կազմակերպությունը կրում է նաեւ մեր մշակութային հարստության կուռքը դարձած մի բանաստեղծի անունը, ապա հոբելյանական նշումը պետք է կատարվի կրկնակի մեծ շուքով: Այսպես է խորհրդածում ճանաչված լրագրող Ֆլորենս Ավագյանը Նյու Յորքից, անդրադառնալով Թեքեյան Մշակութային Միության փառավոր 70-ամյակին, որ նշվելու է վաղը նոյեմբերի 18-ին Նյու Ջերսիի «Բիաջիո Տերասում», Հայ եկեղեցու արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի հովանու ներքո:**

**Պլատինե հոբելյանն իր մեջ ներառելու է կոկտեյլի հյուրասիրություն, լուռ աճուրդ արժեքավոր իրերի (զարդեղեն, գորգեր, էլեկտրոնային սարքեր), ճաշկերույթ, պար եւ կենդանի երգեցողություն:**

**Ճաշկերույթի գլխավոր բանախոսները են լինելու ԹՄՄի եւ ՌԱԿ-ի երկու ղեկավար գործիչներ Երվանդ Ազատյանն ու Հակոբ Գասարճյանը, ով երկու անգամ ընտրվել է լիբանանյան խորհրդարանի պատգամավոր: Հանդիսությունը վարելու է Թեքեյանի գործադիր կոմիտեի անդամ Հելեն Միքսի (Խուրշուդյան) որդի` Ջերրի Միքսը, մասնագիտությամբ իրավաբան, ով 41 երկար տարիներ մասնակցել է ՀԲԸՄ-ի «Քեմփ Նուբար» ճամբարային միջոցառումներին որպես խորհրդատու եւ հանձնախմբի նախագահ: Նա վերջերս է միացել ԹՄՄ-ին` ցանկանալով երաժշտությամբ, արվեստներով եւ գրականությամբ հարստացնել երիտասարդ սերունդը:**

**Միջոցառման պատվավոր հյուրերն են լինելու ԹՄՄ-ի երկարամյա նվիրյալներ, բարերար հովանավորներ Արտեմիս եւ Նազար Նազարյանները: Արտեմիսը ծնված Հալեպում (Սիրիա), երկուսուկես տարեկանում է ընտանիքի հետ տեղափոխվել Մ. Նահանգներ եւ հաստատվել Բոստոնում: ՌԱԿ-ի կառույցներում է նա հայերեն կարդալ ու գրել սովորել: Ընտանիքում հինգ հոգեւորական է եղել, որոնցից ամենանշանավորը Երուսաղեմի նախկին պատրիարք Տիրան արք. Ներսոյանն է:**

**Ամուսինը` Նազարը ծնվել է Բեյրութում: Երկար տարիներ ծառայել է ՀԲԸ-Միությանը: Հայտնի է բազմաթիվ բարեգործություններով:**

**ԹՄՄ-ն հիմնադրվել է 1947-ին նպատակ ունենալով պահպանել ու զարգացնել հայ մշակույթն ու գրականությունը սփյուռքում եւ ամրապնդել կրթական ու մշակութային կապերը հայրենիքի հետ, անկախ քաղաքական եւ գաղափարական հայացքների տարբերություններից: Անվանվել է Ցեղասպանությունից ճողոպրած արեւմտահայ մեծագույն բանաստեղծ Վահան Թեքեյանի անունով: Այսօր ԹՄՄ-ն ակտիվ գործունեություն է ծավալում աշխարհի 16 երկրներում, ներառյալ Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաներում, Եվրոպայում, Մերձավոր Արեւելքում եւ Հայաստանում: Գործունեության ոլորտները բազմազան են. թատերական ներկայացումներ, գրքերի հրատարակություն, ցուցահանդեսների կազմակերպում, դպրոցների հովանավորություն, գիտաժողովների անցկացում եւ հատուկ մրցանակների շնորհում:**

**ԹՄՄ-ի մեծն Նյու Յորքի հանձնախմբի անդամներ են Հակոբ Վարդիվառյանը (պատվավոր նախագահ), Հիլդա Հարթունյանը (նախագահ), Դիանա Մխիթարյանը (փոխնախագահ), Թալին Բաբայանը (քարտուղար), Պարգեւ Գալայճյանը (գանձապահ), Հարութ Չաքմաճյանը, Կարմեն Գյուլբենկյանը, Անի Հովհաննիսյանը, Վարդան Իլանճյանը, Հելեն Միքսը, Ջերրի Միքսը եւ Մարի Զոհրյանը (անդամներ):**

Հ. Ծ.

# Ճանապարհորդը...

## Հայաստանը գերմանացի երաժշտի հայացքով

**Մելանյա ԲԱԴԱԼՅԱՆ**

Հայաստանը աշխարհի 111-րդ երկիրն է, որտեղ այցելում է գերմանացի ճանապարհորդը: Թոմին հանդիպեցի Ազգային պատկերասրահի մուտքի մոտ, երբ նրանց խումբը նոր էր դուրս եկել Հայաստանի պատմության թանգարանից, եւ տպավորությունները թարմ էին: Զարմանալի հաղորդական մարդ թվաց նա ինձ, այն մարդկանցից, որոնց առաջին անգամ տեսնելիս տպավորություն ես ունենում, թե վաղուց ճանաչել ես, ինչպես ասում են` բաց է աշխարհի առաջ: Թոմը երաժիշտ է, լուսանկարիչ, վավերագրող, ճամփորդ: Բոլոր երկրներում, որտեղ եղել է, ճամփորդական նոթեր է գրել այդ մասին, ստեղծել է ֆիլմեր, որսացել յուրաքանչյուր մշակույթի համար ամենաբնորոշն ու հատկանշականը այնպես անվրեպ, որ ֆիլմի 20-30 րոպեներից բավական ամբողջական պատկերացում կարելի է կազմել մի անծանոթ երկրի ու ժողովրդի մասին: Նրա ֆիլմերում խոսքեր չկան. բնության թե մարդկային յուրաքանչյուր շարժ, յուրաքանչյուր երեւույթ բացահայտվում է երաժշտության լեզվով:

Դժվար չէր կռահել, որ նրա բազմազան հետաքրքրությունների ու զբաղմունքների մեջ երաժշտությունն է հոգուն ամենից մոտ: Թոմը պատմում է այն երաժշտության մասին, որով զբաղվում է, իր մոտեցումների, կատարման տեխնիկայի, իր խմբի` մյուսներից ունեցած տարբերությունների մասին, պատմում է այնպիսի էնտուզիազմով, որ անհնար է չվարակվել ու չմտնել մինչ այդ քեզ անծանոթ աշխարհ: Իրենից եմ տեղեկանում, որ գերմանական էլեկտրոնային երաժշտությունը համարվում է այս ասպարեզում աշխարհում առաջիններից մեկը` սկսած անցած դարի առաջին կեսերի ավանգարդ կոմպոզիտորներ Կառլհայնց Շտոքհաուզենից, Օսկար Սալայից (Karlheinz Stockhausen, Oskar Sala), ապա 70-ականներին այս ժանրում հեղափոխություն արած հայտնի էլեկտրոնային երաժշտական խմբեր` Kraftwerk, Neu!, Tangerine Dream-ից, կոմպոզիտոր Կլաուզ Շուլցից, մինչեւ էլեկտրոնային երաժշտության ապագան որոշող ժամանակից կատարողներ` Շիլլեր եւ Փոլ Կալքբրեններ:

Թոմը եւ իր խմբի երաժիշտները տարբերվում են մյուսներից` տարբեր են մոտեցումները, ձայնագրման տեխնիկան, եղանակները: GLOBOTOM- ը գործիքներ չի օգտագործում, նվագում է iPad- ով: Սինթեզատորները ստեղծում են ոչ միայն նոր էլեկտրոնային հնչյուններ, նաեւ կրկնօրինակում է ավանդական գործիքները, իսկ iPad-ի հավելվածները կրկնօրինակում են ինչպես սինթեզատորների, այնպես էլ ակուստիկ գործիքների հնչյունները: GLOBOTOM-ի երաժշտությունը էլեկտրոնային, ժողովրդական, ռոք, ջազային, փոփ եւ անգամ դասական երաժշտության խառնուրդ է, բայց ամենը ստեղծվում է էլեկտրոնային եղանակով: Նա գերմանացի առաջին երաժիշտներից է եղել, որ CD-ներ եւ ներբեռնվող ալբոմներ է թողարկել, որոնք ստեղծվել են միայն iPad-ով: Ստեղծագործելիս եւ նվագելիս անհամեմատ ազատ է, որտեղ էլ լինի` բեմում, բնության մեջ, տանը կամ ճանապարհորդելիս կարող է դա անել, նաեւ ֆինանսապես մատչելի է` գնել iPad եւ հավելվածներ, շատ ավելի մատչելի է, քան այդ նույն երաժշտական գործիքները:

Աշխարհի երկրների կեսից ավելիում եղած մարդու համար թվում է ճամփորդելն է ամենահաճելին, ինչն այդպես էլ կա իհարկե, սակայն դա միաժամանակ իր աշխատանքի մի մասն է` հետագայում տպավորությունները նոթագրելու, հոդվածների վերածելու, ֆիլմեր ստեղծելու, որոնք նաեւ գովազդային նշանակություն են ունենում այդ երկրների համար: Սակայն երաժշտությունն է հանգստաբեր այն «հաբը», որը ներքին բավարարում է տալիս հոգուն: Երաժշտությունը նրա համար ապրուստի միջոց չէ, ոչ էլ բիզնեսի աղբյուր. համակիր մարդկանց խմբերի ներկայություն, ովքեր լսում եւ գնահատում են իր երաժշտությունը, ահա այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրան: «Սա այն երաժշտությունը չէ, որ կարելի է լսել առավոտյան սուրճ խմելիս. իմ երաժշտությունը կատարյալ է նրանց համար, ովքեր գալիս են երեկոյան հանգստանալու. այն ստեղծում է լավ տրամադրություն, թարմացնում եւ դրական էմոցիաներ է հաղորդում»:

Իմ հարցերից առաջինը բնականաբար Հայաստանին, հայաստանյան տպավորություններին էր վերաբերում: Եվ արձագանքը այսպիսին էր. «Հաճելի է լինել Արամ Խաչատրյանի երկրում, որի Առաջին սիմֆոնիան հայկական ավանդական երաժշտության եւ արեւմտյան կոմպոզիցիաների հրաշալի համադրում է: Ափսոսում եմ, որ դուդուկի ձայնագրություններ չկարողացա անել, սակայն եկեղեցական երաժշտության ձայնագրություններ արել եմ, նաեւ` Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ն: Սրանք այն մասունքներն են, որ հետագայում, տուն վերադարձին, օգնելու են նրան ավելի լավ բացահայտել մեր երկիրն ու մշակույթը:



**«Ես ճամփորդում եմ աշխարհով մեկ, ձայնագրում եմ կենդանի երաժշտություն փողոցներում, թանգարաններում, իմ երաժշտությունը խառնում եմ օրիգինալ այդ ձայներին, այս եղանակով տարբեր ժողովուրդների ավանդական երաժշտությունը, էթնիկ մշակույթը համակցում եմ եվրոպական մոդեռնի հետ: Հնդկաստանում, օրինակ, տաճարում ձայնագրեցի իրենց վարպետների կենդանի կատարումը` Հարե Կրիշնա-ն, դրանք հետո փոխադրեցի սինթեզատորի վրա: Գնացի երաժշտական խանութ, խնդրեցի տալ սիթար, նրանք ցույց տվեցին ինչպես սիթար նվագել, մի քանի նոտաներ ձայնագրեցի, որոնք հետագայում իմ կողմից ստացան տարբեր մեկնաբանություն: Գործիքի վրա չեմ նվագում, իմ երաժշտությունը ամբողջությամբ արվում է iPad- ով:**

Այսօր ես Հայաստանում եմ. Գառնիի մուտքի մոտ երեք մարդ կանգնած երգում էին, ես ձայնագրեցի նրանց: Երբ վերադառնամ տուն, կուսումնասիրեմ, թե հարմոնիկ ինչպիսի համակարգ է դա, ի՞նչ նոտաներ են, հետո դրանք կնվագեմ սինթեզատորի վրա, ամբողջը չեմ վերցնի, մի կարճ մաս միայն, օգտագործելով այդ նյութը` կստեղծեմ նոր երգ: Դա կլինի այն նվերը, որն ինձ կհիշեցնի Հայաստանը, որով ես կփոխանցեմ ոգին հայ ժողովրդի, որ զգացի այս օրերին, եւ նրա հարուստ մշակույթը: Այսպես է ամենուր, ես վերցնում եմ օտար մշակույթը, խառնում գերմանականի հետ եւ վերադարձնում: Եթե նայես իմ ֆիլմերը, կտեսնես, թե ինչպես են տարբեր երկրների մշակույթներ դիպչում իմ հոգուն ու ձեռքերին եւ վերադարձվում: Սա երաժշտություն ստեղծելու իմ ոճն է, որն իհարկե մեկ մասն է իմ ստեղծագործության»:

Հրաշալի պատմող է Թոմը, խոսքի ջերմությունը ներքին տպավորությունների փոխանցման անմիջականությունից է, վարակիչ ու տրամադրող: Մի քանի օրից մեկնելու էր Վրաստան, գիտեր, որ տեսնելու է Թիֆլիսի հին, պատմական մասը եւ նորն իհարկե: Երեւանը դա չունի, մենք անխոհեմաբար վերացրինք այդ դեմքը, տիրապետողը սովետական ճարտարապետությունն է եւ մոդեռնի մի քանի կտոր: Փոխարենը անչափ տպավորված է Գառնիից ու Գեղարդից, բնության գույներից, աշնանային փափկությունից, դեղին խոտածածկերից ու բլուրներից, «Դու լսում ես երաժշտություն, որ գալիս է բնությունից, հայացքիդ առաջ փռված գեղեցկություններից, լանդշաֆտի ալիքվող ձեւերից ու փոփոխվող գույներից. Դա ներդաշնակվում, շարունակվում է Գեղարդում, որ միանգամայն տարբեր` ժայռակոփ հրաշալի եկեղեցի է` ոչ մի նկար պատերին, ոչ մի նկարչություն, մաքուր սեւ քարեր, դրսից թափանցող թույլ լուսավորությամբ...»:

Այն ինչ դաջվել էր հայկական բնաշխարհից, մեր մշակույթից ու մարդկանցից, Գերմանիա վերադառնալուց կարճ ժամանակ անց վերածվեց ֆիլմի. Երեւանը, Գառնին, Գեղարդը, Նորավանքը, Զվարթնոցը, Էջմիածինը, Սեւանը, Հաղպատը, նաեւ Հայաստանի վերջին կանգառը` Ալավերդին, ցավոք` կիսավերակի տխուր տպավորությամբ, էկրանին «խոսում» են երաժշտության միջոցով: Հայաստանյան պատկերների շարքում է նաեւ «Ազգ» թերթը: Տիրապետողը հոգեւորն է` եկեղեցական ճարտարապետությունը, ինչում է եկեղեցական երաժշտություն: «Հին մշակույթ է հայկականը, քրիստոնեությունը խորը արմատներ ունի երկրում, եկեղեցին մեծ դեր եւ ազդեցություն ունի մշակույթի վրա: Հայկական մշակույթը բացահայտելը բավական դժվար է` մյուս ժողովուրդների համեմատությամբ: Ցավում եմ, որ հայկական ժամանակակից էլեկտրոնային երաժշտության օրինակներ չգտա: Հիացած եմ Մատենադարանով... »:

Երկրների այս բազմազանության մեջ հետաքրքիր էր, թե ինչ նախապատվության ունի հեղինակը: Բնության անկրկնելի գեղեցկությամբ նա հիշատակում է Անտարկտիկան, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Հավային, Մալդիվները, ԱՄՆ-ի բնիկների մշակույթը` երգեցողության, Հնդկաստանի ձայնային ու երաժշտական ձեւերի հարուստ բազմազանությունը:

Իսկ ինձ` այն մի քանի ֆիլմերից, որ հասցրեցի դիտել, տպավորել է Պանաման. այստեղ նավարկելի ջրերն այնպիսի հանդարտությամբ են հոսում, ասես մտածում են, ազդեցիկ էր արաբական մթնոլորտը. անապատների` անվերջանալի թվացող դեղնի մեջ հոսող միստիկական մեղեդին, իսկ երանելին` կանաչի մեջ ընկղմված ավստրիական գյուղական գողտրիկ մի բնակավայր էր, որտեղ հնաոճ իրերի էկզոտիկ միջավայրում հանգստի իր օրերն է սիրում վայելել այս զարմանալի հետաքրքրասեր մարդը, էնտուզիաստն ու որոնողը:

*Globotom- ի ֆեյսբուքյան էջում արդեն կարելի է տեսնել Հայաստանը ներկայացնող տեսաֆիլմ եւ գրավիչ կլիպ` հայկական մեղեդիների վրա կառուցված, իրեն բնորոշ խառը ոճի ռիթմիկ երաժշտությամբ: Խմբի մասին կարելի է տեղեկանալ ֆեյսբուքյան էջում, ձայնագրությունները (EGOSOUND, URLAUB, BRICOLAGE, CHILLDESCHE) հասանելի են Youtube-ում, պատվիրել կարելի է նաեւ Amazon - ում:*

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: